Անա Կուպրավա-Գոգոլաձե, Գիորգի Ավթանդիլաշվիլի

# ՄԵՐ ՎՐԱՍՏԱՆԸ

## V դասարան

## ՈՒՍՈՒՑՉԻ ԳԻՐՔ

Երաշխավորվել է Վրաստանի կրթության, գիտության,
մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից 2018 թվականին:

«Կլիո» հրատարակչություն

Անա Կուպրավա-Գոգուլաձե, Գիորգի Ավթանդիլաշվիլի

**ՄԵՐ ՎՐԱՍՏԱՆԸ**
V ԴԱՍԱՐԱՆ
Ուսուցչի գիրք

**Դասագրքերի շարքի խմբագիր՝** Էլենե Մեձմարիաշվիլի

© «Կլիո» հրատարակչություն, 2018
© Էլենե Մեձմարիաշվիլի, Անա Կուպրավա-Գոգուլաձե, Գիորգի Ավթանդիլաշվիլի, 2018

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ISBN 978-99940-903-7-2

ՍՊԸ «Կլիո» հրատարակչություն
Աղմաշենեբելիի պողոտա #182-2
Թբիլիսի, 0112
Հեռ.՝ (+995 32) 234 04 30
E-mail: book@klio.ge
www.klio.ge

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Դասագրքերի շարքի հայեցակարգը..........................................4

2. Դասագրքի կառուցվածքը .......................................................5

3. Մեթոդական երաշխավորություններ........................................7

4. Դասի պլանավորում .................................................................12

5. V-VI դասարանների չափորոշիչ ..............................................17

6. Բովանդակության համապատասխանությունն
   Ազգային ուսումնական պլանին...............................................21

7. Գնահատում ..............................................................................23

8. Ժամային բաշխում ...................................................................24

9. Գնահատման աղյուսակներ՝ խորագրեր ..................................26

10. Դասի սցենարներ և լրացուցիչ տեղեկություններ ...................31

11. Ամփոփիչ առաջադրանք. «Ինչ գիտեմ և ինչ եմ կարող» .........73

12. Լրացուցիչ գործիքներ ............................................................82

13. Թեստային առաջադրանքների նմուշներ ................................84

14. Ռեսուրսներ .............................................................................89

# 1. ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՇԱՐՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

**Ներածություն**

«Մեր Վրաստանը» դասագիրքը նախատեսում է V-VI դասարաններում, Հասարակական գիտությունների չափորոշչով նախատեսված նույնանուն առարկայի շրջանակներում, Վրաստանի երկրամասերի աշխարհագրության, պատմության, ազգագրական առանձնահատկությունների և ժամանակակից վիճակի ինտեգրված ուսումնասիրություն:

Աշակերտի գրքի հիմնական նպատակն է ուսանում-ուսուցման գործընթացում սեփական երկրի անցյալի և ներկայի նկատմամբ աշակերտի հետաքրքրասիրության բորբոքումը, տեղեկատվական գործառույթ կատարելը, այսինքն՝ Վրաստանի երկրամասերի աշխարհագրության, պատմության, ազգագրական առանձնահատկությունների և ժամանակակից վիճակի մասին աշակերտին ապահովելը վերամշակված, կանոնավոր, նորագույն գիտական ձեռքբերումների ու հետազոտությունների վրա հիմնված գիտելիքով: Դասագիրքը միջառարկայական է, այն երկրամասի աշխարհագրությունը կկապվի պատմության, մշակույթի և ազգագրության հետ: Աշակերտի մեջ կառաջացնի հասարակական խնդիրների լուծման մեջ սեփական ներդրումը կատարելու մոտիվացիա, դրա օգնությամբ աշակերտը կձևավորվի՝ որպես հայրենիքը սիրող, բարձր հասարակական գիտակցություն ունեցող քաղաքացի:

**Նպատակները**

«Մեր Վրաստանը» դասագիրքը նպատակ է նախանշում աշակերտին.

- Ցույց տալ և ծանոթացնել սեփական երկիրը տարբեր կողմերից:
- Հետաքրքրել երկրի անցյալով և ներկայով:
- Գիտակցել տալ, որ Վրաստանի բազմազանությունը նրա հարստությունն է:
- Նրա մոտ ձևավորել հոգատար վերաբերմունք իր երկրամասի և, ընդհանրապես, երկրի նկատմամբ:
- Օգնել իրեն հասարակության և պետության անդամ ընկալելու, քաղաքացիական գիտակցության զարգացման մեջ:
- Զարգացնել քաղաքացիական հասարակության մեջ ապրելու համար անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ:
- Զարգացնել կյանքի և առողջության համար վտանգավոր իրավիճակի գնահատման և պատշաճ կերպով գործելու ունակություն:
- Ձևավորել հասարակական գիտություններ սովորելու համար հիմնական հմտություններ ու կարողություններ:
- Ձևավորել աղբյուրների, քարտեզների, նկարների, նկարազարդումների, աղյուսակների և դիագրամների վրա աշխատելու հմտություններ ու կարողություններ:
- Կատարել դաստիարակչական գործառույթ կամ իրացնել Վրաստանի երկրամասերի աշխարհագրության, պատմության, ազգագրական առանձնահատկությունների և ժամանակակից վիճակի ուսուցման կրթադաստիարակչական խնդիրներ:
- Նպաստել ուսուցման և ուսանման գործընթացում ուսուցչի արհեստավարժության լիարժեքացմանը:
- Զարգացնել այնպիսի հիմնական հմտություններ ու կարողություններ, ինչպիսիք են մտածողական գործառնությունների տիրապետումը, հաղորդակցումը, հետազոտությունը, կենսական հմտություններն ու կարողությունները, ստեղծագործական մտածողությունը, ինքնատիրապետումը:

Դասագիրքն ունի հետևյալ հիմնական գործառույթները.

**1. Ուսումնական գործընթացին առնչվող գործառույթ**

- գիտելիքների փոխանցում,
- հմտությունների ու կարողությունների ձևավորում և զարգացում,
- գիտելիքների ամրապնդում,
- գիտելիքների գնահատում:

**2. Առօրյա և մասնագիտական կյանքի հետ կապված գործառույթ**

- ձեռք բերված գիտելիքների՝ կյանքում օգտագործման և ինտեգրման,
- ռեֆերենցիայի (կարող է օգտագործվել՝ որպես տեղեկատու),
- սոցիալ-մշակութային դաստիարակության:

**3. Գործառույթ, որը նախատեսված է ուսուցչի համար**

- գիտական և ընդհանուր տեղեկատվության տրամադրում,
- որակավորման բարձրացում,
- ուսումնական գործընթացում և դասերի անցկացման ժամանակ օգնելու գործառույթ:

# 2. ԴԱՍԱԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

V դասարանի «Մեր Վրաստանը» դասագիրքը բաղկացած է ներածությունից, հինգ բաժիններից և 35 գլուխներից, որը հաշվարկված է 42 դասի համար: Ըստ ուսումնական ծրագրի, տվյալ առարկային տրամադրվում է շաբաթական երկու ժամ, տարվա ընթացքում յոթանասուն ժամ: Մեկ գլուխը համապատասխանում է մեկ կամ երկու դասի, այսինքն՝ դպրոցական դասագրքում մեկ գլխում տրված նյութը հատկացված է «Մեր Վրաստանի» մեկ կամ երկու դասի համար: Դասագրքում կան ամփոփիչ դասեր՝ «Ինչ գիտեմ և ինչ եմ կարող», ինչը ենթադրում է ուսուցման ինտերակտիվ մեթոդի կիրառում:

Ուսումնական ծրագրի 70 ժամերից մնացած ժամերը պահուստային ժամանակն է, որն ուսուցիչը կարող է օգտագործել ներածական, ընդհանրացման և ամփոփիչ ընդհանրացման դասի, դպրոցական դասախոսության, սեմինարի, գործնական պարապմունքի, էքսկուրսիաների, թատերական ներկայացումների անցկացման համար:

Յուրաքանչյուր գլուխ բաղկացած է երեք մասից. 1. հանգուցային հարց, 2. տեքստ, 3. աշխատանքային մաս, հարցեր և առաջադրանքներ:

**1. Հանգուցային հարց** – Այստեղ տրված է գլխավոր հարցը, որը նպաստում է աշակերտի ուշադրության կենտրոնացմանը և նրան՝ տվյալ գլխում տրված խնդրով և հարցով հետաքրքրելուն:

**2. Տեքստ** – Տեքստի նպատակն է պատասխանել «հանգուցային հարցին»: Տեքստի հիմնական բաղադրիչներն են՝ ա) հեղինակի տեքստը, բ) աղբյուրները (դրանց կից տրված հարցերը և վարժությունները), գ) դիդակտիկ նյութերը՝ նկարազարդումներ, քարտեզներ, աղյուսակներ, սխեմաներ, դիագրամներ (դրանց կից տրված հարցեր, վարժություններ) և այլն:

Աղբյուրները կարող են խմբավորվել հետևյալ կերպ. 1. Թեմատիկորեն խորացված մաս: Այստեղ առաջին պլան են մղված հեղինակի տեքստում համառոտ ներկայացված հարցերը: 2. Հակադրության մաս: Այստեղ այնպիսի հարցեր և իրադարձություններ են, որոնց ուշադրություն չի դարձված հեղինակի տեքստում: 3. Կենսագրական և սոցիալական-կենսագրական. Դրանց նպատակն է աշակերտի ուշադրությունն ուղղել անձին այնպես, որ առաջին պլան չմղվի պատմության անհատականացման սկզբունքը, և հասնել հետևյալ նպատակին. հետաքրքրություն պատմության, աշխարհագրության նկատմամբ, հետաքրքրություն անհատի, մարդու առօրյա կյանքի նկատմամբ:

Աղբյուրները, լուսանկարները, նկարները, քարտեզները, աղյուսակները և այլն գալիս են «կրկնապատկելու» հեղինակի տեքստում տրված տեղեկատվությունը և նպաստում են տեքստն ավելի լավ հասկանալուն: Վերոնշյալ վիզուալ նյութի միջոցով կարելի է կրկնել տեքստը տեսողական «թարգմանությամբ» և տեքստում առաջ քաշված հարցերը լրացնել ու ավելացնել բոլորովին այլ՝ տեսողական ձևով:

Դասագրքում տրված աղբյուրներն ու վիզուալ նյութը, որոնք տրվում են աղբյուրի տեսքով, պետք է քննարկենք՝ որպես ինքնուրույն աշխատանքային մաս, որի «լուծումը», «ընթերցումը» և կիրառումը ուսուցիչը պետք է սովորեցնի աշակերտին: Անմիջական առաջարկություններն ու խորհուրդները դասագրքի աղբյուրների և դիդակտիկ նյութերի վրա աշխատելու համար տրված են Ուսուցչի գրքում:

Դասի բաղադրիչ մասն է «Իմացի՛ր ավելին» խորագիրը, որի նպատակն է դասի թեմայի խորացումը: Այն առանձնացված է հիմնական տեքստից և չորս տեսակ է՝ հետաքրքիր տեղեկություններ, պատմության էջեր, անհատը պատմության մեջ, առասպելներ ու լեգենդներ, դրանք իրարից տարբերվում են տարբերանշանի գույնով: Դրան կցված են նաև հարցեր ու հանձնարարություններ, որոնք հիմնական տեքստի մաս են կազմում:

Դասին կցված է բառարան, որում բացատրվում է տեքստում բերված օտար բառը:

Յուրաքանչյուր բաժնի վերջում կա ամփոփիչ դաս՝ «Ինչ գիտեմ և ինչ եմ կարող», որի հանձնարարություններն ամփոփում և խորացնում են ոչ միայն տվյալ բաժնի դասերից ստացած տեսական գիտելիքները, այլև՝ աշակերտի գործնական հմտություններն ու կարողությունները: Ամփոփիչ դասի վերնագիրը նույնպես այդ է ընդգծում:

Տեքստի բովանդակության ընտրությունը և կառուցումը սահմանող չափանիշները առաջատար թեմաներն էին: Առաջատար թեմաների մեջ ենթադրվում են այն կարգերը, որոնք դուրս են ժամանակի և տարածության շրջանակներից և ներառում են աշխարհագրության, պատմության, ազգագրության և քաղաքացիական կրթության հիմնական միտումները և գործընթացները: Ճիշտ այդ առաջատար թեմաների միջոցով է դրվում հարցը և հիմնախնդիրը: Դրանք են այն որոշակի հենարանը, հիմքը, որի վրա կառուցվում է տեքստը:

Այսպիսի առաջատար թեմաներ են՝ **Վրաստանի երկրամասերը. Քարթլի, Արևելյան Վրաստանի լեռնաշխարհ, Սամեգրելո, Աջարիա, Իմերեթի, Կախեթի, Գուրիա, Սվանեթի, Ռաճա-Լեչխումի,**

**Աբխազիա, Սամցխե-Ջավախեթի, ինչպես նաև Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսին և պետությունը՝ մեր Վրաստանը:**

Հինգերորդ դասարանի դասագրքում ներառված է հինգ երկրամաս՝ Քարթլի, Իմերեթի, Սամեգրելո, Սվանեթի և Աջարիա: Դասագիրքը սկսվում է ներածականով, որում ուսումնական հարցերը աշակերտին հնարավորություն են տալիս կողմնորոշվել ժամանակի և տարածության մեջ:

Առաջատար թեմաները նպաստում են հետազոտական հարցերի և ոլորտների առանձնացմանը և միևնույն ժամանակ, ստեղծում շրջանակ, որը վերահսկում է և սահմանափակում նյութի առատությունը: Առաջատար թեմաները առարկաների ինտեգրման լավագույն հնարավորություն են տալիս:

Տեքստի լեզուն պարզ է, ոճը՝ պատմողական-նկարագրական, այն չի ծանրաբեռնված օտար բառերով:

**3. Աշխատանքային մաս.** Հարցեր և առաջադրանքներ: Դասագրքի այս մասի նպատակն է խորացնել տվյալ գլուխն ուսումնասիրելու արդյունքում ձեռք բերված գիտելիքները, հմտություններն ու կարողությունները: Դրանք միտված են ակտիվ ուսումնական գործընթացին և պահանջում են աշխատանքի բազմազանություն: Օրինակ, վարժությունները հետևյալ տիպի են՝ տվյալների հավաքագրում, կազմակերպում, վերլուծում և մեկնաբանում: Քարտեզների, աղյուսակների և դիագրամների կազմում, ընթերցում և տեղեկությունների օգտագործում, կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ, լուսանկարների և նկարազարդումների «ընթերցում» և դրանցից տեղեկությունների դուրսբերում, հարցազրույցի անցկացում, փոքր չափի աշխատություն գրել, քննարկման և երկխոսության վարում, աշխատանք տարբեր տեսակի այսպես կոչված «հենդաութների վրա», խաղ՝ դերերի բաշխմամբ (բեմականացում), նկարել, գծել և այլն:

Աշխատանքային մասը նախատեսված է խմբային և անհատական աշխատանքի համար:

Շատ կարևոր է դասագրքի տեքստի և աշխատանքային մասի համապատասխանությունը իրար: Աշխատանքային մասում հիմնականում չկա հարց, որի պատասխանը տեքստում չգտնվի: Աշխատանքային մասում կան նաև այնպիսի հարցեր, որոնց աշակերտը պետք է պատասխանի՝ հիմնվելով իր գիտելիքների վրա: Կան նաև նկարագրական բնույթի հարցեր, որոշ հարցեր հաշվարկված են աշակերտի երևակայության վրա:

Աշխատանքային մասը նպաստում է հմտությունների ու կարողությունների ձևավորմանը և զարգացմանը:

Մեծ նշանակություն ունի համամասնության պահպանումը: Ձեռնարկում կա համաչափություն. ա) տեղեկատվության, վարժությունների և գործնական առաջադրանքների միջև, բ) տեղեկատվության և հմտությունների ու կարողությունների միջև:

**3. Ուսումնական նյութի թեմատիկ բաշխումը, դասագրքի համապատասխանությունը Ազգային ուսումնական պլանին**:

Դասագրքի բովանդակությունը մշակվել է՝ հիմնվելով ուսումնական ծրագրի վրա և նախատեսելով նոր պետական-առարկայական չափորոշչի պահանջները: Գլուխների վերնագրերը պատասխանում են ծրագրում ներառած ուսումնական թեմաներին: Առարկաների ինտեգրման նպատակով՝ դասագիրքը ներառում է տարբեր առարկաները կապող թեմաներ:

Դասագրքի բոլոր հիմնական բաղադրիչները նպաստում են նյութի յուրացմանը և հետաքրքիր, տարբեր տեսակի դասերի անցկացմանը: Ուստի, ուսուցիչը պետք է փորձի դրանք ինտեգրել աշխատանքային գործընթացում `դասի ժամանակ: Ցանկալի է, որ ուսուցիչը մշակի և դասի ժամանակ օգտագործի դասագրքի բոլոր բաղադրիչները: Դրանում ուսուցչին կօգնի Ուսուցչի գիրքը: Դասագրքի բոլոր բաղադրիչները միտված են աշակերտին և նախատեսում են աշակերտի տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները:

Ուսուցչի գրքի նպատակն է**.**

1. օգնել ուսուցչին յուրաքանչյուր դասը պատրաստելու և անցկացնելու մեջ,
2. լրացուցիչ տեղեկություններ տրամադրել,
3. նպաստել ուսուցիչների որակավորման բարձրացմանը,
4. ուսումնական նյութերի ներկայացման փուլերը բացատրել-պարզաբանել:

Ինչպե՞ս պետք է պատրաստվի ուսուցիչը դասի համար:

Յուրաքանչյուր դասի համար ուսուցիչը պետք է մանրակրկտորեն պատրաստվի, մասնավորապես `

• պլանավորի դասը, կազմի դրա սցենարը,
• սահմանի, թե ինչ կրթական ռեսուրսներ են անհրաժեշտ այս դասի համար,
• ժամանակի մեջ ինչպես կբաշխի յուրաքանչյուր ուսումնական գործունեություն (այսուհետ՝ ակտիվություն):

# 3. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ուսանում/ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառում

Ժամանակակից համաշխարհային կրթական քաղաքականության հիմնական ուղղությունը աշակերտակենտրոն կրթությունն է: Հետևաբար, ցանկալի է, որ դասավանդման մեթոդը ևս աշակերտակենտրոն, այսինքն՝ ինտերակտիվ լինի: Ինտերակտիվ մեթոդիկան կենտրոնացած է աշակերտին, որը հանդիսանում է ուսուցման գործընթացի կենտրոնական դեմքը և ակտիվորեն մասնակցում է բոլոր ուսումնական գործողություններին՝ ձեռք բերում և օգտագործում իր համար նոր գիտելիքները:

Մեր կողմից առաջարկվող նմուշային դասերը հիմնականում կառուցված են ակտիվ և ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ: Ստորև ուսուցիչներին առաջարկում ենք մեթոդների մանրամասն նկարագրությունը, որպեսզի ավելի արդյունավետ կարողանան կիրառել դրանք:

### I. «ՄՏԱՎՈՐ ԳՐՈՀ»

«Մտավոր գրոհը» ինտերակտիվ մեթոդներից մեկն է: Նրա նպատակը հիմնախնդրի վճռումն է ամբողջ դասարանի մասնակցությամբ, գաղափարների ազատ արտահայտման միջոցով:

Մտավոր գրոհը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը: Աշակերտները սովորում են ունկնդրել ուրիշներին: Մտավոր գրոհը կարող է անցկացվել ինքնուրույն կամ հանդիսանալ այլ վարժության մաս: Ուսուցիչը նախօրոք ընտրում է հիմնախնդիրը և հարցի ձևով հստակ ձևավորում այն: Սրանից հետո սկսվում է մտավոր գրոհի առաջին փուլը, որը կոչվում է գաղափարների գեներացիայի (կուտակման) փուլ: Այս ժամանակ պետք է պահպանվեն հետևյալ կանոնները.

1. Մասնակիցների կողմից տեսակետների արտահայտման ժամանակ թույլ չի տրվում տեսակետները քննադատել, վիճել կամ գնահատել:
2. Մասնակիցները գաղափարներ են արտահայտում կամավոր և ոչ թե՝ ըստ ուսուցչի ցանկության:
3. Յուրաքանչյուր աշակերտ կարող է արտահայտել մեկ կամ մի քանի տեսակետ, որը կարող է լինել ինչպես օրիգինալ, այնպես էլ ուրիշի գաղափարի կրկնություն:
4. Բոլոր գաղափարները պետք է արձանագրվեն (գրվեն) գրատախտակի վրա (նույնիսկ ամենից ոչ ընդունելին):
5. Երբ գաղափարների արտահայտման հաճախականությունը նվազում է, ուսուցիչն աշակերտներին մեկ անգամ ևս մտածելու հնարավորություն է տալիս:
6. Ժամանակը կարող է նախօրոք սահմանվել, կամ ուսուցիչը կարող է դադարեցնել գաղափարների հավաքման գործընթացն՝ ըստ անհրաժեշտության:

Երկրորդ կամ գաղափարների գնահատման փուլում.

1. Վերլուծվում են արտահայտված տեսակետները:
2. Եթե մի քանի տեսակետներ նման են, այդ դեպքում դրանք ընդհանրացվում-միավորվում են:
3. Աշակերտներին խնդրում ենք ընդհանրացված գաղափարներից ընտրել 2-3 գաղափար, որոնք, ըստ նրանց, ավելի արժեքավոր են, դասավորել դրանք՝ ըստ կարևորության (ամենակարևոր գաղափարը գրվում է առաջինը և այլն):
4. Ի վերջո առանձնացվում են ամենանշանակալի գաղափարները, որոնք առաջադրված հիմնախնդիրների վճռման համար շատ կարևոր կլինեն:

Մտավոր գրոհի անցկացումը նպաստում է ոչ միայն ստեղծագործական մտածողության զարգացմանը, այլև ձևավորում է տարբերվող կարծիքի նկատմամբ ներողամիտ վերաբերմունք և հարգանք, զարգացնում է աշակերտների համագործակցության և հաղորդակցության հմտություններն ու կարողությունները:

### II. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Քննարկումը կրթական գործունեության կարևորագույն ձևերից մեկն է, որը խթանում է աշակերտների նախաձեռնությունը, զարգացնում նրանց քննադատական մտածողությունը:

Քննարկման ժամանակ տեղի է ունենում.

– մասնակիցների միջև տեղեկությունների փոխանակում,
– միևնույն հարցի նկատմամբ տարբեր տեսակի մոտեցումների որոնում,
– տարբեր տեսակետների (հաճախ միմյանց բացառող) համագոյակցություն,
– ընդհանուր կարծիքի կամ որոշման կայացման համար խմբային համաձայնության որոնում:

Քննարկման մեթոդով ուսուցումը, ի տարբերություն ավանդական մեթոդով ուսուցման, հնարավորություն է տալիս տեսնել, որ յուրաքանչյուր պնդում պարունակում է բազմաթիվ վիճելի կողմեր, և հնարավոր է եզրակացություն անել բազմաթիվ ուղիներով:

Որպեսզի դասարանում բաց քննարկում ընթանա, անհրաժեշտ է, որ դասարանում փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտ ստեղծվի: Իսկ «անվտանգ» մթնոլորտի ստեղծումը ենթադրում է ուսուցչի կողմից նախօրոք այնպիսի աշխատանքի անցկացում, որի նպատակը քննարկումային վարքի կանոնների և հարաբերությունների նորմերի ձևավորումն է: Այն առանձնապես արդյունավետ է տարրական դասարաններում, երբ ձևավորվում են վարքի չափորոշիչները:

Քննարկման կանոնները սովորելը և այս մեթոդի հաճախակի կիրառումը նպաստում է մի շարք հմտությունների և կարողությունների ձևավորմանը, ինչպիսիք են.

– ուրիշին ակտիվ ունկնդրումը,
– սեփական կարծիքի ձևավորումը և դրա փաստարկումը,
– դատողությունը, քննադատական մտածողությունը և ուրիշի մտքի գնահատումը:

Եվ վերջնականապես ձևավորվում է ուրիշի, թեկուզ՝ տարբերվող կարծիքի նկատմամբ հարգանք և ներողամիտ վերաբերմունք, ինչը պարտադիր է ժողովրդավարական հասարակության քաղաքացու համար:

Որպեսզի քննարկում անցկացնենք, անհրաժեշտ է.

– հարց առաջադրել, հիմնախնդիր ներկայացնել կամ կոնկրետ դեպք նկարագրել,
– պահպանել քննարկման կանոնները,
– խրախուսել, աջակցել աշակերտին:

Մեր դասագրքով անցկացված համարյա բոլոր դասերը նախատեսում են դասարանական քննարկում:

**«Կլոր սեղան»** – Աշակերտների փոքր խումբը (4-5 հոգի) մտքեր է փոխանակում միմյանց և դասարանի հետ:

**«Ֆորում»** – Ամբողջ դասարանը փոխադարձաբար մտքեր և գաղափարներ է փոխանակում՝ հավասար հիմունքներով:

**«Բանավեճեր»** – Կառուցված է մասնակիցների՝ նախօրոք պլանավորված ելույթների վրա: Ներկայացուցիչները պետք է ընտրվեն խմբից: Վեճին հերթով մասնակցում է խմբի մեկական ներկայացուցիչ:

Քննարկումից հետո ուսուցիչը մեկ անգամ ևս կամփոփի և աշակերտների հետ կկրկնի ստացված եզրակացությունները: Լավագույն դեպքում եզրակացություններն իրենք՝ մասնակիցները պետք է արձանագրեն:

**Դասարանական քննարկման կազմակերպումը ծառայում է միաժամանակ մի քանի նպատակի.**

➢ աշակերտների ակտիվացմանը,
➢ աշակերտների քննադատական մտածողության ձևավորմանը,
➢ ուսումնական նյութի յուրացմանը նպաստելուն,
➢ աշակերտների հաղորդակցության հմտությունների զարգացմանը:

**Քննարկումները կարող են հիմնվել ինչպես անցած, այնպես էլ նոր նյութի վրա:**

➢ Ցանկալի է, որ կիրառենք շնորհանդեսից հետո, որ առաջարկել է մեզ աշակերտը կամ ուսուցիչը:
➢ Քննարկումը ճիշտ վարելու համար կարևոր է դասարանում նստարանների դասավորությունը: Ցանկալի է նստարանների շրջանաձև կամ քառակուսի դասավորությունը:

**Քննարկում վարելիս պետք է հաշվի առնենք հետևյալը.**

➢ Քննարկումները պետք է կենտրոնացվեն կոնկրետ նպատակի և ոլորտի վրա `ուսուցիչը հստակորեն պետք է բացատրի և գրատախտակի վրա գրի քննարկման նպատակները:
➢ Պետք է մշակենք քննարկման կանոնները (միմյանց լսելը, ժամանակի բաշխումը, կանոնակարգը):
➢ Պարբերաբար պետք է արձագանքենք աշակերտների գաղափարներին և արտահայտություններին, դա կօգնի երեխային հասկանալ և ընկալել իր ասածը:
➢ Հաջող քննարկումների համար կարևոր է, որ աշակերտները հարգեն միմյանց կարծիքը:

- Քննարկման ավարտին անհրաժեշտ է ամփոփում կազմակերպել, վերլուծել, թվարկել հարցերը, որ առաջ քաշվեցին քննարկման ժամանակ, գնահատել գործընթացը՝ ինչ արվեց և ինչպես արվեց: Կարևոր է նշել, թե ինչը պետք է շտկվի հետագայի համար:

Քննարկումը նպաստում է աշակերտների մեջ դատողության, քննադատական մտածողության և խնդրի լուծման կարողության զարգացմանը: Մարզում է աշակերտներին մտքերը բանավոր, հստակ արտահայտման և եզրակացություններ անելու, վիճելի հարցերը լուծելու և այլընտրանքային լուծումներ գտնելու մեջ: Քննարկման ժամանակ աշակերտներից պահանջվում է փաստարկված դատողություն, որոշումների ընդունում, քննարկման կանոնների պահպանում: Քննարկման հիմնական նպատակն է նպաստել խմբի՝ քննարկվելիք հարցի վերաբերյալ գիտելիքի դրսևորմանը և խնդրի լուծման համար այդ գիտելիքի կիրառմանը: Քննարկումն առաջացնում է անսահմանափակ քանակությամբ պատասխաններ և չի պահանջում բացառիկ եզրակացություն: Երբ տրված հարցին հաջորդում է մյուս հարցը, և աշակերտը մտքում պտտում է իր համար հետաքրքիր թեման և փորձում է պատասխաններ գտնել, հետաքրքրասիրությունը ձևավորվում է՝ որպես դրական մտավոր ուժ: Դիտարկման արդյունքում հայտնաբերվում են այն թերությունները, որոնք ուղեկցում են այս մեթոդի կիրառմանը: Մասնավորապես, դժվարանում են պահպանել կանոնները, ջանասիրությամբ լսել բոլոր տեսակետները, ինչն աղմուկ է առաջացնում, և բոլոր աշակերտներին չի տրվում հնարավորություն ակտիվորեն ներգրավվել դասի գործընթացի մեջ:

### III. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ-ԴԵՐԵՐՈՎ ԽԱՂ

Խաղը մարդու և հատկապես՝ երեխայի վարքագծի առաջատար ձևերից մեկն է: Ուսուցանելու նպատակով խաղը հնարավոր իրականության խմբային հետազոտման միջոց է, և այս ճանապարհով՝ սոցիալական փորձի կուտակման միջոց:

Գերմանացի հոգեբան Բյուլերը համարում էր, որ խաղը գործունեություն է, որի իրականացման հիմքում դրված է ֆունկցիոնալ հաճույք ստանալը: Բոլոր վերոասացյալներից կարելի է սահմանել, որ խաղը հնարավոր իրականության խմբային կամ երկխոսությամբ հետազոտման մեթոդ է: Խաղային գործունեության հիմքում իրականում դրված են տարբեր տեսակի հաճույքները, մասնավորապես.

1. Գործընկերների հետ ուղղակի շփման հաճույքը:
2. Խաղային իրավիճակների արդյունքները արագությամբ հստակեցնելու հաճույքը:
3. Մրցույթից ստացած հաճույքը:
4. Սեփական անձի և հնարավորությունների բացահայտումից ստացած հաճույքը:
5. Դերի մեջ մտնելու հաճույքը և այլն:

Իրավիճակային խաղ – Սա դասի ժամանակ խաղարկված փոքր բեմականացում է, ներկայացում, որի նպատակն է երեխայի համար անծանոթ և անսովոր իրադարձությունների կենդանացումը՝ դրանց խաղարկման միջոցով:

Ուսուցիչն ընտրում է դասի ժամանակ քննարկվելիք (ուսումնասիրվելիք) թեման և կազմում սյուժեն: Այնուհետև երեխաների հետ բաշխում է դերերը և դատողություն անում այն մասին, թե ինչպես իրականացվի մանկական ներկայացումը: Ներկայացման ընթացքում ուսուցիչը կարող է ընտրել երեխաների և նրանց հարցեր տալ (օրինակ, ներկայացման բարելավման նպատակով): Խաղն ավարտելուց հետո ամբողջ դասարանը վերլուծում է այն:

Այս մեթոդը երեխային հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ իրեն ծանոթ իրադարձությունները, համարձակ արտահայտել իր զգացմունքներն ու մտքերը, իրեն զգալ խմբի անդամ, համագործակցել ուրիշ երեխաների հետ (այսինքն՝ մասնակցել) և այլն: Միևնույն ժամանակ, խաղով հասնում են երեխայի սոցիալականացման (հասարակության մեջ առկա փորձի յուրացում և ստացում):

1. Սիմուլյացիայի և դերերով խաղերի օգտագործումը խրախուսում է ուսումնառության գործընթացը և այն ավելի հետաքրքիր դարձնում աշակերտի համար:
2. Սիմուլյացիան նշանակում է արհեստական իրավիճակի ստեղծում, որը նման է իրականությանը:
3. Սիմուլյացիան նրա մոդելավորումն է, ինչը գոյություն ունի կամ կարող է գոյություն ունենալ: Մի խոսքով, սիմուլյացիան իրականության խաղարկումն է:
4. Սիմուլյացիան կարող է խաղարկվել մարդկանց մասնակցությամբ և համակարգչի միջոցով:
5. Մարդկանց մասնակցությամբ սիմուլյացիան կոչվում է դերերով խաղ:
6. Ցանկալի է այս ռազմավարությունն օգտագործել բարդ թեման մշակելիս:

**7.** Ի տարբերություն խաղի, սիմուլյացիային հաղթող պետք չէ:
8. Դերախաղը բաղկացած է երեք հիմնական մասերից ՝ իրավիճակ, դերային խաղ, դասարանական քննարկում:

Դերերով խաղերը նպաստում են.

- Հարցի մեջ խորը թափանցմանը, նրա յուրացմանը հուզական մակարդակով (դերային խաղով աշակերտը դառնում է այլ անհատ, ավելի լավ է թափանցում այն մարդու բնավորության և մոտիվացիայի մեջ, ում դերը մարմնավորում է):
- Հարցի երկար ժամանակով մտապահմանը, տեղեկությունների գնահատմանը և կազմակերպմանը, ուսումնական գործընթացի մեջ առավելագույն ներգրավմանը և մոտիվացիայի բարձրացմանը, աշակերտի հաղորդակցման մակարդակի բարձրացմանը, վերլուծաբանական և քննադատական մտածողության զարգացմանը, ապրումակցման զարգացմանը:

**10.** Սիմուլյացիայի կազմակերպման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը.

- Խրախուսի աշակերտներին, իմպրովիզացիայի համար աշակերտներին նախապատրաստել տա սցենարների կամ գործողությունների պարզ ուրվագիծ, բաշխի դերերը, ձևակերպի բեմականացման էությունը և ըստ հնարավորինս ձևակերպի նպատակը (ցանկալի է գրավոր), աշակերտներին պատրաստել տա պարզ դեկորացիաներ, ինքնագործ ռեսուրսներ, պարզ հագուստ:

**11.** Բացի դրական արդյունքներից, պետք է նկատի ունենալ մի շարք դժվարություններ, որ ծագում են դերային խաղերի կազմակերպման դեպքում.

- Դերերով խաղերը պահանջում են աշակերտի կողմից լավ զարգացած երևակայության կարողություն:
- Դերերով խաղերի ժամանակ ուսուցչի և աշակերտի միջև հնարավոր է ձևավորվի չափազանց ոչ ֆորմալ վերաբերմունք, որը հետագայում կխանգարի դասի կառավարման գործընթացին:

**12.** Դերերով խաղերն ավարտելու հաջորդ փուլում ցանկալի է քննարկել կատարված աշխատանքը և գնահատել այն: Դրա համար նպատակահարմար է կիրառել դասարանական քննարկումը:

**Քննարկումն** ինտերակտիվ ուսուցման ամենատարածված մեթոդներից մեկն է: Դասարանական քննարկման կիրառումն ավելացնում է աշակերտների ներգրավվածությունն ուսումնական գործընթացում, նպաստում է նրանց սոցիալական և միջանձնային հմտությունների զարգացմանը:

Համագործակցային ուսուցման մեթոդներից կիրառվում է այսպես կոչված Ջիգսոու մեթոդը: Այս մեթոդը հատկապես արդյունավետ է մեծ ծավալով թեմաներ ուսումնասիրելիս: Բոլոր տարիքային խմբերում այս մեթոդը հաջողությամբ է աշխատում: Աշակերտները կարող են առանձին թեմաներ մշակել հիմնական խմբերի ներսում, փորձագետների խմբում տեղի է ունենում թեմայի մասերի խորացում, թեմայի մասերը կրկին փոխանցվում են հիմնական խմբերին և ստուգվում են յուրաքանչյուր աշակերտի անհատական գիտելիքները: Այս մեթոդի կիրառմամբ հստակ է դառնում, որ աշակերտների մոտ զարգանում է ինչպես անհատական, այնպես էլ  խմբային պատասխանատվության զգացումը, ինչպես նաև հաղորդակցման հմտությունները: Միևնույն ժամանակ, դիտարկման արդյունքում հստակ է դառնում, որ համեմատաբար թույլ աշակերտները դժվարանում են թեմայի մասն ինքնուրույն մշակել, և սա հնարավոր է որոշ չափով խոչընդոտող հանգամանք դարձավ նրանց համար, որ գնահատեին անհատական ձեռքբերումը, և մեթոդի կիրառմանը երկար ժամանակ է անհրաժեշտ:

**Շնորհանդեսը,** այսինքն՝ կատարած աշխատանքը ներկայացնելը, ուսումնական գործընթացի անբաժանելի մասն է դարձել: Ելնելով առարկայական չափորոշիչների պահանջից՝ աշակերտները դասարանի առջև միշտ պետք է հանդես գան կարճաժամկետ կամ երկարաժամկետ հետազոտության արդյունքներով, ինչը միայն մեկ առարկայի շրջանակներում չի կատարվում: Շնորհանդեսի ունակությունը նախապայման է ոչ միայն դպրոցում բարձր գնահատում ստանալու, այլ նաև՝ սեփական հնարավորությունները ցուցադրելու համար: Այս մեթոդը հետաքրքիր, զվարճալի և պահանջված է հատկապես տարրական և հիմնական մակարդակի աշակերտների համար, բայց պարզ է դառնում, որ աշակերտները դժվարանում են ոչ բառային հաղորդակցման տարրերը նախատեսել, ժամանակի սահմանաչափը պահպանել, թեմայի համար հետաքրքիր նյութեր օգտագործել:

Մինի դասախոսությունը հաճախակի օգտագործված մեթոդ է: Սա հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում աշակերտներին փոխանցել անհրաժեշտ տեղեկատվությունը: Սակայն այս մեթոդը աշակերտներին առավելապես գիտելիքներ է տալիս (ինչը կարևոր է) և ավելի քիչ է տալիս

հմտությունները զարգացնելու հնարավորություն: Այս ժամանակ դժվար է պահպանել լսարանի ուշադրությունը, և դասախոսության գործընթացում դժվար է գնահատելը:

Վերոնշյալ մեթոդները նպաստում են ընդհանուր ունակությունների զարգացմանը, մասնավորապես՝ տեղեկատվության ձեռքբերմանը և կազմակերպմանը, ստեղծագործական մտածողությանը, հաղորդակցությանը, հետազոտությանը, սովորելուն, համագործակցությանը: Սակայն Ազգային ուսումնական նպատակներից ելնելով՝ անհրաժեշտ է նաև հատուկ հմտություններ զարգացնել, ինչին նպաստում են քննարկումներն ու բանավեճերը:

**Բանավեճը** լավագույն միջոցներից է, որը կարող է խթանել, ավելի ստեղծագործական դարձնել ուսումնառության գործընթացը: Այն նպաստում է քննադատական մտածողության և աշխատանքի ներկայացման չափազանց կարևոր հմտությունների բարելավմանը և զարգացմանը: Կարող ենք թվարկել նաև ճանաչողական հմտությունները, որ աշակերտները զարգացնում են բանավեճի միջոցով. վերացական մտածողություն, քաղաքացիության զգացում, էթիկետի գիտակցում և պահպանում, ինքնակազմակերպում, հավատը սեփական անձի նկատմամբ, հրապարակային խոսքի մշակույթ, հետազոտություն, թիմային աշխատանք: Եվ սա ամբողջական ցուցակը չէ: Կարծում ենք, բանավեճը կարող է օգտագործվել պատմության ուսուցչի կողմից, քանի որ պատմության դասերի համար դրանք հատուկ նշանակություն ունեն: Վերոնշյալ հմտությունների ու կարողությունների զարգացման հետ մեկտեղ, բանավեճը պատմությունը հասկանալու լավագույն ուղիներից մեկն է: Այն պատմության ուսուցչին օգնում է հասնել առարկայի չափորոշչով նախատեսված նպատակներին, բարձրացնում է աշակերտի մոտիվացիան, ավելի հետաքրքիր է դարձնում ուսումնական գործընթացը: Բանավեճը համահունչ է պատմության ուսուցման ժամանակակից մոտեցմանը, որը կենտրոնացած է ոչ թե փաստերի և տարեթվերի մտապահմանը, այլ պատմական գործընթացների վերլուծմանն ու գնահատմանը, պատմական անձանց և իրադարձությունները տարբեր տեսանկյուններից տեսնելուն:

**Բանավեճերի** կազմակերպման նախնական փուլում ցանկալի է նրանց մասնակցելու իրավունքի ղեկը լինի առավել ակտիվ աշակերտների ձեռքին: Դրա համար կօգտագործենք «երեք քարտի» ռազմավարությունը: Ըստ այդ ռազմավարության՝ ուսուցիչը բանավեճի մեկնարկից առաջ յուրաքանչյուր աշակերտի երեքական քարտ է տալիս, որոնցում գրված են «հարց կամ մեկնաբանություն» բառերը: Եթե աշակերտն ունի բանավեճին ներգրավվելու ցանկություն, կբարձրացնի քարտը, իսկ այն բանից հետո, երբ կբարձրացնի քարտը կամ կանի մեկնաբանություն, քարտը կողքի կդնի և կշրջի: Նա երեք անգամ կունենա քննարկմանը ներգրավվելու հնարավորություն: Այսպիսով, այս ռազմավարությունը աշակերտին կհարկադրի լավ մտածել, ապա նոր ներգրավվել քննարկման մեջ: Սա հատկապես վերաբերում է ակտիվ աշակերտներին: Նրանք կփորձեն հասկանալ՝ արժե՞ քարտը «կորցնել» այն մեկնաբանության գնով, որը մտադիր են կատարել, թե՞ այն պահեն ավելի կարևոր և արժեքավոր մեկնաբանության համար: Բոլոր երեք քարտերը օգտագործելուց հետո աշակերտը քննարկումներից դուրս է մնում, մինչև բոլոր մասնակիցներն օգտագործեն իրենց քարտերը:

Մեր կողմից քննարկված մեթոդները միանշանակ օգտակար են և զարգացնում են ինչպես ընդհանուր, այնպես էլ կոնկրետ հմտություններ ու կարողություններ: Սակայն դիտարկման ընթացքում պարզվել է, որ բանավոր խոսքի հետ կապված այս մեթոդները բոլոր աշակերտներին չեն տալիս դասապրոցեսին ակտիվ ներգրավվելու միանման հնարավորություններ: Կարող է պատահել, որ բոլոր աշակերտները չկարողանան արտահայտել իրենց կարծիքները, ոմանք ձեռնպահ կարող են մնալ, մյուսներին ժամանակը չի բավարարի՝ իրենց կարծիքն այնպես արտահայտելու, ինչպես ցանկանում են: Բացի այդ, բանավոր խոսքի հետ կապված մեթոդները չեն կարող համոզել, որ աշակերտները լրիվությամբ են հասկացել կարդացած տեքստը, խորը թափանցել են հարցի էության մեջ: Հենց այս թերությունները շտկելու հնարավորություն են տալիս գրավոր առաջադրանքները: Գրավոր հանձնարարության ժամանակ աշակերտն աշխատում է անհատապես և հանգիստ վիճակում: Ձգտում է հստակորեն արտահայտել, փաստարկներով ամրապնդել իր կարծիքը: Այս պահին նա ստիպված չէ ուրիշներին համոզել իր արտահայտած կարծիքի ճշմարտացիության մեջ, ոչ էլ՝ տարբերվող կարծիքի հետ հաշվի նստել և փոխզիջման գնալ: Փոխարենը աշակերտից պահանջվում է հիմնավոր գիտակցել պատմական համատեքստը:

# 4. ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

**Ինչպե՞ս պլանավորենք դասը:**

Մինչև սկսեք աշխատել դասի պլանավորման վրա, չափորոշչում գտեք այն արդյունքները և ստուգիչները, որոնք ստուգում են տվյալ թեմայի յուրացումը, կոնկրետ դասը (տե՛ս՝ նպատակների քարտեզը), և ինքներդ ձեզ երկու հարց տվեք.

1. Ինչպե՞ս հասնենք ցանկալի արդյունքին:
2. Ինչպե՞ս հասկանամ՝ հասե՞լ եմ արդյոք դրան:

Դասն այնպես պետք է պլանավորվի, որ ուսումնական նյութը հիմնականում դասարանում (ուսումնական գործընթացում) յուրացվի, իսկ տնային առաջադրանքները փոքր քանակությամբ պետք է տրվեն աշակերտներին, որպեսզի նրանք կարողանան դպրոցում ստացած գիտելիքն ամրապնդել և կրկնել:

Դասի անցկացման համար մենք առաջարկում ենք կիրառել դասի եռափուլ (երեք հատվածով), այսպես կոչված՝ ABC մոդել:

Այն բաղկացած է երեք փուլից (A, B և C), և անվանումն էլ հենց այստեղից է բխում:

**A փուլում** տեղի է ունենում աշակերտների խթանում և հետաքրքրությունների արթնացում ուսումնասիրվելիք հարցի նկատմամբ: Աշակերտները մտաբերում են այն, ինչն արդեն գիտեն (կամ իմացել են) այս հարցի վերաբերյալ:

Նույն փուլում պետք է աշակերտները մոտիվացվեն և ակտիվացվեն: Աշակերտների ակտիվացումը նշանակում է, որ նրանք իրենք պետք է մտածեն, ընդգրկվեն բանավեճի մեջ, դատողություն անեն և հարցեր առաջադրեն: Հետազոտությունը և ճանաչողությունը սկսվում է այնտեղ, որտեղ հարցեր են առաջանում: Այդ պատճառով կարևոր է աշակերտների հետաքրքասիրության խթանումը:

Այս աստիճանում կարևոր է նաև, որ աշակերտները հասկանան, որ պետք է ուսումնասիրեն այս հարցերը և նրանց մոտ ձևավորվի որոշակի սպասում դասի գործընթացի նկատմամբ:

**B փուլը** գիտելիքի կառուցքավորման աստիճանն է: Այս աստիճանում աշակերտը ծանոթանում է նոր տեղեկությունների և գաղափարների: Սա կարող է իրականացվել տեքստի ընթերցմամբ կամ երևույթների անմիջական դիտարկմամբ, փորձի անցկացմամբ կամ պատմածը լսելով: Ինչպես ասում է «կառուցքավորում» բառը, այս փուլում աշակերտը պետք է հայտնագործի գիտելիքը, հայթայթի, կառուցի և ոչ թե պատրաստ գիտելիքը մեխանիկորեն մտապահի: Սա ուսանման այն փուլն է, երբ աշակերտն առավելագույնս ակտիվ է և ինքնուրույն: Այս ժամանակ տեղի է ունենում առաջին փուլում բորբոքված հետաքրքրության պահպանում և առաջ քաշված հարցերի պատասխանների որոնում, նոր տեղեկության գիտակցում, քննադատաբար վերլուծում, արվում են եզրակացություններ:

**C փուլը** գիտակցման և գիտելիքի ամբողջականացման աստիճանն է: Հենց այս փուլում է տեղի ունենում նոր գիտելիքի՝ հնի հետ կապումը, համադրումը, գիտելիքի ամբողջականացումը, նոր հասկացությունների էության մեջ թափանցումը: Նոր գիտելիքը նոր բան է տալիս մարդուն, այս նորությունը կարող է կապված լինել հմտությունների և կարողությունների կամ բանականության զարգացման, արժեքային համակարգի, տրամադրվածությունների և վերաբերմունքների ձևավորման կամ գործնական գործունեության հետ: Այսպիսի ճանաչողության հետևանքով մարդ երկար ժամանակով է մտապահում այն, ինչը էական է, և կարող է ստացած գիտելիքը կիրառել կյանքում:

Նույն փուլի խնդիրն է նաև աշակերտների միջև մտքերի փոխանակումը և դրա միջոցով բառապաշարի հարստացումը, մտահորիզոնի ընդլայնումը և մտածողության խորացումը (Պիաժեի պնդմամբ, երեխան մտածել է սկսում այն ժամանակ, երբ ընդգրկվում է հասակակիցների հետ բանավեճի մեջ):

Դասի պլանավորման գործընթացում ուսուցիչը ABC մոդելի երեք փուլերն էլ լավ պետք է գիտակցի և պլանավորի: Դրանում նրան կօգնեն մեր կողմից առաջարկված մոդելների և դասի սցենարների նմուշները:

**Նպատակը**

Դասի պլանավորման ժամանակ, նախ՝ պետք է սահմանվի դասի նպատակը, ինչն իր հերթին սահմանում է արդյունքը, կամ ուսուցիչը նախօրոք պետք է սահմանի, թե տվյալ դասին իր աշակերտները ինչի պետք է հասնեն (դասի կոնկրետ և հեռանկարային պլաններ):

Դասի պլանում ակնհայտորեն պետք է երևան.

- դասի կոնկրետ նպատակները,
- դասի հեռանկարային նպատակները,
- ինչ ենք սպասում մասնակիցներից, ինչ գիտելիք և հմտություններ ու կարողություններ կստանան այս դասին:

**Խնդիրները**

Նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է որոշակի խնդիրներ նախանշել.

1. դասին կատարվելիք ակտիվությունների սահմանում,
2. աշխատանքի կատարման փուլերը,
3. ստացած գիտելիքի և հմտությունների ու կարողությունների ցուցադրման ձևը,
4. գնահատման չափանիշները:

**Պարտադիր պայմանները և ռեսուրսները**

Նպատակներին հասնելու համար նախօրոք պետք է սահմանվի, թե արդյոք պատրա՞ստ են աշակերտները պլանավորված ակտիվությունները կատարելուն: Ուսուցիչը նախօրոք պետք է հաշվարկի, թե որքան ժամանակ և ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ նրան պլանի՝ հաջողությամբ իրականացման համար (դասագիրք, տարբեր գիտական և ճանաչողական բնույթի գրականություն, աշխատանքային սխեմաներ, դիդակտիկ նյութեր, նկարներ, դիագրամներ, գծապատկերներ, պատկերազարդումներ և այլն), այսինքն՝պետք է սահմանվեն.

- դասի համար անհրաժեշտ նյութը,
- տեսական և գործնական աշխատանքի իրականացման փուլերը:

**Դասի նկարագիրը**

Ուսուցիչը մանրամասնորեն պետք է նկարագրի դասի ընթացքը, նրա առանձին փուլերը՝ ակտիվությունները, որ կատարվում են տվյալ դասին (թե ինչպես է կարողանում ուսուցիչն իրականացնել դասի նպատակները և հիմնականում ինչն է նրա համար կարևոր այս դասի ընթացքում):

Դասի ընթացքը

Պլանի այս մասը ենթադրում է դասի մանրամասն նկարագրում:

Ցանկալի է, որ ուսուցիչն այնպես նկարագրի դասի ընթացքը, որ գործընկերը, եթե նա կունենա դրա ցանկություն, կարողանա օգտվել առաջադրված դասի մոդելից:

Ցանկալի է պլանի մեջ մանրամասնորեն նկարագրել 3 կարևորագույն փուլերը.

1. Ներածություն՝ մարտահրավեր կամ խթանման փուլ:
2. Գլխավոր ակտիվություն՝ հիմնական մասը, որը ծառայում է բովանդակության իրականացմանը, հարցի էության մեջ թափանցմանը:
3. Եզրափակիչ մաս՝ գիտակցման փուլ, որի ժամանակ պետք է տեղի ունենա դասի ընթացքում քննարկված թեմաների վերլուծություն և համադրություն, համեմատություն և ստացած գիտելիքի ամրապնդում:

Ցանկալի է, որ ուսուցիչը նախօրոք պլանավորի, թե որքան ժամանակ անհրաժեշտ կլինի դասի յուրաքանչյուր փուլին (դասի բաշխում ժամանակի մեջ):

**Քննարկենք յուրաքանչյուր փուլն առանձին-առանձին.**

**Ներածություն**

Դասի ներածական մասը, անհրաժեշտության դեպքում, կարող է սկսվել նախորդ դասին քննարկված թեմայի հիշեցումով (ընդհանուր հարցերով): Այս փուլում աշակերտը պետք է վերականգնի հարցի հետ կապված տեղեկությունները, անցած նյութը, ինչն ինքնըստինքյան կնպաստի նոր թեմայի նախապատրաստմանը: Գլխավորն է նախօրոք սահմանած լինեք.

- ինչպես ծանոթացնել աշակերտներին դասի նպատակները և խնդիրները,
- ինչպես կարողանաք կենտրոնացնել, համախմբել աշակերտների ուշադրությունը և շահագրգռել նրանց,
- ինչպես կապեք դասի նպատակներն աշակերտների հետաքրքրություններին:

**Հիմնական մաս (բովանդակության իրացում)**

Այս փուլի խնդիրն է, մի կողմից՝ «մարտահրավերի» փուլում բորբոքված հետարքրքությունների և ազդակների պահպանումը, մյուս կողմից՝ աշակերտների ակտիվություններին նպաստումը (մասնակցություն բանավեճին, քննադատական վերլուծություն, տեսակետների համադրություն և համեմատություն, այլընտրանքային ուղիների որոնում): Այս փուլում նշանակալի է.

- դասի գլխավոր թեմայի սահմանումը,
- դասի գործընթացի հետաքրքիր ներկայացման համար անհրաժեշտ միջոցների և մեթոդների ընտրությունը,
- աշակերտները կարողանան գիտակցել ստացած գիտելիքի և տեղեկությունների անհրաժեշտությունը և նշանակությունը:

**Եզրափակիչ մաս (կշռադատում, ըմբռնում)**

- Դասի այս մասում կարող է ընդգծվել մի քանի պահ.
- Դասի այս փուլում տեղի է ունենում աշակերտների ստացած գիտելիքի և տեղեկությունների գիտակցում և ամրապնդում:Հարցի նկատմամբ սեփական վերաբերմունքի ձևավորում: Տեսակետի կամ տեղեկությունների մեկնաբանություն (իր բառերով փոխանցում):

Աշակերտն ամենից լավ այն է մտապահում, ինչը յուրացվում է իրեն ծանոթ համատեքստում, և հաղորդում է իր բառերով և հիմնավորում այն: Ընկալումն այն ժամանակ է հիմնավոր, երբ տեղեկությունը տեղադրվում է համատեքստային գծապատկերի մեջ:

Այս փուլի երկրորդ խնդիրն է աշակերտների միջև կարծիքների առողջ փոխանակումը: Կշռադատման ժամանակ բանավեճին ընդգրկվելը ոչ միայն բանավեճի մասնակիցներին, այլև պասսիվ ունկնդիրներին հնարավորություն է տալիս հասկանալ, մտածել և դրա հիման վրա ձևավորել, ստեղծել իրենց կարծիքը և վերաբերմունքը քննարկված հարցի շուրջ: Բացի այդ, սա փոփոխությունների և հայեցակետերի փոփոխման աստիճանն է սովորելու ընթացքում: Այս փուլում են ծանոթանում նորանոր տեղեկությունների, ինտեգրման բազմապիսի միջոցների, վերջինս ավելի ճկուն կառուցվածքների է մոտեցնում, որոնք հետագայում աշակերտները հնարավոր է ավելի գործնականորեն և նպատակաուղղված կիրառեն:

Բացի այդ, դասի եզրափակիչ կամ կշռադատման փուլում պետք է սահմանվի.

1. Ամփոփման ինչ միջոցի կդիմեք դասի վերջին:
2. Ինչպես կիրականացնեք հետադարձ կապն աշակերտների հետ:

Դասի վերջին ուսուցիչն առաջադրանք է տալիս աշակերտներին. տանը մեկ անգամ ևս վերհիշել, թե ինչ են արել այս դասին, ուշադիր ծանոթանալ (կարդալ) դասագրքում տրված տեղեկությանը (տեքստ,աղբյուր) և կատարել «տնային առաջադրանքը»:

**Մեթոդական երաշխավորություն՝** կապված հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտներին կրթական գործընթացի մեջ ներգրավելու հետ

Սովորելիս շատ երեխաներ ունենում են ուսանման հետ կապված դժվարություններ, ինչը կարող է հարուցված լինել աշակերտի ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հուզական, լեզվական կամ այլ վիճակով: Իսկ երկրի կրթական համակարգի պարտավորությունն է՝ գտնել բոլոր երեխաներին հաջողությամբ ուսուցանելու ուղիները:

Ներառական կրթությունը նշանակում է հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների ներգրավում կրթական գործընթացի մեջ: Նրա նպատակն է այս երեխաների կրթությանը նպաստելը, նրանց ինտեգրումը, հնարավորությունների բացահայտումը և զարգացումը: «Ինկլյուզիա» նշանակում է ներառում: Ներառական կրթության նպատակն է` բոլոր երեխաներին տրվի հասակակիցների հետ սովորելու և բնակման վայրին մոտ որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորություն:

Ներառական կրթությունը պահանջում է ամբողջությամբ դպրոցի և առարկայի ուսուցչի անխոնջ աշխատանք նրա համար, որ հզորացնի և զարգացնի հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի հնարավորությունները, բարելավի աշակերտի ակադեմիական և սոցիալական հմտություններն ու կարողությունները, պատրաստի աշակերտին ինքնուրույն կյանքի համար և ակտիվորեն նպաստի աշակերտի` որպես հասարակության լիարժեք անդամ ձևավորմանը: Նա ամբողջությամբ պետք է մասնակցի դպրոցական և դասարանական ակտիվություններին:

Տարբերակման տեսությունը հիմնված է այն եզրակացության վրա, որ աշակերտների միջև զգալի տարբերություն կա (Կ. Թոմլինսոն): Այս եզրակացության հիման վրա տարբերակման տեսությունը առաջարկում է ռազմավարություն, որն օգնում է ուսուցչին հատուկ պայմաններ ստեղծել յուրաքանչյուր աշակերտի լավ սովորելու համար: Դրա համար ուսուցիչը օգտագործում է տարբեր ուսումնական նյութեր, տարբեր առաջադրանքներ և այլ պրակտիկա:

Համաձայն այս տեսության, ուսուցման ժամանակ դասին իրականացված ակտիվությունների բովանդակությունը, գործընթացը, մթերքը կանոնավոր կերպով փոխվում է` ելնելով նրանից, թե ինչի համար են պատրաստ աշակերտները:

Դասասենյակում տարբերակման տեսության գործնական կիրառման ժամանակ ուսուցիչը կատարում է հետևյալ բաղադրիչների փոփոխում.

Ուսումնական նյութերի

Ուսումնական ռեսուրսների-ուսումնական միջավայրի:

Փոփոխումն անհրաժեշտ է երեք հիմնական ասպեկտների պատճառով.

1. Սովորելու հնարավորություն
2. Սովորելու մոտիվացիա
3. Սովորելու արդյունավետություն:

Այս երեք ասպեկտները անպայման պետք է կապենք աշակերտի պատրաստակամության, հետաքրքրության և ուսանման հետ:

Փաստ է, որ բոլոր աշակերտները տարբեր են: Գոյություն չունի «ստանդարտ» աշակերտ, և չկա որևէ իդեալական մեթոդ, որով ուսուցիչը կհաղթահարի բոլոր աշակերտների խնդիրները: Ահա այստեղ է մեզ օգնում տարբերակման տեսությունը, որը ճանաչում է աշակերտների միջև զգալի տարբերությունը: Ուսումնական գործընթացի պլանավորման ժամանակ ուսուցիչը կարող է հեշտությամբ օգտագործել աշակերտների տարբերությունը` ուսումնական նպատակով նախատեսված արդյունքներին հասնելու համար: Այդ տարբերությունները դրսևորվում են հետևյալ ձևերով.

Լսելով սովորողներ
Տեսնելով սովորողներ
Կինեսթետիկ սովորողներ

**Տեսնելով սովորողներ**

Տեսնելով սովորողները դասարանի ամենամեծ խումբն են կազմում: Նման աշակերտները պետք է «տեսնեն» ուսումնական նյութը, որպեսզի այն հասկանալի դառնա իրենց: Կարևոր է ունենալ ցուցադրական օժանդակ միջոցներ, որոնց միջոցով կկարողանան տեսնել տեղեկությունը:

**Լսելով սովորողներ**

Լսելով սովորող աշակերտները դասարանի ամենափոքր խումբն են կազմում: Հնարավոր է, մուլտիմեդիայի, այսօրվա տեխնիկական միջոցների մեղքն է այն, որ այն աշակերտների թիվը, որոնք գերադասում են նստելու և լսելու միջոցով սովորել, այսպես նվազել է:

**Կինեսթետիկ սովորողներ**

Սպրենջերն ասում է. «Ամեն դաս պետք է ներառի շարժում: Վերցրեք այս շարժումը և այն հաճախ կրկնեք: Վերջում այն կվերածվի մշտական հիշողության»: Նման աշակերտներին շարժվել է անհրաժեշտ: Նրանց նաև անհրաժեշտ են ուսումնական մոդելներ, որոնք նրանք կբռնեն ձեռքում և կչոշափեն: Այդպիսի աշակերտներին անհրաժեշտ է մասնակցություն գործնական ակտիվությունների և գործնական ուսանում, որպեսզի ուսումնական նյութը նրանց համար հասկանալի դառնա: Տարբերակման տեսությունը կիրառելիս, ուսուցիչը պլանավորում է ակտիվություններ տարբեր մոդալության աշակերտների համար, ստեղծում արդյունավետ ուսումնական միջավայր, ինչով օգնում է սովորել դասարանում գտնվող տարբեր հնարավորություն ունեցող աշակերտներին: Երբ աշակերտին ուսումնական նյութը տրամադրվում է համապատասխան մոդալությամբ, տեղի է ունենում տեղեկատվության արագ ծածկագրում և այն չի կորչում:

Դասասենյակում տարբերակման տեսությունը հնարավոր է օգտագործել տարբեր ձևաչափերով.

**1.** Ուսումնական նյութերն ու ակտիվությունները նախատեսված են բոլոր մոդալության աշակերտների համար: Այս ձևաչափով ուսուցման հաջողությունը կախված է նրանից, թե որքան ճիշտ է կարողանում ուսուցիչը ակտիվության մակարդակում իրացնել տարբերակման տեսությունը:

**2.** Դասարանում խմբերի ձևավորումը տեղի է ունենում՝ ըստ ուսանման մոդալության, և յուրաքանչյուր խմբի համար ստեղծվում է համապատասխան վարժություն: Երկրորդ ձևաչափը հիմնվում է այն գաղափարի վրա, որ գլխավորն այն է, որ աշակերտը սովորի այն մոդալությամբ, որը նրա համար նախընտրելի է: Նման ձևաչափով ուսուցման արդյունավետությունը կախված է երկու գործոններից.

   1. Որքանով ճիշտ կարողացավ ուսուցիչը ըստ համապատասխան մոդալության խմբեր ձևավորել:
   2. Որքանով ճիշտ է հարմարեցված ուսումնական ակտիվությունը կոնկրետ մոդալության շրջանակներում:

Գործնականում երկրորդ մոդալությունն ավելի տարածված է, սակայն կրթական ոլորտի մասնագետները մշտապես նշում են առաջին ձևաչափի արդյունավետությունը:

# 5. V-VI ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

**ա) VI դասարանի վերջում ձեռքբերվելիք արդյունքներ**

**Դասիչների բացատրություն**

Տարրական աստիճանում չափորոշչում յուրաքանչյուր արդյունքի նախորդում է դասիչ, որը մատնանշում է առարկան, ուսուցման փուլը և չափորոշչի արդյունքի համարը: Օրինակ՝Հաս.գիտ. տարր (II).1.:

**«Հաս.գիտ.»** – մատնանշում է հասարակական գիտությունները:

**«Տարր.»** – մատնանշում է տարրական աստիճանը:

**«(II)»** – մատնանշում է, որ չափորոշիչը ներառում է V-VI դասարանները:

**«1»** – մատնանշում է չափորոշչի արդյունքի համարը:

| **«Մեր Վրաստանը» առարկայի չափորոշիչ (V-VI դասարաններ)** | |
|---|---|
| **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԻՉԸ** | **1. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ԺԱՄԱՆԱԿ, ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ. (II).1.** | Աշակերտը պետք է կարողանա.<br>Պատմական փաստերն ու երևույթներն ըմբռնել ժամանակագրական կտրվածքում և փոխանցել: Դրանք կապել ժամանակակից սոցիալ-մշակութային միջավայրի և պատմական ժառանգության հետ: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ. (II).2.** | Լեգենդներն ու առասպելները, կարևոր պատմական իրադարձությունները և անհատներին կապել տեղի միջավայրի հետ: Գիտակցել երկրի զարգացման մեջ անհատի դերը: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).3.** | Ուսումնասիրել Վրաստանի երկրամասերի բնական և սոցիալ-մշակութային բնութագրիչները: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).4.** | Քարտեզի պայմանական նշանների միջոցով կարդալ քարտեզի վրա տեղ գտած տեղեկությունները: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).5.** | Գիտակցել Վրաստանին բնորոշ բնական երևույթները հարուցող պատճառները և դրանց արդյունքները: Պատշաճ կերպով արձագանքել բնական երևույթներին: |
| | **2. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ** |
| | Աշակերտը պետք է կարողանա. |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).6.** | Գիտակցել երկրի զարգացման համար առևտրի, այլ ավանդական և ներկայիս մասնագիտությունների և գործունեությունների նշանակությունը և անհրաժեշտությունը: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).7.** | Հանդես բերել նախաձեռնություն, մարդկային և նյութական ռեսուրսների նախատեսմամբ՝ պլանավորել արդյունքին միտված գործունեություն: |
| | **3. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ** |
| | Աշակերտը պետք է կարողանա. |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).8.** | Գիտակցել իր՝ որպես երեխայի իրավունքներն ու պարտականությունները, սահմանված կանոնների և օրենքների հիման վրա իրացնել իր իրավունքները և պաշտպանել ուրիշի իրավունքները: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).9.** | Հասարակության համար հրատապ խնդիրները/ իրադարձությունները ընկալել պատմական և ժամանակակից կտրվածքում: Սեփական ներգրավվածությամբ գիտակցել դրանց ուղղման մեխանիզմները: |

| «Մեր Վրաստանը» առարկայի չափորոշիչ (V-VI դասարաններ) | |
|---|---|
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).10.** | Գիտակցել առողջ կենսակերպի (անձնական հիգիենայի, առողջ սննդի, ավանդական և ներկայիս մարզական ակտիվությունների) նշանակությունը և հետևել դրանց: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).11.** | Գիտակցել անվտանգության կանոնների պահպանման նշանակությունը և արտակարգ և կենցաղային իրավիճակներում համապատասխանաբար գործել (օրինակ՝ փողոցում տեղաշարժվելիս, տրանսպորտում գտնվելիս, էքսկուրսիայի և արշավի ժամանակ, բնական աղետների ժամանակ): |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).12.** | Գիտակցել արժեքների, օրինակ՝ ժողովրդավարության սկզբունքների, մշակութային ժառանգության, շրջակա միջավայրի պահպանության, հանդուրժողականության նշանակությունը անհատի և հասարակության զարգացման համար: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).13.** | Գիտակցել Վրաստանի էթնիկ, մշակութային-կրոնական բազմազանությունը և դրսևորել դրական վերաբերմունք: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).14.** | Գիտակցել բնական միջավայրի, պատմական և մշակութային ժառանգության նշանակությունը և հոգատար վերաբերմունք դրսևորել դրա նկատմամբ: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).15.** | Գիտակցել իր շուրջն առկա սոցիալ-մշակութային հաստատությունների (օրինակ՝ դպրոց, պաշտամունքային (կրոնական) կառույցներ, կինոթատրոն, ակումբ, թանգարան, բժշկական հաստատություն, ոստիկանություն) գործառույթները: |

**բ) Բովանդակություն**

Ուսումնական գործընթացը պետք է ընթանա հետևյալ հասկացական կարգերի և թեմաների մշակման հիման վրա:

**Հասկացություններ և տերմիններ**

«Մեր Վրաստանը» առարկայի չափորոշիչը ենթադրում է թվարկված հասկացությունների իմպլիցիտիվ և էքսպլիցիտիվ մշակում.

1. Անհատ, հասարակական խմբեր:
2. Ժամանակ, շարունակականություն և փոփոխություն (պատմություն, աղբյուր, փաստ և մեկնաբանություն, օրացույց, դար, թվարկություն):
3. Ժողովուրդ, աշխարհագրական դիրք, միջավայր (աշխարհագրություն, քարտեզ/տեղանքի պլան, սահման, բնական ռեսուրսներ, բնակեցման տեսակներ, կացարանի տեսակներ, լանդշաֆտ (բնական), էկոլոգիա/շրջակա միջավայրի պահպանություն, ռելիեֆ, կլիմա, բնական երևույթներ և պաշտպանություն դրանցից, արտակարգ իրավիճակներ, ազգ, էթնիկ խումբ, պատմա-ազգագրական երկրամաս):
4. Էկոնոմիկա (մասնագիտություն, գյուղատնտեսություն, առևտուր, տրանսպորտ և հաղորդակցություններ):
5. Պետություն և քաղաքացի (հասարակություն, պատասխանատվություն, առողջ կենսակերպ, կամավորություն, մասնակցություն, քաղաքացիական անվտանգություն, օրենք, հակամարտություն, բռնություն), ընտրություններ, խորհրդանշաններ:
6. Մշակութային բազմազանություն (էթնիկ, մշակութային-կրոնական բազմազանություն, մշակութային ժառանգություն, թանգարան, ավանդույթ/նորարարություն, ժողովրդական բանահյուսություն, գիր, ավանդական մարզատեսակներ, ավանդական կենցաղային գործունեություններ):

# Թեմա V-VI դասարանների համար

Վրաստանի երկրամասի տրված մատրիցան համապիտանի նմուշ է, համաձայն որի պետք է կառուցվի նյութը բոլոր երկրամասերի շուրջ, իհարկե, երկրամասերի ինքնատիպության նախատեսմամբ

| Թեմա | Ուսումնական թեման չափորոշչի արդյունքների հետ կապող հարցեր |
|---|---|
| **Վրաստանի երկրամաս** | Ի՞նչ գիտենք Վրաստանի և նրա երկրամասերի մասին: (Հաս.գիտ.տարր.(II). 3, 4)<br>Ի՞նչ կարող ենք իմանալ Վրաստանի այս կամ այն երկրամասի մասին քարտեզի վրա արված պայմանական նշանների միջոցով (ռեսուրս, հուշարձան, ճակատամարտի վայր, քաղաք, գետ, լիճ, լեռ, հարթավայր: (Հաս.գիտ.տարր.(II). 3, 4)<br>Պատմության մասին ի՞նչ և ինչպե՞ս են պատմում մեզ Վրաստանի այս կամ այն երկրամասում պահպանված հուշարձանները: (Հաս.գիտ.տարր.(II). 1, 2, 4, 14)<br>Ո՞ր նշանավոր մարդիկ, իրադարձությունները, առասպելներն ու լեգենդներն են կապվում Վրաստանի այս կամ այն երկրամասի պատմության հետ: (Հաս.գիտ.տարր.(II). 1, 2, 12)<br>Պատմականորեն ո՞ր հայտնի ճանապարհորդությունն է կապվում Վրաստանի այս կամ այն երկրամասի հետ: (Հաս.գիտ.տարր.(II). 1, 2, 6)<br>Ինչպե՞ս են արտացոլվում պատերազմի և խաղաղության հետևանքները (օրինակ, պատմական փլատակներ, սահմանների փոփոխություն, բնակչության փոփոխություն) Վրաստանի այս կամ այն երկրամասի պատմության և կենցաղի վրա: (Հաս.գիտ. տարր.(II). 1, 9, 12)<br>Ինչպե՞ս են տարբերվում Վրաստանի տարբեր պատմա-ազգագրական երկրամասերը տարբեր հատկանիշներով (օրինակ, ժողովրդական բանահյուսություն, խոհանոց, հագուստ, ծեսեր և սովորույթներ), և ի՞նչն է պայմանավորել դա: (Հաս.գիտ.տարր. (II). 3, 13)<br>Ի՞նչն է պայմանավորել, որ Վրաստանի այս կամ այն երկրամասում տարբեր էթնիկ, մշակութային և կրոնական խմբերի ներկայացուցիչներ են ապրում: (Հաս.գիտ.տարր. (II). 1, 3, 13)<br>Ինչո՞ւ է Վրաստանի այս կամ այն երկրամասում տարածված այս կամ այն ավանդական գործունեությունը և տնտեսության բնագավառը: (Հաս.գիտ.տարր.(II). 3, 6)<br>Ի՞նչն է պայմանավորել բնակեցման և կացարանի տեսակների առանձնահատ-կությունները Վրաստանի այս կամ այն երկրամասում: (Հաս.գիտ.տարր.(II). 3, 5)<br>Ինչպե՞ս են պաշտպանվում Վրաստանի այս կամ այն երկրամասին բնորոշ տարերային երևույթներից: Ինչո՞վ են պայմանավորված տարերային երևույթները: (Հաս.գիտ. տարր.(II). 5, 11)<br>Ինչպե՞ս կարող ենք մասնակցել այս կամ այն երկրամասի համար հրատապ խնդիրների (օրինակ՝ շրջակա միջավայրի պահպանություն, մշակութային ժառանգության պահպանություն, էկոմիգրանտներ, փախստականներ, կրթության հասանելիություն, պետական լեզվի չիմացություն*) լուծմանը: (Հաս.գիտ.տարր.(II). 7, 12, 14) *Այս ցանկից պետք է առանձնացնենք և մեկնաբանենք կոնկրետ երկրամասին բնորոշ սոցիալական խնդիրը:<br>Ինչպե՞ս կարող եմ խաղաղ ճանապարհով պաշտպանել իմ և իմ հասակակիցների իրավունքները և ի՞նչ միջոցներ կարող եմ կիրառել հասարակության համար վնասակար բռնի վարքագծի կանխման համար: (Հաս.գիտ.տարր.(II). 7, 8, 9, 10, 12)<br>Ի՞նչ խնդիրներ կարող են ստեղծել իմ երկրամասին իմ և հասակակիցներիս անպա-տասխանատու գործողությունները և պարտականությունների անտեսումը: (Հաս. գիտ.տարր.(II). 9, 10, 14)<br>Ինչո՞ւ է կարևոր, որ և՛ աղջիկները, և՛ տղաները պահպանեն առողջ կենսակերպ, և ինչպե՞ս են մեզ օգնում Վրաստանի այս կամ այն երկրամասում տարածված ավանդական մարզաձևերը առողջ կենսակերպի պահպանման հարցում: (Հաս.գիտ. տարր.(II). 10)<br>Ինչո՞ւ էր/է անհրաժեշտ Վրաստանի տարբեր երկրամասերում սոցիալ-մշակութային ինստիտուտների առկայությունը (օրինակ՝դպրոց, ակադեմիա, պաշտամունքային (կրոնական) կառույցներ, գրադարան) անցյալում և ներկայում: (Հաս.գիտ.տարր. (II). 1, 6, 15) |

| Թեմա | Ուսումնական թեմաn չափորոշչի արդյունքների հետ կապող հարցեր |
|---|---|
| **Թբիլիսի՝ Վրաստանի մայրաքաղաք** | Ինչպե՞ս հիմնադրվեց Թբիլիսին: Ինչպե՞ս վերածվեց այն Վրաստանի մայրաքաղաքի: Ինչպիսի՞ տեսք ուներ այն պատմական անցյալում: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 2, 13)<br>Ինչպե՞ս են արտացոլվում պատերազմի և խաղաղության հետևանքները (օրինակ՝ պատմական փլատակներ, սահմանների փոփոխություն, բնակչության փոփոխություն) Թբիլիսիի պատմության և կենցաղի վրա: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 12)<br>Ի՞նչ և ինչպե՞ս են պատմում մեզ պահպանված հուշարձանները Թբիլիսիի պատմության մասին (օրինակ՝ Նարիղալա, Մետեխի): (Չաս.գիտ.տարր.(II). 1, 14)<br>Ինչո՞վ է տարբերվում պատմական Թբիլիսին ժամանակակից Թբիլիսիից: Թբիլիսիի պատմության և զարգացման մասին ի՞նչ են մեզ պատմում գեղանկարներն ու լուսանկարները: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 2, 3, 6, 14)<br>Ինչո՞ւ են տարբեր Թբիլիսիի թաղամասերը (ճարտարապետական, բնակչության կենցաղի առումով): (Չաս.գիտ.տարր.(II). 1, 3, 5, 15)<br>Ինչո՞ւ են Ռուսթավելի պողոտան և Ազատության հրապարակը համարվում Թբիլիսիի կենտրոն (մշակութային-քաղաքական նշանակությամբ): (Չաս.գիտ.տարր.(II). 15)<br>Ինչո՞վ է պայմանավորված տարբեր գործունեությունների և մասնագիտությունների բազմազանությունը Թբիլիսիում: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 3, 6, 13, 15)<br>Ինչո՞ւ են Թբիլիսիում ապրում տարբեր էթնիկ, մշակութային և կրոնական խմբերի ներկայացուցիչներ: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 3, 12, 13)<br>Ինչպե՞ս էր/է արտացոլվում Թբիլիսին արվեստի և գրականության մեջ: (Օրինակ՝ Փիրոսմանի, Գրիշաշվիլի և այլն) (Չաս.գիտ.տարր.(II). 1, 2, 3)<br>Ինչպե՞ս կարող ենք օգտագործել քաղաքի հատակագծի վրա արտացոլված պայմանական նշանները Թբիլիսիում կողմնորոշման համար (Չաս.գիտ.տարր.(II).4)<br>Ինչո՞ւ են Թբիլիսիում սուր դրված շրջակա միջավայրի (էկոլոգիայի, օդի աղտոտման) պահպանության խնդիրները: (Չաս.գիտ.տարր.(II). 9, 14)<br>Ինչպե՞ս արդյունավետ օգտագործենք առողջ կենսակերպի համար զբոսաշրջական և հանգստյան (ռեկրեացիոն) գոտիները: (Չաս.գիտ.տարր.(II). 10) |
| **Պետություն՝ մեր Վրաստանը** | Ե՞րբ և ինչպե՞ս է ստեղծվել վրացական պետությունը: Վրացական գի՞րը: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 2, 14)<br>Ի՞նչ նշանակություն ունի և ինչո՞ւ կարող է փոխվել պետական սահմանը: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 2, 4)<br>Ի՞նչ կարող եմ իմանալ Վրաստանի մասին տարբեր տեսակի քարտեզների և դրանց վրա տեղ գտած պայմանական նշանների միջոցով: (Չաս.գիտ.տարր.(II).4, 5)<br>Ի՞նչ խնդիրներ կարող են ստեղծել մեր երկրին իմ և իմ հասակակիցների անպատասխանատու գործողությունները և պարտականությունների անտեսումը: (Չաս.գիտ.տարր.(II). 8, 12)<br>Ինչպե՞ս կատարենք մեր ներդրումը երկրի զարգացման մեջ՝ առկա խնդիրների ֆոնին (էկոլոգիական խնդիրներ, ճանապարհային անվտանգություն, առողջ կենսակերպ, կրթության հասանելիություն, բռնության խնդիր, պետական լեզվի չիմացություն և այլն: (Չաս.գիտ.տարր. (II). 7, 9, 10, 12)<br>Ինչո՞ւ է իմ պարտքը համարվում երկրի պատմամշակութային ժառանգության և շրջակա միջավայրի պահպանությունը: (Չաս.գիտ.տարր.(II). 7, 9, 14)<br>Ինչո՞ւ է Վրաստանին բնորոշ էթնիկ, մշակութային և կրոնական բազմազանությունը: (Չաս.գիտ.տարր.(II). 3, 13)<br>Ինչո՞ւ են Վրաստանին բնորոշ բազմազան ազգագրական ավանդույթները: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 3, 13)<br>Ինչպե՞ս են հոգ տանում տարբեր ինստիտուտներ մեր իրավունքների պաշտպանության և իրացման մասին (օրինակ՝ խորհրդարան, դատարան, նախարարություններ, կրթական հաստատություններ, թատրոն, թանգարան): (Չաս.գիտ.տարր.(II). 15)<br>Ինչպե՞ս է հոգ տանում պետությունը մեր քաղաքացիական անվտանգության մասին: (Չաս.գիտ.տարր.(II). 11)<br>Ինչպե՞ս իմ ձայնը լսելի դարձնեմ իշխանությանը՝ կարևոր հարցերի հետ կապված իմ ձեռքի տակ եղած միջոցներով: (Չաս.գիտ.տարր.(II). 7, 8, 9, 12) |

# 6. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻՆ

| Դասի վերնագիրը | (II).1 | (II).2 | (II).3 | (II).4 | (II).5 | (II).6 | (II).7 | (II).8 | (II).9 | (II).10 | (II).11 | (II).12 | (II).13 | (II).14 | (II).15 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ներածություն | | | | | | | | | | | | | | | |
| 1. Վիկտորինա «Մեր Վրաստանը» | | * | * | | | | | | | | | | | | |
| 2. Ինչն է մեզ օգնում ուսումնասիրել մեր հայրենիքի երկրամասերը | * | * | * | | | | | * | * | | | | | | |
| 3. Քարտեզ | | | | * | | | | | | | | | | | |
| 4. Հորիզոնի կողմերը | | | | * | | | | | | | | | | | |
| 5. Տեղանքի պլան | | | | * | | | | | | | | | | | |
| 6. Իրադարձությունների սահմանում ժամանակի մեջ | | * | | | | | | | | | | | | | |
| 7. Թվարկություն | * | | | | | | | | | | | | | | |
| 8. Ինչպես հետազոտենք | * | * | | | | | | * | | | | | | | |
| ԲԱԺԻՆ 1. ՔԱՐԹԼԻ | | | | | | | | | | | | | | | |
| 1.1. Քարթլի՝ Վրաստանի աշխարհագրական կենտրոն | | | | * | * | | * | | | | | | | | |
| 1.2. Քարթլի՝ Վրաստանի քաղաքական կենտրոն | * | * | | | | | * | | | | | | | | |
| 1.3. Քարթլին և նրա հարևան երկրամասերը | | | * | * | | | | | | | | | | | |
| 1.4. Քարթլիի բերդ-ամրոցները | | * | * | | | * | | | | | | * | | * | |
| 1.5. Բազմազգ Քարթլին | * | | * | | * | | | | * | | | * | * | | |
| 1.6. Բնակավայրերի տեսակները Քարթլիում | | | * | | * | | * | | | | * | | | | |
| 1.7. Տնտեսության բնագավառները Քարթլիում | | | * | | | * | * | | | | | | | | |
| 1.8. Փոխադարձ օգնության ավանդույթը | | | | | * | | * | | * | | | | | | |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | * | * | * | * | * | | | | | | | | | | |
| ԲԱԺԻՆ 2. ԻՄԵՐԵԹԻ | | | | | | | | | | | | | | | |
| 2.1. Իմերեթիի աշխարհագրական դիրքը և բնությունը | | | * | * | | | | | | | | | | | |
| 2.2. Բնակավայրերի տեսակներն Իմերեթիում | | * | * | | * | | | | | | | | | | |
| 2.3. Իմերեթցիների տնտեսական գործունեությունը | | * | * | | * | * | | | | | | | | | |
| 2.4. Մշակութային հուշարձանները Իմերեթիում | | * | | | | | * | * | * | * | | | | | |
| 2.5. Ամենօրյա կյանքն Իմերեթիում | | * | | | | * | * | * | | | | | * | * | |
| 2.6. Իմերեթիի քաղաքները | | * | * | | | | | | * | | | | | | |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | | | * | | * | | * | * | * | * | | * | | | |

| Դասի վերնագիրը | (II).1 | (II).2 | (II).3 | (II).4 | (II).5 | (II).6 | (II).7 | (II).8 | (II).9 | (II).10 | (II).11 | (II).12 | (II).13 | (II).14 | (II).15 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԲԱԺԻՆ 3. ՍԱՄԵԳՐԵԼՈ | | | | | | | | | | | | | | | |
| 3.1. Սամեգրելոյի աշխարհագրական դիրքը և բնությունը | | * | * | * | | | | | | | | | | | |
| 3.2. Սամեգրելոն անցյալում և ներկայում | * | * | | | | | | | | | | | | * | |
| 3.3. Մշակութային և պատմական ժառանգությունը Սամեգրելոյում | | * | * | | | | | * | | | | | | * | * |
| 3.4. Բնակելի կառույցները և բնակավայրերը Սամեգրելոյում հնում | * | | * | | | | | * | | | | | | | |
| 3.5. Տնտեսության բնագավառները Սամեգրելոյում | | | * | | | * | * | | | | | | | | |
| 3.6. Մեգրելական ավանդույթները | | * | * | | | | | | | | | | | * | |
| 3.7. Սամեգրելոն Վրաստանի ազատության և միասնականության պահապան | * | * | | | | | | | | | | | | * | |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | | | * | * | * | | | * | * | | * | | | * | |
| ԲԱԺԻՆ 4. ՍՎԱՆԵԹԻ | | | | | | | | | | | | | | | |
| 4.1. Սվանեթիի աշխարհագրական դիրքը | | | * | * | | | | * | | | | * | | | |
| 4.2. Բնակեցման տեսակը և բնակելի տունը Սվանեթիում | | * | * | * | | | | | | | | | | | |
| 4.3. Լեռներում փոխադրամիջոցները և վտանգները | | | * | | | * | * | | | | | | | | |
| 4.4. Տարերային երևույթները Սվանեթիում | | | * | | * | | * | | | | | * | | | |
| 4.5. Սվանական առասպելները և որսի ավանդույթը | | * | | | | | | | * | | | * | | | |
| 4.6. Տնտեսության բնագավառները Սվանեթիում | | | * | | | * | | | | | | | | | |
| 4.7. Սվանեթին Վրաստանի գանձերի պահոց | | | * | | | | * | | | | | * | | * | * |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | | | * | | * | * | | * | | | | | * | * | * |
| ԲԱԺԻՆ 5. ԱՋԱՐԻԱ | | | | | | | | | | | | | | | |
| 5.1. Աջարիայի աշխարհագրական դիրքը և տեսարժան վայրերը | | | * | * | | | | | | | | | | | |
| 5.2. Աջարական տունը, տնամերձը և բնակեցման տեսակները | | | * | | * | | * | | | | * | | | | |
| 5.3. Աջարական հյուրընկալությունը | * | | * | | | * | * | | | | | | * | * | |
| 5.4. Աջարների տնտեսական գործունեությունը | | | * | | | * | * | | | | | | | | |
| 5.5. Կրոնը Աջարիայում | | | * | | | | | | | | | * | * | * | |
| 5.6. Աջարիան՝ վրացական արհեստագործության կենտրոններից մեկը | | | * | | | * | * | | | | | * | | | * |
| 5.7. Աջարական ժողովրդական բանահյուսությունը | | | * | | | | | | | | | | | * | |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | | | * | | | * | | * | * | | | * | | * | |

# 7. ԳՆԱՀԱՏՈՒՄ

«Մեր Վրաստանը» առարկայի ուսանում-ուսուցման ժամանակ կիրառվում է որոշող և զարգացնող գնահատում: Նրա խնդիրները սահմանված են Հասարակական գիտությունների չափորոշչի ընդհանուր մասում:

Առարկայի ուսանում-ուսուցման գործընթացում, ընթացիկ գնահատման բաղադրիչից, աշակերտը պետք է գնահատվի հետևյալ տիպիկ ակտիվություններով.

Առարկայի ուսանում-ուսուցման գործընթացում աշակերտը կարող է գնահատվել հետևյալ գործունեության տեսակներով.

**1. Աշխատանք քարտեզի վրա:**

**2.** Դիագրամների, **սանդղակների** (ժամանակի սանդղակ) ստեղծում:

**3.** Տեղեկատվություն, լուսանկարչական նյութի **հավաքագրում և շնորհանդեսի** պատրաստում, ցուցահանդեսի կազմակերպում:

**4.** Պատմության, անիմացիոն / գեղարվեստական / վավերագրական ֆիլմի, տեսահոլովակի, երաժշտական տեսահոլովակի, կենցաղային դեպքի, գրական ստեղծագործության, աղբյուրի **քննարկում**:

**5. Ստեղծագործական մթերքի ստեղծում** (պաստառ, նկար, կոմիքս, թռուցիկ, շարադրություն, պատմվածք, գրքույկ, պատի թերթ, մանրակաղապար, տեսահոլովակ, տեսաալբոմ, լուսանկարչական կոլլաժ (ժամանակի սանդղակի օգտագործմամբ), կարգախոս):

**6. Հետազոտական նախագիծ** (հարցում, հարցազրույց, ռեպորտաժ, հետազոտության անցկացում, վարվելակարգի կանոններ («Սահմանադրություն»), օրվա աշխատակարգ, «Բարեկամության օրագիր», ցուցահանդես):

**7. Փաստաթղթերի** ստեղծում (դասարանի «սահմանադրություն», օրվա աշխատակարգ, խնդրագիր և այլն):

**8. Հետազոտական նախագիծ** (հարցում, հարցազրույց, ռեպորտաժ և այլն):

**9.** Բարեգործական, կրթական և սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված **նախագծերի** պլանավորում և իրականացում:

**10. Էքսկուրսիա:**

**11. Քննարկում**:

**12. Դերային խաղ** (հանրային կառույցի իմիտացիա, մոդելավորված դատարան և այլն):

Տվյալ գործունեություններին (ակտիվություններին) աշակերտների մասնակցությունը պետք է գնահատվի գնահատման աղյուսակներով՝ խորագրերով, որոնք, մի կողմից, ստուգում են աշակերտի անհատական առաջընթացը, մյուս կողմից՝ ուսուցման գործընթացում ձեռք բերված գիտելիքների որակը (գիտելիքների երեք կարգ՝ դեկլարատիվ, ընթացակարգային, պայմանի հետ կապված):

Ամփոփիչ հանձնարարությունը պետք է ներկայացվի համալիր առաջադրանքի տեսքով: Համալիր առաջադրանքը կարող է լինել.

**1.** Վրաստանի այս կամ այն երկրամասի (օրինակ, Քարթլի) որևէ վայրում էքսկուրսիայի միջոցով հետազոտության անցկացում (պատմական, աշխարհագրական, սոցիալական խնդիրների մասին) և դրա արդյունքների **շնորհանդես**:

**2.** Վրաստանի այս կամ այն երկրամասի պատվին որևէ **միջոցառում անցկացնել**, որում կարտացոլվեն պատմության, աշխարհագրության և քաղաքացիական կրթության տվյալներ:

**3. Դերային խաղով** Վրաստանի այս կամ այն երկրամասի որևէ պատմական իրադարձության դրվագի ներկայացում:

**4. Մանրակաղապարների ստեղծում**՝ Վրաստանի երկու երկրամասերի առանձնահատկություններն իրար հետ համեմատելու նպատակով:

**5. Այց ազգագրական թանգարան**՝ դրա հիշարժան ցուցադրանմուշների ուսումնասիրման նպատակով:

**6.** Վրաստանի այս կամ այն երկրամասի մասին տեղեկատվական-գովազդային բուկլետի ստեղծում:

**7.** Սկայպի, հեռախոսի կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ՝ Վրաստանի տարբեր մասերում ապրող հասակակիցների հետ կապվել, տեղեկություններ փոխանակել և հասակակիցների խնդիրների շուրջ հավաքագրված տեղեկատվությունն ընդհանրացնել:

**8.** Վրաստանի այս կամ այն երկրամասի համար հրատապ **պարզ քաղաքացիական նախագծերի** (էկոլոգիա, արտակարգ իրավիճակներ, առողջ կենսակերպ) իրականացում:

# 8. ԺԱՄԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄ

| Դասի վերնագիրը | (II).1 |
|---|---|
| Ներածություն | **1** |
| 1. Վիկտորինա «Մեր Վրաստանը» | **1** |
| 2. Ինչն է մեզ օգնում ուսումնասիրել մեր հայրենիքի երկրամասերը | **1** |
| 3. Քարտեզ | **1** |
| 4. Հորիզոնի կողմերը | **1** |
| 5. Տեղանքի պլան | **1** |
| 6. Իրադարձությունների սահմանում ժամանակի մեջ | **1** |
| 7. Թվարկություն | **1** |
| 8. Ինչպես հետազոտենք | |
| ԲԱԺԻՆ 1. ՔԱՐԹԼԻ | |
| 1.1. Քարթլի՝ Վրաստանի աշխարհագրական կենտրոն | **1** |
| 1.2. Քարթլի՝ Վրաստանի քաղաքական կենտրոն | **1** |
| 1.3. Քարթլին և նրա հարևան երկրամասերը | **1** |
| 1.4. Քարթլիի բերդ-ամրոցները | **1** |
| 1.5. Բազմազգ Քարթլին | **1** |
| 1.6. Բնակավայրերի տեսակները Քարթլիում | **1** |
| 1.7. Տնտեսության բնագավառները Քարթլիում | **1** |
| 1.8. Փոխադարձ օգնության ավանդույթը | **1** |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | |
| ԲԱԺԻՆ 2. ԻՄԵՐԵԹԻ | |
| 2.1. Իմերեթիի աշխարհագրական դիրքը և բնությունը | **1** |
| 2.2. Բնակավայրերի տեսակներն Իմերեթիում | **1** |
| 2.3. Իմերեթցիների տնտեսական գործունեությունը | **1** |
| 2.4. Մշակութային հուշարձանները Իմերեթիում | **1** |
| 2.5. Ամենօրյա կյանքն Իմերեթիում | **2** |
| 2.6. Իմերեթիի քաղաքները | **1** |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | |

| Դասի վերնագիրը | (II).1 |
|---|---|
| ԲԱԺԻՆ 3. ՍԱՄԵԳՐԵԼՈ | |
| 3.1. Սամեգրելոյի աշխարհագրական դիրքը և բնությունը | 1 |
| 3.2. Սամեգրելոն անցյալում և ներկայում | 1 |
| 3.3. Մշակութային և պատմական ժառանգությունը Սամեգրելոյում | 1 |
| 3.4. Բնակելի կառույցները և բնակավայրերը Սամեգրելոյում հնում | 2 |
| 3.5. Տնտեսության բնագավառները Սամեգրելոյում | 1 |
| 3.6. Մեգրելական ավանդույթները | 1 |
| 3.7. Սամեգրելոն Վրաստանի ազատության և միասնականության պահապան | 1 |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | |
| ԲԱԺԻՆ 4. ՍՎԱՆԵԹԻ | |
| 4.1. Սվանեթիի աշխարհագրական դիրքը | 1 |
| 4.2. Բնակեցման տեսակը և բնակելի տունը Սվանեթիում | 1 |
| 4.3. Լեռներում փոխադրամիջոցները և վտանգները | 1 |
| 4.4. Տարերային երևույթները Սվանեթիում | 1 |
| 4.5. Սվանական առասպելները և որսի ավանդույթը | 1 |
| 4.6. Տնտեսության բնագավառները Սվանեթիում | 1 |
| 4.7. Սվանեթին Վրաստանի գանձերի պահոց | 2 |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | |
| ԲԱԺԻՆ 5. ԱՋԱՐԻԱ | |
| 5.1. Աջարիայի աշխարհագրական դիրքը և տեսարժան վայրերը | 1 |
| 5.2. Աջարական տունը, տնամերձը և բնակեցման տեսակները | 1 |
| 5.3. Աջարական հյուրընկալությունը | 1 |
| 5.4. Աջարների տնտեսական գործունեությունը | 1 |
| 5.5. Կրոնը Աջարիայում | 2 |
| 5.6. Աջարիան վրացական արհեստագործության կենտրոններից մեկը | 1 |
| 5.7. Աջարական ժողովրդական բանահյուսությունը | 1 |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | |

# 9. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ՝ ԽՈՐԱԳՐԵՐ

| Բարձր | Միջինից բարձր | Միջին | Ցածր |
|---|---|---|---|
| Աշակերտը լրացնում է դիագրամ, աղյուսակներ և անում եզրակացություններ: | Աշակերտը փորձում է լրացնել դիագրամ, աղյուսակներ և անել եզրակացություններ: | Աշակերտը կարիք ունի օգնության՝ դիագրամ, աղյուսակներ լրացնելու և եզրակացություններ անելու մեջ: | Աշակերտը չի կարող լրացնել դիագրամ, աղյուսակներ և անել եզրակացություններ: |
| Աշակերտը գնահատում է իրադարձությունները, գիտակցում անցյալի իրականությունը և այն կապում արդիականության հետ: | Աշակերտը փորձում է գնահատել իրադարձությունները, գիտակցել անցյալի իրականությունը և այն կապել արդիականության հետ: | Աշակերտն օգնության կարիք ունի՝ իրադարձությունները գնահատելու, անցյալի իրականությունը գիտակցելու և այն արդիականության հետ կապելու հարցում: | Աշակերտը չի կարող գնահատել իրադարձությունները, գիտակցել անցյալի իրականությունը և այն կապել արդիականության հետ: |
| Աշակերտը վերլուծում է այս կամ այն իրադարձությունները հարուցող պատճառներն ու հետևանքները: | Աշակերտը փորձում է վերլուծել այս կամ այն իրադարձությունները հարուցող պատճառներն ու հետևանքները: | Աշակերտը կարիք ունի օգնության՝ այս կամ այն իրադարձությունները հարուցող պատճառներն ու հետևանքները վերլուծելու հարցում: | Աշակերտը չի կարող վերլուծել այս կամ այն իրադարձությունները հարուցող պատճառներն ու հետևանքները: |
| Աշակերտը զուգահեռներ է անցկացնում: | Աշակերտը փորձում է զուգահեռներ անցկացնել: | Աշակերտն օգնության կարիք ունի՝ զուգահեռներ անցկացնելու մեջ: | Աշակերտը չի կարող զուգահեռներ անցկացնել: |
| Աշակերտն արտահայտում է իր վերաբերմունքը և առաջարկում խնդրի լուծման այլընտրանքային ուղի: | Աշակերտը փորձում է արտահայտել իր վերաբերմունքը և առաջարկել խնդրի լուծման այլընտրանքային ուղի: | Աշակերտն օգնության կարիք ունի իր վերաբերմունքը արտահայտելու և խնդրի լուծման այլընտրանքային ուղի առաջարկելու հարցում: | Աշակերտը չի կարող արտահայտել իր վերաբերմունքը և առաջարկել խնդրի լուծման այլընտրանքային ուղի: |

## Գնահատման 10 միավորանոց համակարգ

| Միավորներ | Բնութագրիչներ |
|---|---|
| 1 | Չի կարող փոխանցել կարդացածի բովանդակությունը: Չի կարողանում աշխատել քարտեզի վրա: Չի կարող աշխատել աղյուսակների և այլ միջոցների վրա: Իրարից չի կարող տարբերել պատմական և աշխարհագրական ժամանակի միավորները: Դժվարանում է դատողություն անել պատմական անձանց մասին, չի կարող ուրիշի հետ համագործակցել: |
| 2 | Չի կարող փոխանցել բովանդակությունը: Դժվարանում է աշխատել քարտեզների և այլ վիզուալ միջոցների վրա (սխեմա, աղյուսակ և այլն): Դժվարանում է տարանջատել պատմական և աշխարհագրական ժամանակաշրջանները: Դժվարանում է բնութագրել հերոսներին և նրանց մասին դատողություն անել: Դժվարանում է համագործակցել: |
| 3 | Դժվարանում է փոխանցել կարդացածի բովանդակությունը: Առանց ուրիշների օգնության չի կարողանում աշխատել քարտեզների վրա: Դժվարանում է աշխատել աղյուսակների և սխեմաների վրա: Դժվարանում է դատողություն անել և միտքը ձևակերպել: Դժվարանում է զույգերով և խմբով աշխատել`չի կարող իր ներդրումն ունենալ: |
| 4 | Կարող է փոխանցել կարդացածի բովանդակությունը, սակայն նրան անհրաժեշտ է օգնություն` միտքը հասկանալի ձևակերպելու համար: Կարող է քարտեզի վրա ցույց տալ օբյեկտներ, սակայն թերություններով: Դժվարանում է դատողություն անել և որևէ մեկի կամ որևէ բան բնութագրել: Զույգով կամ խմբով աշխատելու ժամանակ կարող է ընդունել ուրիշի օգնությունը: |
| 5 | Հաճախ ինքնուրույն աշխատելու ցանկություն ունի: Կարող է հասկանալ կարդացածի բովանդակությունը: Կարողանում է գիտելիքն օգտագործել տարբեր իրավիճակներում: Թերություններով, սակայն կարող է վիզուալ միջոցների` քարտեզների, նկարազարդումների, դիագրամների վրա աշխատել: Կարող է համագործակցել, սակայն երբեմն ավելորդ ակտիվություն է ցուցաբերում և ինքնավստահ է: |
| 6 | Կարող է ինքնուրույն աշխատել տարբեր միջոցների և աղբյուրների վրա: Կարող է դատողություն անել, վերլուծել, ինչպես նաև` խմբով աշխատել: Թերություններ ունի` կապված բառապաշարի և տրամաբանական մտածողության հետ: |
| 7 | Համարյա միշտ տիրապետում է նյութին: Ինքնուրույն կարող է աշխատել կարդալու, գրելու և այլ ակտիվությունների վրա: Կարող է աշխատել տեղեկատվության տարբեր աղբյուրների վրա: |
| 8 | Ունի լավ խոսք: Կարող է սահուն ձևակերպել միտքը:Կարող է դատողություն անել փաստերի և իրադարձությունների մասին: Կարող է ինքնուրույն աշխատել: Ակտիվ է տնային և դասարանական աշխատանքների կատարման մեջ: Ազատ կարող է աշխատել քարտեզների վրա: Կարող է համագործակցել, սակայն երբեմն դժվարանում է ընդունել ուրիշի կարծիքը: |
| 9 | Լավ է մտածում: Ունի ստեղծագործական աշխատանքի կարողություն: Միշտ պատրաստ է ինքնուրույն ներգրավվել ցանկացած աշխատանքի կատարման մեջ: Կարող է համագործակցել, սակայն չունի առաջնորդի հատկություններ: |
| 10 | Լավ է մտածում: Ունի ստեղծագործական աշխատանքի կարողություն: Միշտ պատրաստ է աշխատելու համար: Ունի առաջնորդի առանձնահատուկ հատկանիշներ: Կարող է օգնել ուրիշի: |

## Շնորհանդեսի գնահատման աղյուսակ՝ խորագիր

Աշակերտներին յուրաքանչյուր չափանիշից շնորհվում է զրո կամ մեկ միավոր և վերջնական միավորը ստանալու համար հաշվվում է դրանց գումարը: Առավելագույն միավորն է տասը:

| | Աշակերտի անունը, ազգանունը | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հետաքրքիր ներածություն (խնդրի նույնականացում) | | | | | | | | | | |
| Հետազոտությունների/աշխատության ներկայացման կարողություն | | | | | | | | | | |
| Ստեղծագործական հմտություն | | | | | | | | | | |
| Խնդրի լուծման ուղիների առաջարկում | | | | | | | | | | |
| Թեմայի հասկանալի ներկայացում (տրամաբանական շղթա) | | | | | | | | | | |
| Խոսք (հստակություն, տեմբր) | | | | | | | | | | |
| Դիդակտիկ նյութերի օգտագործում | | | | | | | | | | |
| Հաղորդակցություն լսարանի հետ | | | | | | | | | | |
| Տեղեկությունների տիրապետման կարողություն (adեկվատ հարց-պատասխան) | | | | | | | | | | |
| Ժամանակի սահմանաչափի պահպանում | | | | | | | | | | |
| Գումարը | | | | | | | | | | |

## Նախագծի գնահատման ընդհանրացված աղյուսակ՝ խորագիր

Առավելագույն ընդհանուր գումարը երեքի բաժանելով տեղի կունենա կուտակած միավորների տեղափոխում տասը միավորանոց գնահատման համակարգ

| | **Տարրական՝ 1 միավոր** | **Ընդունելի՝ 2 միավոր** | **Վարպետ՝ 3 միավոր** |
|---|---|---|---|
| **1.Նպատակ** | Լավ չի ընդգծված, հստակ չէ: | Կենտրոնացված է մեկ նպատակի վրա: | Լավ ընդգծված նպատակներ, պարզ հեշտորեն ընկալելի: |
| **2.Կազմակերպում** | Թույլ կազմակերպված, գաղափարների միջև չկա տրամաբանական շղթա, ինչը շփոթեցնում է ընթերցողին/ունկնդրին: | Գիտակցված է հաջորդականությունը, կազմակերպման նշաններով, որոշ անցումներ գաղափարների միջև պարզ են, որոշ անցումներ՝ անհասկանալի: | Լավ կազմակերպված ձևաչափ, տրամաբանական անցում մի գաղափարից մյուսին, կազմակերպվածությունն ավելացնում է նախագծի արդյունավետությունը: |
| **3.Բովանդա-կության կոռեկտություն** | Հաճախ են հանդիպում անհամապա-տասխանություն, սխալ տեղեկություններ: | Հիմնականում կոռեկտ է՝ որոշ անհամապատասխան կամ սխալ տեղեկատվությամբ: | Ամբողջովին կոռեկտ, փաստերը ճշգրիտ և հստակ: |
| **4.Լեզվական հստակություն** | Լեզվական առումով ոչ հստակ, հաճախակի սխալներով: | Լեզվական առումով հստակ, աննշան սխալներով: | Լեզվական առումով հստակ, պահպանված են կետադրության կանոնները: |

| | Տարրական՝ 1 միավոր | Ընդունելի՝ 2 միավոր | Վարպետ՝ 3 միավոր |
|---|---|---|---|
| **5. Հետազոտու-թյուն** | Հետազոտությունը ոչ հստակ է պլանավորած, օգտագործած աղբյուրները վստահելի չեն, վերլուծությունը մակերեսային է: | Հետազոտությունը պլանավորած է, սակայն խմբի ներուժն ամբողջությամբ չի օգտագործած, սահմանափակ քանակությամբ աղբյուրներ են օգտագործած, վերլուծությունն ընդունելի է: | Հետազոտությունը պլանավորած է, օգտագործած են բազմաթիվ աղբյուրներ, և վերլուծությունը խորն է: |
| **6.Դիդակտիկ նյութեր** | Դիդակտիկ նյութերը հաճախ բովանդակությանն անհամապատասխան են կամ խմբի կողմից չեն ստեղծված: | Դիդակտիկ նյութերի կապը բովանդակության հետ հստակ է, սակայն միապաղաղ է: | Բազմազան, բովանդակությանը համապատասխան, կոկիկ կատարած: |
| **7.Ստեղծագործա-կանություն** | Փոքր ստեղծագործական ջանք խմբի կողմից: | Երբեմն երևում են խմբի օրիգինալ մտքերը, ինչն օգնում է նախագծի ավելի լավ ցուցադրմանը: | Երբեմն երևում են խմբի օրիգինալ մտքերը, նորությունը և յուրովի տեսլականը, ինչը նախագիծը հետաքրքիր է դարձնում: |
| **8.Միջառարկա-յական կապ** | Չի երևում խմբի տեղեկացվածությունը առարկաներից, հանդիպում ենք փաստերի ոչ ճշգրիտ մեկնաբանությունների: | Տեսակետները կապված են մեկ կամ երկու առարկայից ստացած գիտելիքի հետ: | Գլխավոր տեսակետները կապվում են տարբեր առարկաներից ստացած գիտելիքի հետ, ինչը մատնանշում է բազմաթիվ ուղղություններով խմբի տեղեկացված լինելը: |
| **9. Եզրակա-ցություններ** | Եզրակացությունները չեն ձևակերպված: | Եզրակացությունները ձևակերպված են հետազոտությանը համապատասխան, սակայն հստակ չեն: | Եզրակացությունները նորույթ են (օրիգինալություն), զգացվում է տրամաբանական կապը հետազոտության հետ, դրանք հստակ են ձևակերպված: |
| **10. Շնորհանդես** | Արդյունավետորեն չի ներկայացված նախագծի էությունը, դժվարանում է միտքը ձևակերպել և պատասխաններ տալ, նպատակային չեն կիրառված դիդակտիկ նյութերը: | Ոչ հստակ է ձևակերպում նախագծի էությունը, կիրառում է դիդակտիկ նյութեր, պատասխանում է հարցերի մեծ մասին: | Հստակ է ձևակերպված նախագծի էությունը, խոսքը պարզ է՝ լսարանին հաշվարկված, բացված են հիմնական գաղափարները, կիրառում է դիդակտիկ նյութերը և պատասխանում բոլոր հարցերին: |

## Բանավեճի գնահատման աղյուսակ՝ խորագիր

| 1-3 | 4-5 | 6-7 | 8-10 |
|---|---|---|---|
| Աշակերտը դժվարանում է միտքն արտահայտել, ոչ համոզիչ է դատողություն անում: Շփոթված է և անկազմակերպ է խոսում: Հատկացված ժամանակից շուտ է ավարտում: | Փաստարկումներն անբավարար են: Հակադրվում է հակառակորդի դիրքորոշմանը, սակայն մակերեսորեն և կատարում է անկազմակերպ վերլուծություն: Փաստարկումը համոզիչ չէ: | Լավ ելույթ: Փաստարկումը բավարար է: Զեկուցողը լրիվ օգտագործում է ժամանակը, սակայն թերանում է համոզիչ լինելու հարցում: | Շատ լավ ելույթ: Համոզիչ փաստարկում: Վերլուծությունը, շնորհանդեսը, փաստարկները համոզիչ են: |

## Խմբային աշխատանքի գնահատման աղյուսակ՝ խորագիր

| Չափանիշ | Բարձր՝ 4 | Միջին՝ 3 | Միջինից ցածր՝ 2 | Ցածր՝ 1 |
|---|---|---|---|---|
| Խմբի կողմից նպատակի գիտակցում | Խումբը լավ է գիտակցել աշխատանքի նպատակը: | Խումբը գիտակցել է աշխատանքի նպատակը: | Խումբը մասամբ է գիտակցել աշխատանքի նպատակը: | Խումբը չի կարողացել գիտակցել աշխատանքի նպատակը: |
| Աշխատանքի կազմակերպում | Աշխատանքը լավ է կազմակերպված, խմբի անդամների միջև աշխատանքը ճիշտ է բաշխված: | Աշխատանքը լավ է կազմակերպված, սակայն խմբի անդամների միջև աշխատանքը անհամաչափ է բաշխված: | Աշխատանքը մասամբ է կազմակերպված, խմբի անդամների միջև աշխատանքը անհամաչափ է բաշխված: | Աշխատանքը կազմակերպված չէ, խմբի անդամների միջև աշխատանքը չի բաշխվել: |
| Փոխգործակ-ցության և մտքերի փոխանակման կարողություն | Ունեն լավագույն փոխգործակցության և կարծիքների փոխանակման կարողություն: | Ունեն լավ փոխգործակցության և կարծիքների փոխանակման կարողություն: | Մասամբ ունեն լավ փոխգործակցության և կարծիքների փոխանակման կարողություն: | Չունեն լսելու և կարծիքների փոխանակման կարողություն: |
| Համագործակ-ցություն | Խմբի բոլոր անդամներն ակտիվ էին, խմբի անդամների միջև դրական և գործնական հարաբերություններ էին: | Խմբի համարյա բոլոր անդամներն ակտիվ էին, խմբի անդամների միջև դրական և գործնական հարաբերություններ էին: | Խմբի մեծ մասը ակտիվ չէր, խմբի անդամների միջև հիմնականում պակաս էին դրական և գործնական հարաբերու-թյունները: | Խմբի մեծ մասը ակտիվ չէր, խմբի անդամների միջև չկային գործնական հարաբերու-թյուններ: |
| Ժամանակի սահմանաչափ | Լավագույնս պահպանում են ժամանակի սահմանաչափը: | Հիմնականում պահպանում են ժամանակի սահմանաչափը: | Դժվարանում են պահպանել ժամանակի սահմանաչափը: | Չեն կարող պահպանել ժամանակի սահմանաչափը: |

# 10. ԴԱՍԻ ՍՑԵՆԱՐՆԵՐ

Դասի տրված սցենարները ուսուցիչը կարող է հարմարեցնել աշակերտների հնարավորություններին և կարիքներին և անհրաժեշտության դեպքում՝ ձևափոխել դասի պլանը:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

| **Դասի թեման** | **2. Ինչն է մեզ օգնում ուսումնասիրել մեր հայրենիքի երկրամասերը** |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը կարողանա գիտակցել գիտության բնագավառների նշանակությունը այս կամ այն երկրամասի բնական, սոցիալ-մշակութային բնութագրիչների ուսումնասիրման մեջ, պատմական իրադարձությունները կապել պատմական ժառանգության հետ: |
| **Համապատաս-խանությունը ԱՈՒՊ-ին** | Հաս.գիտ.(II) 2, Հաս.գիտ.(II) 3, Հաս.գիտ.(II) 6 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Մտավոր գրոհ. Ի՞նչը կօգնի մեզ մեր երկրի երկրամասերի ուսումնասիրման մեջ (ենթադրյալ պատասխաններ՝ գրառումները, հնագիտական նյութը, ավանդույթները, երգերը, ճաշատեսակները և այլն): (5 րոպե)<br><br>**Ակտիվություն 2.** Մինի դասախոսություն պատմության, աշխարհագրության, ազգագրության, հնագիտության մասին: Ուսուցիչը տեղեկություններ է տրամադրում, թե գիտության այս բնագավառները ինչպես կարող են օգնել ուսումնասիրել մեր հայրենիքի երկրամասերը: (5 րոպե)<br><br>**Ակտիվություն 3.** Աշխատանք աշխատանքային թերթիկների վրա<br><br>Աշակերտներին բաժանվում են աշխատանքային թերթեր (տե՛ս՝ աշխատանքային թերթ), որտեղ տրված է տարբեր մասնագիտությունների ցանկ: Աշակերտները պետք է ընտրեն այն մասնագիտությունները, որոնց ներկայացուցիչները, ըստ նրանց, մասնակցում են հնագիտական գիտարշավների աշխատանքներին: Բացատրեք, որ այս կամ այն իրի հայտնագործման, մշակման և ուսումնասիրման գործընթացին միայն հնագետներ չեն մասնակցում: (20 րոպե)<br><br>**Ակտիվություն 4.** Կատարած աշխատանքի շնորհանդես (7 րոպե)<br><br>**Ակտիվություն 5.** Գնահատում (2 րոպե) |
| **Գնահատումը** | Զարգացնող |
| **Ռեսուրսներ** | Գրատախտակ, կավիճ, դասագիրք, գրելու թղթեր |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը |

**Աշխատանքային թերթ 1**

Բուսաբան (ուսումնասիրում է բույսերը)

Հնագետ

Երկրաբան

Նկարիչ

Ռեստավրատոր

Կենդանաբան (ուսումնասիրում է կենդանիներին)

Լուսանկարիչ

Լրագրող

Մարդաբան (հետազոտում է մարդկային կմախքները)

Դիզայներ

Բժիշկ

**Աշխատանքային թերթ 2**

Հնագիտական գիտարշավի կազմը

| Դասի թեման | **6. Իրադարձությունների սահմանում ժամանակի մեջ** |
|---|---|
| **Դասի նպատակը** | Ծանոթանան ժամանակը սահմանող համակարգերին, գիտակցեն իրադարձությունների հաջորդականության պահպանման նշանակությունը, կարողանան ժամանակային գծի վրա նշել կարևոր իրադարձությունները: |
| **Համապատասխանությունը ԱՈՒՊ-ին** | Հաս.գիտ.(II) 1 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.**<br>Աղբյուր **1**. Կոտրած աթոռ: Առաջադրանքի նպատակն է այն է, որ աշակերտը հասկանա, թե ինչ նշանակություն ունի իրադարձությունների հաջորդականության պահպանումը՝ դրանց պատճառները պարզելիս: Աշակերտները զույգերում նկարագրեն աղբյուրը: Այնուհետև տրված չորս նկարների հաջորդականությունն այնպես փոխեն, որ ստանան երկու տարբեր պատմություն: Օրինակ՝ լսվեց շխկոց, դեռ տղան ներս նայեց, տեսավ վայր ընկած աթոռը, այնուհետև դուռը բացեց աղջիկը:<br>Կամ՝ աղջիկը բացեց դուռը, աթոռն ընկավ, լսվեց թխկոց, այս աղմուկից հետո ներս նայեց տղան: (10 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Կատարած առաջադրանքը ներկայացնեն դասարանին: (5 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Ուսուցիչը մինի-դասախոսության տեսքով, աշակերտներին բացատրում է, թե ինչ է իրենից ներկայացնում օրացույցը, ինչ է ուսումնասիրում ժամանակագրությունը, ինչ նշանակություն ունի ժամանակային գիծը, ինչ սկզբունքով կարելի է դասավորել իրադարձությունները ժամանակային գծի վրա: (5 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Կազմել ժամանակային գիծ: Աշակերտներն իրենց կյանքի նշանակալի իրադարձությունները դեռ ներկայացնեն աղյուսակի տեսքով (տե՛ս՝ աղյուսակ), այնուհետև այդ իրադարձությունները տեղադրեն ժամանակային գծի վրա՝ հորիզոնական կամ ուղղահայաց: (15 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում |
| **Գնահատումը** | Ընթացիկ առաջադրանքի գնահատման աղյուսակ՝ խորագիր (տե՛ս՝ խորագիր) |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, աղյուսակներ |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը, զույգեր |

**Երաշխավորություն.** Լավ կլինի, որ աշակերտներին հանձնարարեք մեծ ֆորմատի թղթի վրա նշել նախորդ երկու տարվա ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները: Դա հնարավորություն կտա ուսումնական դասընթացի վերջում ամբողջ ժամանակագրությունը ներկայացնել ամբողջական տեսքով: Այս կամ այն իրադարձության նկատմամբ սեփական վերաբերմունքի արտահայտման համար կարող են օգտագործել սմայլիկներ (տխուր կամ ուրախ):

Ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր.

| **Բարձր** | **Միջինից բարձր** | **Միջին** | **Ցածր** |
|---|---|---|---|
| Աշակերտը կարող է փաստերն ու իրադարձությունները գիտակցել ժամանակագրական կտրվածքում: | Աշակերտը փորձում է փաստերն ու իրադարձությունները գիտակցել ժամանակագրական կտրվածքում: | Աշակերտը օգնության կարիք ունի՝ փաստերն ու իրադարձությունները ժամանակագրական կտրվածքում գիտակցելու հարցում: | Աշակերտը չի կարող փաստերն ու իրադարձությունները գիտակցել ժամանակագրական կտրվածքում: |
| Աշակերտը կազմում է ժամանակային գիծ: | Աշակերտը փորձում է կազմել ժամանակային գիծ: | Աշակերտը օգնության կարիք ունի՝ ժամանակային գիծ կազմելու հարցում: | Աշակերտը չի կարող կազմել ժամանակային գիծ: |

Աշխատանքային թերթ «Ժամանակային գիծ» առաջադրանքի համար

| Ամսաթիվ, ամիս, տարեթիվ | Իրադարձություն իմ կյանքից |
|---|---|
| | |
| | |

| Դասի թեման | 7. Թվարկություն |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը ծանոթանա թվարկության համակարգերին, գիտակցի փաստերը և իրադարձությունները ժամանակագրական կտրվածքում: Գիտակցի անախրոնիզմի (ժամանակավրիպում) նշանակությունը: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | Հաս.գիտ.(II) 1 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Մինի դասախոսություն թվարկության համակարգերի մասին: (10 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Առաջադրանք 1-ի և Առաջադրանք 2-ի կատարում: (10 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Ուսուցիչն աշակերտներին բացատրում է ժամանակավրիպման (անախրոնիզմի) նշանակությունը և խնդրում է կատարել Առաջադրանք 4-ը:<br>Առաջադրանք. Ասպետը՝ համակարգչի մոտ: Աշակերտը պետք է որոշի անհամապատասխանությունը:<br>Բացատրեք աշակերտներին, որ ասպետը այն կոչման ներկայացուցիչ էր, որն առաջացել է Եվրոպայում XI դարի սկզբին: Ասպետը գալիս էր ազնվական մարտիկների հասարակությունից, ում համար առաջնայինը Աստծուն ծառայելն ու արժանապատվության պաշտպանությունն են եղել: Պայքարելու համար զինված ասպետի ամբողջ մարմինը զրահապատ էր: Մինչև XI դարերի վերջը դա երկաթյա օղակներով հյուսած շղթայից շապիկ էր: Ավելի ուշ դա փոխարինվում է մետաղյա թիթեղներից պատրաստած զրահով: Ճակատամարտի ժամանակ ասպետը գլխին կրում էր երկաթյա սաղավարտ, կոնաձև գլխանոց: Սաղավարտն ուներ քիթը պաշտպանելու համար հատկացված մետաղյա թիթեղ: Ասպետի մարտական զենքը ծանր սուրն ու երկար նիզակն էին՝ ռոմբաձև երկաթյա ծայրակալով: Ասպետի զենք ու զրահի անբաժան մասն էր կազմում փայտից և կաշվից պատրաստված վահանը, որը պատած էր մետաղյա թիթեղներով: Սկզբից վահանը կլոր էր, իսկ հետագայում այնպես երկարեցվեց, որ ամբողջությամբ ծածկում էր մարտիկին: Այսպիսով, ասպետը կենդանի բերդ-ամրոցի էր նմանվում:<br>Իսկ համակարգչային համակարգերի ստեղծումը սկսվեց XX դարում: Այնպես որ, զինված ասպետը համակարգչի մոտ՝ ժամանակավրիպում է: (10 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Աշակերտները մտածեն ժամանակավրիպման օրինակներ (Առաջադրանք 3-ի օրինակով): (5 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում |
| **Գնահատումը** | Զարգացնող |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, տետր, գրատախտակ, կավիճ |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը |

## Լրացուցիչ տեղեկություններ

Առաջադրանք մշակութային ժառանգության մասին: Աշակերտներին մեկ անգամ ևս հիշեցրեք, որ մշակութային ժառանգությունը նախորդ սերունդների կողմից ստեղծված հոգևոր և նյութական մշակույթի այն մասն է, որը հասարակության զարգացման գործընթացում հաստատել է, պահպանել կամ վերականգնել արժեքի նշանակությունը և փոխանցվում է սերնդից սերունդ:

Մշակութային ժառանգության կարգավիճակ կարող է շնորհվել հարյուր կամ ավել տարի առաջ ստեղծված հնաոճ իրին, որը մշակութապես արժեքավոր առարկա է հանդիսանում, ինչպես օրինակ՝ հնագիտական հուշարձանը, հնագիտական գոտին, պահպանման գոտիների համակարգը, պատմական բնակավայրը (քաղաք, ավան, գյուղ կամ բնակատեղի), ճարտարապետական հուշարձանը (քաղաքացիական, պաշտամունքային, պաշտպանական, տնտեսական կամ այլ շենքեր կամ դրանց մասերը), մոնումենտալ արվեստի հուշարձանները (որմնանկար, ռելիեֆ, քանդակ, գերեզմանաքար):

Մշակութային ժառանգության հուշարձանները բաժանվում են մի քանի կարգերի.

ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակի մեջ ընդգրկված հուշարձան

Ազգային նշանակության հուշարձան

Տեղական նշանակության հուշարձան

«Իմ երկրամասի հուշարձանները» նախագծի համար աշակերտներին բաժանե՛ք փոքր խմբերի: Ներկայացրե՛ք առաջադրանքի պահանջը և այն հարցերը, որոնք պետք է շոշափեն շնորհանդեսը պատրաստելու ընթացքում: Օրինակ՝ հուշարձանի գտնվելու վայրը, նրա ստեղծման պատմությունը, առասպելներ և բանավոր ավանդազրույցներ, ներկայիս վիճակը, այնտեղ հասնելու երթուղին, օգտագործված նյութը: Աշակերտների համար տեղեկատվության միջոց կարող են լինել. գրադարանը, ուսուցիչը, էլեկտրոնային ռեսուրսները, օժանդակ գրականությունը, տպագիր միջոցները, հարցախույզը: Առաջադրանքը կգնահատվի 10 միավորով: Աշակերտներին նախապես պետք է ծանոթացնեք գնահատման խորագիրը և չափանիշները:

**«Իմ երկրամասի հուշարձանները» թեմայով շնորհանդեսի գնահատման խորագիր**

| Գնահատման չափանիշներ | Միավորներ |
|---|---|
| **Խմբի կողմից աշխատանքի նպատակի գիտակցում**<br>Խումբը լավ է հասկացել աշխատանքի նպատակը – 2<br>Խումբը մասնակիորեն է հասկացել աշխատանքի նպատակը – 1<br>Խումբը չի հասկացել աշխատանքի նպատակը – 0 | 2 |
| **Աշխատանքի կազմակերպում**<br>Աշխատանքը լավ կազմակերպված է, խմբի անդամների միջև աշխատանքը ճիշտ է բաժանվել – 2<br>Աշխատանքը մասնակիորեն է կազմակերպված, խմբի անդամների միջև գործառույթները անհավասարաչափ են բաշխվել -1<br>Աշխատանքը կազմակերպված չէ, խմբի անդամների միջև գործառույթները չեն բաշխվել – 0 | 2 |
| **Ժամանակի սահմանաչափը**<br>Պահպանում է ժամանակի սահմանաչափը – 2<br>Դժվարանում են պահպանել ժամանակի սահմանաչափը -1<br>Չեն կարող պահպանել ժամանակի սահմանաչափը – 0 | 2 |
| **Թեման հասկանալի է ներկայացված:** | 1 |
| Բովանդակությունը կոռեկտ է, փաստերը ճշգրիտ են և հստակ, օգտագործվում են տեսողական նյութեր – 3<br>Բովանդակությունը հիմնականում կոռեկտ է, օգտագործված են տեսողական նյութեր, սակայն հանդիպում են որոշ անհամապատասխան տեղեկություններ – 2<br>Բովանդակությունն անհամապատասխան է և հաճախ հանդիպում ենք սխալ տեղեկությունների, տեսողական նյութը սակավ է -1<br>Բովանդակությունը անհամապատասխան է, տեսողական նյութեր չեն օգտագործված – 0 | 3 |

**Խորագիր. Անհատը պատմության մեջ**

Վրաց հնագիտության զարգացման մեջ մեծ ներդրում ունի Էքվթիմե Թաղաիշվիլին: Նա ղեկավարում էր Պատմա-ազգագրական ընկերությունը և ամեն ջանք գործադրում, որ Վրաստանի տարածքում հայտնաբերված իրերը հավաքեր և թանգարանին փոխանցեր: Նրա ղեկավարությամբ կազմակերպվել են բազմաթիվ հնագիտական գիտարշավներ, այդ թվում՝ Լեչխումիում, Սվանեթիում, մասնակցել է նաև Վանիի պեղումներին: Նա տարիներ շարունակ եղել է Վրաստանի գանձարանի պահապանը, ինչի համար նրան անվանել են Վրաստանի «մեճուրճլեթուխուցեսի» (հին Վրաստանում անձ, ով տնօրինում էր արքունիքի գանձարանը, տնտեսությունը, հին Հայաստանում՝ հազարապետ): Ասում են, որ գանձարանի «էմիգրացիայի» ժամանակ «Բրիտանական թանգարանը» խնդրել է Ախալգորիի գանձարանից մեկ իր վաճառել իրենց: Փոխարենը, խոստացել էր, որ մյուս իրերի պաշտպանության համար պահանջվող գումարը կհատկացնի և նաև ալբոմներ կհրատարակի: Էքվթիմեն խափանել է այդ բանակցությունները:

**Խորագիր. Սա հետաքրքիր է**

Համաշխարհային նշանակության հուշարձան Ձուձուանայի քարանձավը գտնվում է Ճիաթուրայի մունիցիպալիտետի Մղվիմևի գյուղի տարածքում: Եթե նախկինում Չեխիայի հայտնագործություններով համարվում էր, որ հնագույն գործվածքը մարդը պատրաստել է 29 հազար տարի առաջ, համաձայն Ճիաթուրայի պեղումների, այն 34 հազար տարի առաջ է պատրաստվել: Ձուձուանայի քարանձավում գիտնականների խումբը աշխատում է 1996 թվականից, բացի վրացիներից, աշխատանքներում ներգրավված են նաև ամերիկացի և իրեա մասնագետներ:

# ԲԱԺԻՆ 1. ՔԱՐԹԼԻ

| Դասի թեման | 1.1. Քարթլի՝ Վրաստանի աշխարհագրական կենտրոն |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը կարողանա պայմանական նշանների միջոցով կարդալ քարտեզի վրա տեղ գտած տեղեկությունները, որոշել Քարթլիի աշխարհագրական դիրքը, դրսևորել սպառողական և տնտեսական հմտություններ և կարողություններ, որոշել, թե ինչու է Քարթլին համարվում Վրաստանի աշխարհագրական կենտրոն: |
| Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին | (II)1 (II) 14 (II) 18 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Ուսուցիչը խնդրում է աշակերտներին Վրաստանի պատմա-ազգագրական երկրամասերի քարտեզի (էջ 8-9) և Քարթլիի քարտեզի (էջ 26-27), ինչպես նաև Աղբյուր 1-ի միջոցով որոշել, թե ինչ տեղ է զբաղեցնում Քարթլին և որ երկրամասերին է այն սահմանակցում՝ ըստ հորիզոնի կողմերի: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Ըստ Վրաստանի ֆիզիկական քարտեզի (էջ 6-7)՝ կատարել դասագրքում տրված առաջադրանքները և պատասխանել Աղբյուր 2-ի հարցերին (10 րոպե): Աշակերտները քարտեզի միջոցով տեղեկություններ կստանան Քարթլիի բնական-աշխարհագրական բնութագրիչների մասին: (10 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Մինի-դասախոսություն. Ուսուցիչը խոսում է Քարթլիով անցնող երկաթուղային և ավտոմոբիլային մայրուղիների մասին: (5 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Աղբյուր 3-ի վերլուծում. Նկարագրեն նկարը՝ ի՞նչ է պատկերված: Քննարկեն, թե ինչ օգուտ կարող է բերել նավթատարը, որքանով անվտանգ կարող է լինել դա երկրի համար, որ երկրներով է անցնում տվյալ նավթատարը: (10 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում (ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր): (5 րոպե)<br>**Ակտիվություն 6.** Տնային առաջադրանք. Գրեն փոքր շարադրություն. Աշխարհագրական դիրքի ազդեցությունը երկրի տնտեսության զարգացման վրա: |
| Գնահատումը | Որոշող (ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր) |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը, անհատական |
| Ունեցած գիտելիքը | 4-րդ դասարանի բնության դասընթացից, ինչպես նաև տվյալ դասագրքի ներածական դասից սովորել են քարտեզը և աշխարհագրական օբյեկտները: |

Դասը սկսեք քարտեզի վերլուծությամբ, ինչը կօգնի աշակերտներին որոշել Քարթլիի՝ որպես Վրաստանի կենտրոնական պատմա-ազգագրական երկրամասի դիրքը և սահմանակից երկրամասերն՝ ըստ հորիզոնի ուղղությունների (արևելքից՝ Կախեթի, արևմուտքից՝ Իմերեթիի, հարավից՝ Սամցխե-Ջավախեթի): Հետևյալ գործունեությունը կօգնի ձեզ ստուգել, թե որքան լավ են հասկացել քարտեզի ընթերցումը պայմանական նշանների միջոցով: Աշակերտները կստանան տեղեկատվություն Քարթլիի բնական-աշխարհագրական առանձնահատկությունների մասին, որոնք պետք կգան նաև հաջորդ դասերին:

Մինի դասախոսության ընթացքում խոսեք այն մասին, որ Վրաստանով հնագույն ժամանակներից անցնում էր այսպես կոչված «Մետաքսի ճանապարհը», որը Հնդկաստանից և Չինաստանից ուղղվում էր դեպի Եվրոպա: Ուստի ճանապարհների շինարարությանը մեզ մոտ միշտ մեծ ուշադրություն է դարձվել: Կառուցվում էին կամուրջներ, կանգնեցվում էին հեռավորության ցուցիչ քարե սյուներ, ճանապարհները քարերով էին սալարկվում: Այսօր Վրաստանի՝ որպես տարանցիկ երկրի կարևորությունն է՛լ ավելի է աճել: Բացի երկաթուղիներից և ավտոմայրուղիներից, Վրաստանով անցնում են կարևոր նավթատարներ և գազամուղներ:

Հաջորդ ակտիվությունը կօգնի աշակերտներին փաստարկներով քննարկել նավթատարի օգտակարությունը՝ երկրի էկոնոմիկայի և անվտանգության համար: Իսկ քարտեզի օգնությամբ կորոշեն այն երկրները, որոնցով անցնում է նավթի խողովակաշարը (Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա):

| Դասի թեման | 1.2. Քարթլի՝ Վրաստանի քաղաքական կենտրոն |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը կարողանա վերլուծել Քարթլիի՝ Վրաստանի քաղաքական կենտրոն դառնալու պատճառները: |
| **Համապատասխանությունը ԱՈՒՊ-ին** | (II)1 (II)4 (II)5 (II)14 (II)21 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Մինի-դասախոսություն Քարթլիի թագավորության հիմնադրման մասին (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Ըստ Վրաստանի ֆիզիկական քարտեզի (էջ 6-7)՝ կատարել դասագրքում տրված առաջադրանքները և պատասխանել Աղբյուր 2-ի հարցերին (10 րոպե): Աշակերտները քարտեզի միջոցով տեղեկություններ կստանան Քարթլիի բնական-աշխարհագրական բնութագրիչների մասին: (10 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Հարց-պատասխան. Ուսուցիչը խնդրում է հիշել Քարթլիի սահմանակից երկրամասերը և ֆիզիկական բնութագրերը: (5 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Աշխատանք տեքստի վրա. Աշակերտները խմբերում մշակում են դասագրքի տեքստը և իմաստային քարտեզի միջոցով որոշում այն պատճառները, որոնք հանգեցրին բնակչության ներհոսքի: (10 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Ծանոթանան Աղբյուր 2-ին: Մցխեթայի և նրա տեսարժան վայրերի օգնությամբ, արտահայտեն կարծիք, թե ինչ դեր կարող է կատարել Մցխեթան երկրում զբոսաշրջության զարգացման մեջ: (10 րոպե)<br>**Ակտիվություն 6.** Տնային առաջադրանք. Լրացուցիչ տեղեկություններ գտնեն Քարթլիի պատմական հուշարձանների մասին և դրանց ստեղծման տարիները տեղադրեն իրենց ժամանակային գծի վրա:<br>**Ակտիվություն 7.** Գնահատում |
| **Գնահատումը** | Ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, գրատախտակ, կավիճ |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը, զույգերով, խմբերով աշխատանք |
| **Ունեցած գիտելիքը** | Տեղեկություններ Քարթլիի՝ որպես աշխարհագրական կենտրոնի մասին |

Դասը սկսեք մինի-դասախոսությամբ Քարթլիի թագավորության ստեղծման մասին: Դա կարճ ժամանակահատվածում աշակերտներին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու հնարավորություն կտա:

Վրաց պատմաբան Լեոնտի Մրովելիի «Թագավորների կյանքը» («Քարթլիի կյանքի» առաջին երկը) աշխատության մեջ ասվում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին իր հրամանատար Ազոնին (Ազո) ուղարկեց Քարթլին զավթելու: Նա սպանեց Մցխեթայի տիրացու Սամարային և նրա ընտանիքը արտաքսեց: Լեգենդի համաձայն, սպանված Սամարայի եղբորորդի Փառնավազը մի անգամ որսի է գնում: Հանկարծ անձրև է վրա հասնում, և նա պատսպարվում է քարանձավում, որտեղ իսկայական գանձ է գտնում: Ընտանիքի անդամների հետ, երկար ժամանակ սայլով տուն էր տեղափոխում գանձը: Փառնավազը որոշում է այս գանձով զորք վարձել: Նրա հետ պայքարում Ազոնը զոհվեց: Փառնավազը Էգրիսիի կառավարիչ Քուջիի հետ միավորեց ամբողջ Վրաստանը, որը վրաց մատենագիրները՝ Քարթլի, իսկ հույները Իբերիա էին կոչում:

Հաջորդ գործունեությունը կնվիրվի ծանոթությանը Քարթլիի հիմնադրման մասին լեգենդին, և սխեմայի միջոցով կներկայացվեն Նոյի սերունդները:

| |
|---|
| Նոյ |
| Հաբեթ |
| Թորգոմ |
| Քարթլոս |

Քարթլիի ֆիզիկական բնութագրիչները և սահմանակից երկրամասերը հիշելը կօգնի ձեզ ստուգել, թե ինչպես են մտապահել նախորդ դասին ստացած տեղեկությունները, և միևնույն ժամանակ պատրաստեք նրանց հաջորդ ակտիվության համար:

Աշակերտներին ծանոթացրեք տեքստի այն մասը, որտեղ խոսքը բնակչության ներհոսքի մասին է Քարթլի: Խնդրեք լրացնել իմաստային քարտեզը, որպեսզի այս գործընթացի պատճառները կարողանան հստակ տեսնել (մոտավոր պատասխաններ. հարմար աշխարհագրական դիրք, վար ու ցանքի հողերի և արոտավայրերի առատություն):

Դասագրքում նկարագրվում են Մցխեթայի պատմական հուշարձանները՝ Ջեդազենին, Արմազի ամրոցը, Ջվարի վանքը, Շիո Մղվիմեն, Սվետիցխովելին, Պոմպեոսի կամուրջը: Աշակերտներին հանձնարարեք քննարկել՝ պատմական հուշարձանների նման բազմազանությունը ի՞նչ դեր կարող է խաղալ զբոսաշրջության զարգացման գործում:

Տնային առաջադրանք. Ծանոթանալով ինտերնետ-ռեսուրսների կամ օժանդակ գրականության, գտնել տեղեկություններ վերոհիշյալ պատմական հուշարձանների մասին, ժամանակային գծի վրա գրել դրանց ստեղծման ժամանակը:

**Իմաստային քարտեզ**. Իմաստային քարտեզի նպատակն է պարզել որոշակի հարցերի վերաբերյալ աշակերտների գիտելիքները: Այն նպաստում է տեղեկատվության հավաքմանը և մոբիլիզացմանը, նոր գաղափարների ծնվելուն և դրանց ավելացմանը: Շրջանի կենտրոնում գրվում է մեկ կամ երկու բառ, իսկ շուրջը բոլոր կարծիքները, որ կապվում են այս բառի հետ: Իմաստային քարտեզը կարող է օգտագործվել աշակերտներին մոտիվացնելու համար:

| Դասի թեման | **1.3. Քարթլին և նրա հարևան երկրամասերը** |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը վերլուծի Քարթլիի՝ հարևան երկրամասերի հետ փոխհարաբերության գործոնները, ծանոթանա ինչպիսին է բնական ռեսուրսների ազդեցությունը երկրամասի տնտեսության զարգացման վրա: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | (II)12 (II)13 (II)14 (II)24 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Մտավոր գրոհ. Տարբեր երկրամասերը ինչ կարգի հարաբերություններ կարող են ունենալ իրար հետ: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Հարց-պատասխան. Հիշեն Քարթլիի ֆիզիկական-աշխարհագրական բնութագրիչները և ենթադրություններ արտահայտեն՝ տնտեսության ինչ բնագավառներ կարող էին զարգանալ: (5 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Աշակերտները բաժանվում են խմբերի, Ջիգսոու մեթոդով մշակում դասագրքի տեքստը և լրացնում աղյուսակը. ինչ ավանդույթներ ունի ոչխարաբուծության զարգացումը Քարթլիում, ինչպես էր Քարթլին օգտվում հարևան երկրների բարիքներից, և հարևան երկրներն ինչպես էին օգտվում Քարթլիից, ինչ դեր կարող էր կատարել էկոնոմիկայի զարգացման մեջ ոչխարաբուծությունը: (20 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Շնորհանդես (10 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում<br>Տնային առաջադրանք – Լրացուցիչ տեղեկություններ գտնեն այլ երկրամասերի հետ Քարթլիի ներկայիս հարաբերությունների մասին: |
| **Գնահատումը** | Խմբային աշխատանքի գնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, գրատախտակ, գնահատման խորագիր |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը, խմբերով աշխատանք |
| **Ունեցած գիտելիքը** | Տեղեկություններ Քարթլիի աշխարհագրական դիրքի, ֆիզիկա-աշխարհագրական բնութագրիչների մասին |

Դասը սկսեք մտավոր գրոհով. ինչպիսի հարաբերություններ կարող են ունենալ տարբեր երկրամասերը միմյանց հետ (մոտավոր պատասխաններ. թշնամական, բարիդրացիական, առևտրային): Դրանից հետո աշակերտներին հարցեր տվեք ունեցած գիտելիքների ակտիվացման համար. ինչպիսի՞ն է Քարթլիի աշխարհագրական դիրքը, լեռներն են գերազանցում, թե՞ հարթավայրերը: Դրանից հետևություն անեն՝ տնտեսության ո՞ր բնագավառները կարող էին զարգանալ: Օրինակ, հողագործությունը, անասնապահությունը, պտղագործությունը:

Ջիգսոու մեթոդով տեքստի վրա աշխատելու միջոցով կարճ ժամանակահատվածում հնարավոր է մշակել մեծ ծավալի տեքստ (տե՛ս՝ Ջիգսոու մեթոդը, էջ 12-13): Խմբերն ընտրեն շնորհանդեսավարներ: Յուրաքանչյուր խումբ արտահայտում է մյուս խմբերից տարբերվող կարծիք:

| Ինչ ավանդույթներ ունի ոչխարաբուծության զարգացումը Քարթլիում: | Ինչպես էր Քարթլին օգտվում հարևան երկրների բարիքներից: | Հարևան երկրներն ինչպես էին օգտվում Քարթլիից: | Արտահայտեք ենթադրություն՝ ի՞նչ դեր կարող է կատարել ոչխարաբուծությունը էկոնոմիկայի զարգացման մեջ: |
|---|---|---|---|
| | | | |

**Երաշխավորություն. Առաջադրանք 8, պարագաֆ 1.3**

Աշակերտներին հանձնարարեք ժամանակային գծի վրա տեղադրել Սուրբ Նինոյի (հայ պատմագրության մեջ` Նունե)՝ իովիվների հետ հանդիպման դարը, Քարթլիի թագավորության հիմնադրման դարը, ինչպես նաև պատասխանեն տրված հարցերին.

- Քանի՞ հարյուրավոր տարի է բաժանում այս երկու իրադարձություննն իրարից:
- Քանի՞ հազարավոր տարի է մեզ բաժանում Քարթլիի թագավորության առաջացումից:

**Երաշխավորություն. Առաջադրանք 9, պարագաֆ 1.3, լրացնել աղյուսակը**

| Անվանումը | Որտեղ է օգտագործվում |
|---|---|
| Ոչխարի բուրդ | |
| Կաթ | |
| Միս | |
| Կաշի | |

| Դասի թեման | 1.4. Քարթլիի բերդ-ամրոցները |
|---|---|
| **Դասի նպատակը** | Ծանոթանալ, թե ինչ միջոցներով էր Քարթլին պաշտպանվում թշնամիներից: |
| **Համապատաս-խանությունը ԱՈՒՊ-ին** | (II)2 (II)3 (II)6 (II)12 (II)14 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Վրացի ռազմիկի լուսանկարի մեկնաբանություն<br>**Ակտիվություն 2.** Հարց-պատասխան. Բացի զենքից, բնակչությունն ինչպես կարող էր պաշտպանվել թշնամուց: Պատասխանները գրվում են գրատախտակի վրա: (5 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Մինի-դասախոսություն Քարթլիի բերդ-ամրոցների և դիտանոց աշտարակների մասին: (10 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Կազմակերպեն քննարկում. Ինչպես պետք է տեղի ունենա պատմական բերդ-ամրոցների պահպանությունն ու խնամքը, ինչպիսին պետք է լինի բնակչության և պետության դերը: (15 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում<br>**Ակտիվություն 6.** Տեղեկություններ գտնեն բերդ-ամրոցների մասին, կազմակերպեն ցուցահանդես «Քարթլիում ո՞վ է փոքր ամրոց տեսել, ո՞վ է հորինել նրա փոքրությունը» խորագրով: (Մեջբերումը Սիմոն Չիքովանիի «Ո՞վ է ասում...» բանաստեղծությունից է:) |
| **Գնահատումը** | Ընթացիկ աշխատանքի գնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, նկարազարդումներ |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը, անհատական |
| **Ունեցած գիտելիքը** | Քարթլիի բնական և մշակութային բնութագրիչները |

Դասը սկսեք հին վրացի ռազմիկի լուսանկարի ցուցադրմամբ և խնդրեք պատասխանել հարցերին. Ձեր կարծիքով, ինչու է ընտրվել այս լուսանկարը: Ինչն է ձեզ ծանոթ այս նկարում: Այս գործունեությունը ձեզ կօգնի անցնել հաջորդ գործունեությանը, որտեղ աշակերտները կանվանեն այն միջոցները, որոնցով բնակչությունը պաշտպանվում էր թշնամուց: Մինի դասախոսությունը՝ Քարթլիի ամրոցների և դիտակետերի մասին, ձեզ հնարավորություն կտա կարճ ժամանակահատվածում տալ պահանջվող տեղեկատվությունը:

Գորիի ամրոցը պատմական բերդ-ամրոց է Գորի քաղաքում: Բարձր քարքարոտ բլրի վրա, հյուսիսային պատին պահպանված փլատակները վկայում են, որ այստեղ մեր թվարկությունից առաջ բնակավայր է եղել: Աղբյուրներում Գորիի ամրոցը հիշատակվում է 12-րդ դարից: Հուշարձանը ներկայիս տեսքն ընդունել է 1774 թվականին, երբ Էրեկլե II-ը հիմնովին նորոգել է այն:

Սուրամիի բերդ-ամրոցը և նաև՝ Սուրամին պետք է կառուցված լինեն մեր թվարկությունից առաջ երկրորդ դարում, Փարնաջոմ թագավորի կողմից: Ներկայիս տեսքը կառույցը ենթադրաբար միջնադարում է ստացել:

Մցխեթա քաղաքում, Արագվի գետի աջ ափին, լեռան գլխին վեր է խոյանում Բեբրիսցիխեն: Հին ժամանակներում նրա անունը Բելտա էր: Կառուցված է անտիկ դարաշրջանում: Ժամանակին այս բերդը փակում էր Մցխեթա մտնող ճանապարհը Արագվիի կիրճի կողմից: Բեբրիսցիխեի մասին այսպիսի լեգենդ կա: Մի ժամանակ այստեղ ապրել են քույր և եղբայր Մամուկան և Մակրինեն: Մամուկան ինչ-որ փորձության է հանդիպել: Քույրը և եղբայրը Աստծուն աղերսել են. «Միայն թե մեզ փրկի՛ր, այստեղ եկեղեցի կկառուցենք քո անունով»: Մամուկան փրկվել է և կատարել խոստումը: Քույր և եղբայր սկսել են եկեղեցական կյանքով ապրել: Մակրինեն 70 տարեկանում է վախճանվել: Նրան հրաժեշտ տալու է գնացել ճերմակամորուս ծերունի Մամուկան և ասել. «Քո՛ւյր իմ, մենք կատարեցինք մեր խոստումը»:

Այս խոսքերն ասելուն պես, Մամուկան ևս հոգին Աստծուն է ավանդել: Դա է պատճառը, որ բերդը կոչվել է Բեբրիսցիխե (ծերունու ամրոց):

Արմազցիխեն ճարտարապետական հուշարձան է Մցխեթայում, Արմազիսխևիի ակունքի մոտ, դժվար հասանելի ժայռոտ լեռան վրա: Ամրոցը բաղկացած է աշտարակից և պարսպից: Կառուցված է ջարդուկտոր քարից և շատ վնասված է:

Ուփլիսցիխեն ժայռափոր քաղաք է, բրոնզե դարի ճարտարապետական հրաշալիք: Այն գտնվում է Գորիի արևմուտքում, Քուռ գետի աջ ափին: Հիմնական մասը հատել են հնագույն շրջանում: Պահպանվում է նաև միջնադարյան ժայռափոր համալիրը: Համեմատաբար լավ է պահպանված ներքին քաղաքը, որը և՛ արևմուտքից, և՛ հարավից բնական պատվարով է պաշտպանված: Արևելքից և հյուսիսից նրան պաշտպանում էր արհեստական կտրվածքի մեծ խրամատը, որի երկայնքով ներսից ձգվում էր աշտարակներով պատը: Քարանձավները տեղակայված են առանձին խմբերով: Քաղաքի վերին մասում գտնվող դահլիճներից հարկ է հիշատակել կենտրոնական դահլիճը: Դարեր շարունակ Ուփլիսցիխեն բազմիցս դիմակայել է թշնամուն: Խաղաղ ժամանակներում ժայռափոր քաղաքը գրականության և կրթության օջախ է եղել: Այսօր Ուփլիսցիխեն հավասարապես հիացնում է վրաց և օտարերկրյա այցելուներին:

Սամշվիլդեն հնագույն պատմական բերդաքաղաքներից մեկն է Արևելյան Վրաստանում, պատմական Քվեմո Քարթլիում: Պահպանվել է ավերակների տեսքով: Նրա նախնական անունը Օրբի բերդ էր: Կառուցվել է հավանաբար մ.թ.ա. չորրորդ դարում: Հանդիսանում էր Սամշվիլդեի էրիսթավության կենտրոնը:

**Երաշխավորություններ քննարկման անցկացման համար.**

Թեման. Ինչպես պետք է պահպանենք բերդ-ամրոցները, և ինչպիսին պետք է լինի բնակչության և պետության դերը:

Քննարկվում է բերդ-ամրոցների նշանակությունը և քաղաքացիների կողմից իրենց դիրքորոշումն արտահայտելու անհրաժեշտության հարցը:

Հասկանալ բերդ-ամրոցների պահպանման գործում բնակչության ակտիվ մասնակցության կարևորությունը և վերլուծել դժվարությունները:

Նյութ՝ գրելու թերթեր:

Մասնակիցները պետք է բաժանվեն երկու խմբի: Առաջարկեք աշակերտներին մասնակցել դերային խաղի, որում նրանք կարտահայտեն բերդ-ամրոցների պահպանման հակառակ տեսակետներ՝ կապված քաղաքացիների և պետության մասնակցության հետ: Ըստ մի խմբի կարծիքի՝ պատմական հուշարձանների պահպանությունը պետության գործն է, քանի որ նա պետք է տրամադրի միջոցներ և ռեսուրսներ: Վարողը (այս դեպքում՝ ուսուցիչը) երկրորդ խմբին պետք է առաջարկի՝ համոզել այն աշակերտներին, ովքեր արտահայտում են այս դիրքորոշումը, և ներկայացնեն իրենց սեփական փաստարկները: Մասնավորապես, պատմական ժառանգության մասին հոգածությունը յուրաքանչյուր քաղաքացու պարտքն է, քանի որ անցյալը մոռացության տալը վտանգ է ստեղծում նաև ապագային, իսկ պետությունն այս ժամանակ կարող է միայն օգնել քաղաքացիներին:

Խորհուրդներ վարողին. երկու խմբերը պետք է հավասար հնարավորություն ունենան իրենց փաստարկը ներկայացնելու համար:

**Տնային առաջադրանք.** Էլեկտրոնային ռեսուրսների միջոցով գտնել տեղեկություններ և նկարներ Քարթլիի բերդ-ամրոցների մասին, ապա կազմակերպել ցուցահանդես (տե՛ս՝ Ռեսուրսների ցանկ):

**Երաշխավորություն. Առաջադրանք 5, պարագրաֆ 1.4**

Այս առաջադրանքը տալու ժամանակ աշակերտներին հիշեցրեք, որ ապրիլի 30-ը վրացական բանակի օրն է:

Երբ զինվորները գնում են զինվորական ծառայություն, նրանք երդում են տալիս: Աշակերտներին հանձնարարե՛ք տեղեկություններ գտնել այն մասնագիտությունների մասին, որոնց ներկայացուցիչները երդում են տալիս երդման արարողության ժամանակ:

| Դասի թեման | 1.5. Բազմազգ Քարթլին |
|---|---|
| **Դասի նպատակը** | Ծանոթանա Քարթլիում բնակվող էթնիկ խմբերին, նրանց ավանդույթներին և դատողություն անի Քարթլիի բնակչության հանդուրժողականության մասին, վերլուծի տարբեր էթնիկական խմբերի՝ Քարթլիում բնակեցման պատճառները: |
| **Համապատաս-խանությունը ԱՈՒՊ-ին** | (II)1 (II)3 (II)5 (II)9 (II)12 (II)13 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Զուգորդական քարտեզ հանդուրժողականություն բառի մասին: (2 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Մինի դասախոսություն Քարթլիում ապրող էթնիկ խմբերի մասին: (5 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Աշխատանք տեքստի վրա. աշակերտները բաժանվում են խմբերի, և յուրաքանչյուր խումբ աշխատում է մեկ թեմայի վրա. ա. Հրեաները Քարթլիում, բ. Ասորիները Քարթլիում, գ. Հայերն ու ադրբեջանցիները Քարթլիում: (10 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Շնորհանդես. Աշակերտներն ընտրում են շնորհանդեսավարի, ով դասարանին կներկայացնի իր աշխատությունը: (15 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Քննարկում. Պետք է տիրապետի՞ արդյոք ոչ վրաց բնակչությունը վրաց լեզվին: (5 րոպե)<br>**Ակտիվություն 6.** Գնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 7.** Գտնել լրացուցիչ տեղեկություններ Վրաստանում ապրող այլ էթնիկ խմբերի մասին: |
| **Գնահատումը** | Խմբային աշխատանքի գնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, ֆորմատի թերթեր |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը, խմբերով աշխատանք |
| **Ունեցած գիտելիքը** | Տեղեկություններ Քարթլիի՝ որպես աշխարհագրական և քաղաքական կենտրոնի մասին |

Դասի խթանման փուլում կիրառե՛ք զուգորդական քարտեզ հանդուրժողականություն բառի համար (օրինակ, բարյացակամություն, հարգանք, հոգածություն, օգնություն, կարեկցանք):

Անցկացրե՛ք մինի-դասախոսություն Քարթլիում բնակվող էթնիկ խմբերի մասին:

Օրինակ, բացատրե՛ք, որ դժվար է գտնել այնպիսի վայր, որտեղ այսպիսի փոքր տարածքում այսքան տարբեր ազգությունների մարդիկ ապրեն (օսեր, հայեր, ադրբեջանցիներ, հույներ, քրդեր, հրեաներ): Չնայած էթնիկ խայտաբղետությանը, Վրաստանում ապրող ժողովուրդներն իրար հետ ակտիվ մշակութային և տնտեսական հարաբերություններ ունեին, և դա հանգեցրեց նրանց մերձեցմանը:

Աշակերտներին բաժանե՛ք խմբերի: Յուրաքանչյուր խումբ մշակում է մեկ թեմա՝ ըստ դասագրքի տեքստի. ա. Հրեաները Քարթլիում, բ. Ասորիները Քարթլիում, գ. Հայերն ու ադրբեջանցիները Քարթլիում: Խմբերն ընտրում են շնորհանդեսավարի: Գնահատումը տեղի կունենա խմբերում աշխատանքի գնահատման չափանիշներով:

Ցանկալի է, որ աշակերտները դատողություն ծավալեն, թե արդյոք պետք է տիրապետի՞ վրաց լեզվին ոչ վրացի բնակչությունը: Փորձեք դատողությունը զարգացնել այն տեսանկյունից, որ աշակերտները տեսնեն ոչ վրաց բնակչության վրաց հասարակությանն ինտեգրման համար վրաց լեզվի իմացության անհրաժեշտությունը, ինչը կարող է հիմք լինել նրանց հետագա հաջողությունների համար:

Էլեկտրոնային ռեսուրսների կամ օժանդակ գրականության միջոցով տեղեկություններ գտնեն Վրաստանում բնակվող այլ էթնիկ խմբերի մասին ևս (օրինակ, ռուսներ, ուկրաինացիներ, հույներ, քիստեր՝ Վրաստանում ապրող չեչեններ):

| Դասի թեման | **1.6. Բնակեցման տեսակները Քարթլիում** |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը ծանոթանում է բնակեցման հին և ժամանակակից տեսակներին: Աշակերտը վերլուծում է բնական պայմանների և ռեսուրսների ազդեցությունը բնակեցման տեսակների վրա: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | (II)3 (II)5 (II)7 (II)11 (II)15 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Մտավոր գրոհ. Ինչպիսի՞ն պետք է լինի տունը: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Տեքստի վերլուծություն. Աշակերտները անհատապես են մշակում դասագրքի տեքստը և գրավոր դատողություն ծավալում այն մասին, թե ինչ գործոններ էին նախատեսում Քարթլիում տների կառուցման ժամանակ: (20 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Կատարած աշխատանքի շնորհանդես (5 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Վեննի դիագրամի միջոցով կհամեմատեն հարթ տանիքով և դահլիճային տիպի տները: (10 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 6.** Տնային առաջադրանք. Գրեն շարադրություն. «Ժամանակակից տները» թեմայով: |
| **Գնահատումը** | Ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, գրատախտակ, կավիճ |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը, զույգերով աշխատանք |
| **Ունեցած գիտելիքը** | Տեղեկություններ Քարթլիի աշխարհագրական միջավայրի մասին |

Դասը սկսում ենք մտավոր գրոհով. ինչպիսի՞ն պետք է լինի տունը (ենթադրյալ պատասխաններ՝ հարմարավետ, տաք, պաշտպանված, բարեկարգ):

Տեքստի վերլուծությունը հնարավորություն կտա, որ աշակերտները դատողություն անեն այն գործոնների մասին, որոնք նախատեսում էին անցյալում տներ կառուցելու ժամանակ (օրինակ՝ պաշտպանվածություն, անվտանգություն, խմելու և ոռոգման ջրով ապահովում):

Տեքստին և նկարազարդումներին ծանոթանալն աշակերտներին հնարավորություն կտա նաև տեղեկություններ ստանալ բնակելի տների տեսակների մասին հնում ու ներկայում և լրացնել աղյուսակը:

| Տան տեսակը | Շինանյութ | Բնորոշ նշաններ |
|---|---|---|
| Հարթ տանիքով | | |
| Դահլիճային | | |
| Ժամանակակից | | |
| | | |

Աղյուսակը լրացնելուց հետո, Վեննի դիագրամի միջոցով ավելի հեշտ կհամեմատեն հարթ տանիքով և դահլիճային տեսակի տները:



| Դասի թեման | **1.7. Տնտեսության բնագավառները Քարթլիում** |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը ծանոթանում է Քարթլիում զարգացած տնտեսության բնագավառներին: Աշակերտը դատողություն է ծավալում այն գործոնների մասին, որոնք պայմանավորում են Քարթլիին բնորոշ տնտեսական գործունեությունը: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | (II)3 (II)6 (II)7 (II)13 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Ուսուցիչն աշակերտներին ցույց է տալիս նկարազարդումներ, որոնց վրա պատկերված է ցորեն, խաղող, ոչխար, ընտանի կենդանիներից ստացած արտադրանք, և խնդրում է աշակերտներին ենթադրություն արտահայտել՝ տնտեսության ո՞ր բնագավառները կարող են լինել զարգացած: Պատասխանները գրվում են գրատախտակի վրա: (10 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Մինի-դասախոսություն տնտեսության բնագավառի մասին (5 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Խմբերում պատրաստեն կարծիքներ այն մասին, թե տնտեսության որ բնագավառի զարգացումը կլինի շահութաբեր երկրի էկոնոմիկայի համար և ինչու: Սեփական կարծիքները ներկայացնեն դասարանին: (10 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Շնորհանդես (15 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում<br>**Ակտիվություն 6.** Տնային առաջադրանք. Բաժանվեն խմբերի և կազմակերպեն այց սուպերմարկետներ: Պարզեն, թե վրացական արտադրության ինչ արտադրանք է վաճառվում, և ինչպիսին է դրա պահանջարկը: |
| **Գնահատումը** | Ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, գրատախտակ, կավիճ |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը, խմբերով աշխատանք |
| **Ունեցած գիտելիքը** | Տեղեկություններ բնական պայմանների, բնակեցման տեսակների մասին |

Պարագրաֆում տրված նկարազարդումները թույլ կտան աշակերտներին արտահայտել իրենց ենթադրությունները Քարթլիում զարգացած տնտեսության բնագավառների մասին (օրինակ, հողագործություն, անասնաբուծություն, խաղողագործություն):

**Նյութ մինի դասախոսության համար**

Այն, որ Վրաստանը ցորենի, խաղողի և որոշ պտղատու մշակաբույսերի (խնձոր, տանձ, սերկևիլ և այլն) հայրենիք էր համարվում և որ մեր գյուղատնտեսությունը հնագույն պատմություն ունի, հաստատում են հույն պատմաբաններ Ստրաբոնն ու Քսենոֆոնը: Նրանց փոխանցմամբ, Վրաստանը ամեն տեսակ բարիքով հարուստ, ամեն տեսակ մրգով և պտղով զարդարված երկիր է եղել: Պատմական գիտությունների դոկտոր Նոդար Շոշիտաշվիլին այսպիսի տեղեկություններ է տրամադրում գյուղատնտեսության մասին. «Հին ժամանակներում Վրաստանը, եթե երկրում ծայրահեղ իրավիճակ չէր, ոչ թե միայն սեփական ժողովրդին էր կերակրում, այլ նաև Մերձավոր Արևելքին էր մատակարարում իսկապես զարմանալի բազմազան ապրանքատեսակներ: Արևելյան Վրաստանից արտահանում էին ցորեն, գարի, կորեկ, լոբի: Վրաստանի հատիկայինների ամբար էր հանդիսանում Շիդա Քարթլիի հարթավայրը, Քվեմո Քարթլին՝ Ղարայայի տարածքը: Վրաստանից Իրանի, Թուրքիայի, Ռուսաստանի, Եվրոպայի շուկաներ էին արտահանում գինի, ծխախոտ, մրգեր, եգիպտացորեն, ցորեն, գարի և նույնիսկ՝ ձու:

| Դասի թեման | **1.8. Փոխադարձ օգնության ավանդույթը Քարթլիում** |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը ծանոթանում է փոխադարձ օգնության ավանդույթներին: Աշակերտը գիտակցում է սեփական պատասխանատվությունը: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | (II)5 (II)7 (II)9 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Հարց-պատասխան. Ուսուցիչն աշակերտներին խնդրում է հիշել դեպք սեփական կյանքից, երբ օգնել են ուրիշի, հիշեն դեպք, երբ իրենց են օգնել: Ինչպիսի՞ զգացողություն են ունեցել այս ժամանակ: (10 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Իմաստային քարտեզ. Տարերային երևույթներ<br>**Ակտիվություն 3.** Ուսուցչի խնդրանքով աշակերտներն արտահայտում են իրենց կարծիքները՝ ի՞նչ կապ ունեն օգնությունն  ու տարերային երևույթները: (10 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Ուսուցիչը ցույց է տալիս լուսանկար (կադրեր)  Վերեի կիրճում պատահած դժբախտությունից և աշակերտներին խնդրում կարծիքներ արտահայտել այն մասին, թե ինչպես պետք է պաշտպանվի բնակչությունը տարերային աղետներից:<br>**Ակտիվություն 5.** Մինի-դասախոսություն հնում փոխադարձ օգնության ավանդույթի մասին:<br>**Ակտիվություն 6.** Գնահատում<br>**Ակտիվություն 7.** Տնային առաջադրանք. Կազմակերպեն էքսկուրսիա Արտակարգ իրավիճակների ծառայություն և անեն շնորհանդես, գրեն ակնարկ. «Ինչո՞ւ պետք է օգնենք ուրիշին»: |
| **Գնահատումը** | Ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, պրոյեկտոր (անհրաժեշտության դեպքում) |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը |
| **Ունեցած գիտելիքը** | Ունեն տեղեկություններ անվտանգության կանոնների և շրջակա միջավայրի պահպանության պարտավորությունների մասին: |

Դասի նախնական փուլում ուսուցիչն աշակերտներին խնդրում է հիշել դեպքեր, երբ՝ ա. օգնել են ուրիշի, բ. երբ օգնել են իրենց, գ. ի՞նչ զգացողություն ունեին այդ ժամանակ: Դրանից հետո նրանք լրացնում են իմաստային քարտեզ տարերային երևույթների մասին: Այս ակտիվության նպատակն է որոշել-ստուգել բնական աղետների վերաբերյալ աշակերտների գիտելիքները: Շրջանի մեջտեղում գրվում է «Տարերային երևույթ», իսկ շուրջը գրվում է այն ամենն, ինչն այս բառի հետ է կապվում: Աշակերտները ուսուցչի խնդրանքով կարծիք են արտահայտում, թե ինչ կապ ունեն իրար հետ բնական աղետները և օգնությունը (տարերային աղետի ժամանակ ամենից լավ է ի հայտ գալիս մարդկանց վերաբերմունքը միմյանց նկատմամբ, առանց աջակցության դժվար է պայքարել արհավիրքի դեմ, համատեղ հեշտությամբ կարող են լուծել խնդիրները):

Աշակերտները ծանոթանում են պարագրաֆում տրված Վերեի կիրճում տեղի ունեցած ողբերգությունն արտացոլող լուսանկարներին (կամ կադրերին): Ուսուցիչն աշակերտներին խնդրում է արտահայտել իրենց կարծիքն այն մասին, թե ինչպես պետք է պաշտպանվի բնակչությունը բնական աղետներից: Օգնեք աշակերտներին ըմբռնել, որ ռեսուրսների ողջամիտ օգտագործումը, բնության պաշտպանությունը և խնամքով վերաբերմունքը բնության նկատմամբ յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունն է:

Անցյալում ցուցաբերված փոխադարձ օգնության ավանդույթների մասին մինի-դասախոսության համար կարող եք օգտվել պարագրաֆում տրված տեղեկություններից:

**Երաշխավորություն. Առաջադրանք 7, պարագրաֆ 1.8**

Մինչև տվյալ առաջադրանքը տալը ուսուցչի օգնությամբ աշակերտները գտնեն ազատ հողամասեր, համագործակցեն քաղաքի կամ գյուղի պլանավորման ծառայության հետ: Օգնության համար կարող են դիմել դպրոցի տնօրինությանը: Աշակերտներին ծանոթացրե՛ք ծառատունկի կանոնները:

**Ինչպես պետք է** տնկենք ծառ կամ թուփ: Նախ՝ նախատեսե՛ք տարածքի լանդշաֆտը: Հողի վրա արե՛ք նշումներ փոսը կտրելու համար: Նախապես կապե՛ք լար, դրա վրա նշե՛ք տունկից տունկ հեռավորությունը և նշված տեղերում տնկե՛ք ցցեր, այնուհետև փորե՛ք 60 սմ խորությամբ և 80 սմ լայնությամբ փոսեր: Պատրաստված փոսի հատակը լավ փխրունացրե՛ք: Տնկին տնկե՛ք մինչև արմատի վզիկը, լավ տափանե՛ք հողը և ջուր լցրե՛ք:

## Լրացուցիչ տեղեկություններ

**Խորագիր. Սա հետաքրքիր է**

Բաքու-Սուպսա, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Հարավային Կովկասի խողովակաշարի շինարարությունը դարի լայնամասշտաբ ծրագրեր էին: Խողովակաշարի շինարարության ժամանակ Վրաստանի տարածքում հայտնագործվել է գրեթե երկու հարյուր հնագիտական հուշարձան, որ գիտնականները փրկել և ուսումնասիրել են:

**Քաղաք Մցխեթան** թանգարան է հայտարարված և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում է ընդգրկված:

**Սվետիցխովելի** տաճարը գտնվում է Մցխեթայում: Համաձայն ավանդազրույցի, մցխեթացի հրեա Էլիոզը Տիրոջ խաչելությունից հետո Քրիստոսի հանդերձը Մցխեթա է բերել: Նրա քույրը՝Սիդոնիան, հանդերձը կրծքին է սեղմել և վախճանվել: Կնոջը հուղարկավորել են հանդերձի հետ մեկտեղ, և նրա գերեզմանին ծառ է աճել: IV դարում այս վայրում որոշել են եկեղեցի կառուցել: Ծառը կտրել են և նրանից յոթ հատ սյուն տաշել: Վեց սյուները կանգնեցրել են հողի մեջ, իսկ յոթերորդը օդի մեջ կանգ է առել. ոչ մի կերպ չեն կարողացել տեղից շարժել: Սյունը լուսավորում էր և հաճելի բույր տարածում: Հենց սա էր «կենարար սյունը»՝ սուրբ սյունը, որի անունով կոչել են տաճարը: Պատմությունից հայտնի է, որ 5-րդ դարի երկրորդ կեսին շինության նախնական տեսքը հիմնովին վերականգնել է բարեպաշտ թագավոր Վախթանգ Գորգասալին:

11-րդ դարի սկզբին Մելքիսեդեկ Ա կաթողիկոսը ճարտարապետ Արսակիձեին է հրավիրել: Ասում են, որ չնայած նրան, որ Արսակիձեն փառավոր տաճար է կառուցել, նրան, միևնույն է, պատժել են և կտրել նրա աջը: 13-րդ դարում հզոր երկրաշարժը վնասել է տաճարը, որը հաջորդ դարում վերականգնել են:

Սվետիցխովելին ոչ միայն հոգևոր, այլև կրթական կարևորագույն օջախ էր: Տաճարն ունեցել է հարուստ և բազմազան գրադարան: Սվետիցխովելիում հուղարկավորված են բազմաթիվ թագավորներ և կաթողիկոսներ, այդ թվում նաև ինքը՝ Մելքիսեդեկ կաթողիկոսը, թագավոր Վախթանգ Գորգասալին և Էրեկլե II թագավորը:

**Շիո Մղվիմեի վանքը.** 6-րդ դարի երկրորդ կեսին հիմնադրել է ասորի հայր Շիոն: Լեգենդի համաձայն, քարայրում գտնվող վանականին սնունդ էին բերում աղավնիները: Շիո Մղվիմեի վանքում աղբյուրի բխելն էլ կապվում է Շիոյի հետ: Սկզբում վանականները սովորականի նման Քռից էին ջուր բերում: Մի անգամ վանականներից մեկը երբ գետից ջուր էր բերում, ջրով ամանը կոտրվում է, և ջուրը թափվում է: Վրդովված վանականը սկսել է լացել: Երբ դա տեսել է Շիոն, հանգստացրել է վանականին և ասել. «Մի՛ լացիր, Աստված լսեց քեզ և քո արտասուքների փոխարեն այդտեղ կամեցավ աղբյուր ստեղծել»: Այդ աղբյուրը այսօր էլ կարող եք տեսնել Շիո Մղվիմեում, այն կոչվում է «Արտասուքի աղբյուր»:

**Չեդազենիի վանական համալիրը** գտնվում է Սագուրամոյի մոտ, Չեդազենի լեռան վրա: Լեգենդի համաձայն, «Զեդազենի» անունը կապված է բերքատվության հեթանոսական աստվածուհու հետ և նշանակում է «Չեդա (վերին) Զադենի»: Զադենի կուռքը վրացական դիցաբանության աստվածություն է, որին երկրպագում էին մինչև քրիստոնեության տարածումը: VI դարում ասորի հայրերի առաջնորդ Իոանե Չեդազնեցին, իր աշակերտների հետ միասին, ճիշտ Չեդազենի լեռան վրա բնակվեց: Հայր Իոանեն այստեղ հիմնեց վանք, և ինքն էլ կոչվեց Չեդազնեցի: Լեգենդներից մեկի համաձայն, Չեդազենին եղել է անջուր տարածք: Սուրբ Իոանեն Տիրոջը խնդրել է աղբյուր բխեցնելու մասին, և իսկապես, լեռան գագաթին բուժիչ աղբյուր է ժայթքել: Աղբյուրին մի արջ է ընտելացել, Սուրբ Իոանեի աղոթքով գազանը ընտանիացել է: Ասում են, դրանից հետո, Չեդազենիի անտառների բնակիչներն այլևս մարդկանց վնաս չէին հասցնում:

**Գութանը** հողը վարելու գործիք էր, վրացերենում հայտնի է մի քանի անվանումներով՝ գութան, մեծ գութան, մեծ վրացական գութան, փայտյա գութան, պապի գութան: Այս բոլոր տեսակները այս կամ այն չափով տարբերվում են իրարից: Այս տարբերությունը դրանց կառուցվածքների կամ այն նյութի հետ է կապված, ինչով պատրաստված են այդ գութանները: Աշխատանքի սկզբունքը բոլորի համար նույնն է: Գութանի փայտե մասերը պատրաստված էին տարբեր պինդ տեսակի ծառերից (կաղնի, հացենի, թեղի): Այսօր, որպես գյուղատնտեսական տեխնիկա, Վրաստան են ներմուծվում հատուկ պողպատի համաձուլվածքներով արտադրած գութաններ, որոնք աչքի են ընկնում բարձր կայունությամբ:

**Վրացական մարտական հանդերձանքը**

Ռազմիկ-ասպետի զենք ու զրահը բաժանվում է երկու խմբի `պաշտպանական և հարձակողական:

Պաշտպանականի մեջ մտնում են գլխանոցը, շղթան, զրահը, վահանը, հարձակողականի մեջ՝ հարվածող, ծակող, հատող, նետող և գնդակներ ցրող զինատեսակներ: Պատմական աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վրացի ռազմիկներն օգտագործել են չորս տեսակի գլխանոց. 1.բարձրածայր սաղավարտ, 2. թասաձև սաղավարտ, 3. համակցված գլխանոց, 4. շղթայից հյուսած սաղավարտ:

Սաղավարտը, որպես պաշտպանական գլխանոց, այլ պաշտպանության միջոցների հետ, հայտնի է հին ժամանակներից: Պատրաստվում էին փայտից, կեչու կեղևից, շիվերից և կաշվից: Ըստ Հերոդոտոսի, մոսխերը, կոլխերը, տիբարենները, մակրոնները, մոսինիկները սաղավարտը պատրաստում էին փայտից: Ըստ Քսենոֆոնի, մոսինիկները կաշվից սաղավարտ էին կրում: Համաձայն Ստրաբոնի, իբերիացիները կաշվե սաղավարտով էին մարտնչում: Թրիալեթիում հայտնաբերվել է մ.թ.ա. III դարի բրոնզե սաղավարտ:

Վրաստանում լայնորեն տարածված էր շղթայից շապիկը, որը հավաքված էր օվալաձև օղակներից: Իսկ նրա փեշն ավելի մանր օղակներից էր բաղկացած: Շղթայե շապիկը հագնում էին սովորական շորի վրայից, որը կրծքի մոտ բացվածք ուներ և վզի մոտ կոճկվում էր հատուկ ճարմանդով:

Շղթայի արտադրության գործընթացը հնում կոչվում էր շղթա «գործել» կամ «շարել»: Շղթան ավազով էին փայլեցնում:

Վրացական բանակի զրահը լրացվում է վերջույթները ծածկող «շղթայե ձեռնապանով», որը գրեթե ամբողջ ձեռքն էր ծածկում և միայն մատների ծայրերն էր թողնում անպաշտպան: Ձախ ձեռքի համար «ձեռնապան» անհրաժեշտ չէր, քանի որ այն արդեն պաշտպանված էր վահանով:

Վրացական վահաններն առավելապես կլոր են: Արտադրության տեխնիկայի համաձայն, դրանք կարելի է բաժանել երեք խմբերի. 1. կաշեպատ փայտե վահան, 2. մետաղապատ-դարբնած կաշվե վահանակ, 3. սառը եղանակով կռած մետաղյա վահան:

Դարեր շարունակ զենքը վրացական հագուստի կարևոր տարրն էր: Սուրը և դաշույնը ընտանեկան մասունքներ էին համարվում և սերնդից սերունդ էին փոխանցվում: Սուրը Վրաստանում նաև իշխանության խորհրդանիշ էր: Թագավորին կամ զորահրամանատարին սուր փոխանցելիս կատարվում էր յուրահատուկ ծես, ծիսակարգ:

Ուշ ֆեոդալական շրջանում վրացի արհեստավորները յուրացրին հրազենի արտադրությունը: Պատմությունը պահպանել է այնպիսի հայտնի վարպետների անուններ, ինչպիսիք էին՝ գուդամաղարցի Պապոն և խևսուր Սաման: Վերջինիս անձամբ ճանաչում էր Էրեկլե II-ը:

**Խորագիր. Գիտե՞ք արդյոք, որ.**

1082 թվականին, Գիորգի II-ի թագավորության օրոք հզոր երկրաշարժ է եղել, որն ավերել է Մեսխեթ-Ջավախեթիի նշանակալի մասը: Գետնին է հավասարվել քաղաք Թմոգվին:

1283 թվականին Մցխեթայում քանդվել է Սվետիցխովելիի գմբեթը: Ածղուրիի տաճարից միայն Աստվածածնի սրբապատկերն է փրկվել:

1811 թվականին երկրաշարժն ավերել է Ալավերդիի տաճարը:

1889 թվականին Ախալքալաքի երկրաշարժը բազմաթիվ շենքեր է քանդել Ախալքալաքում և Բորժոմիում:

1920 թվականի փետրվարի 20-ին, գիշերվա ժամը 3-ին Գորիում տեղի ունեցած երկրաշարժը 2-3 րոպե շարունակվել է: 1000 քառակուսի կիլոմետրի վրա նրա ուժգնությունը 10 բալ է եղել: 1496 տնից փլվել է և խիստ վնասվել 941-ը, զոհվել 114 մարդ, ավերվել են Տանիսխիդի, Սկրա, Օթարաշենի, Խիդիսթավի, Ուփլիսցիխե և այլ գյուղեր:

1906 թվականի օգոստոսին Դուրուջի գետը վարարել է, հսկայական սելավային զանգվածը հեղեղել է գյուղի կեսն իր խաղողի այգիներով, այն վերածել քարքարոտ ափի: Շատ տներ ավերվել են, զոհվել հարյուրավոր մարդիկ: Ղվարելցի իշխան Ճավճավաձեները դիմել են կառավարությանը, մի քանի հազար ռուբլի ստացել և բաժանել անօթևան մնացած գյուղացիներին:

1968 թվականին Վրաստանի գետերի ակունքների մոտ նորմայից երկու անգամ շատ ձյուն է տեղացել: Ապրիլի սկզբին ջերմաստիճանը կտրուկ բարձրացել է: Սկսվել է անդադար անձրև և ձյան արագ հալում: Ջուրը հատկապես ավելացել է Քուռ գետում: Գետն իր ափերից դուրս է եկել և հեղեղել մարգագետիններն ու ափերը: Նշանակալի վնաս է հասել Թբիլիսիին, Բորժոմիի, Ախալցխեի, Ասպինձայի, Խաշուրիի, Քարելիի, Գորիի, Կասպիի, Մցխեթայի, Մառնեուլիի և Գարդաբանիի շրջաններին:

**Խորագիր. Սա հետաքրքիր է**

Ավանդաբար ժողովուրդը ձևավորել ու դրսևորել է խնամքով վերաբերմունք անտառի նկատմամբ. անտառն անխնա կտրելը խորթ էր ժողովրդական ապրելակերպին: Փայտը՝ որպես շինանյութ կարելի էր հատել միայն ամռանը և աշնանը, վառելափայտը՝ աշնանը, իսկ կահույքի փայտը՝ աշնան սկզբին: Գործնական փորձի հիման վրա բնակչությունը պահպանում էր որոշ կանոններ՝ ըստ սեզոնի, լուսնի փուլերի: Կարևորություն էր տրվում օրվան և նաև ամսաթվերին: Օրինակ, փայտ հատել չէր կարելի չորեքշաբթի և ուրբաթ օրերին: Լավ օր էր համարվում հինգշաբթին: Նորալուսնի ժամանակ չէին հատում՝«Ծառը աճում է և շուտ կորդոտվի»: Որպես կանոն, ծառը հատվում էր անտառի մեջտեղում: Անտառի եզրին, գյուղի մոտ չէր կարելի անտառ հատել:

**Ածխագործություն**. հին Թբիլիսիի մասնագիտություններից մեկն է: Վրաստանի բնակչության մի մասը, որպես ջեռուցման հիմնական միջոց, օգտագործում էր ածուխը: Դրա համար էլ այդ մասնագիտությունը զարգացել է Թբիլիսիում և նրա հարակից գյուղերում: Տեղի բնակչությունը հեշտությամբ տիրապետեց մասնագիտությանը: Հետո նրանց միացան և այս մասնագիտությանն էին հետևում Ռաճայից և Իմերեթիից եկածները: Սահմանված էին անտառների՝ որպես ածուխ օգտագործման, անտառային տարածքների ընտրության, ածխի որակի սահմանման, իրացման և գների որոշման կանոններ: Ածուխը վաճառվում էր Թբիլիսիում «Թուրքի մեյդանում», «Մալականների շուկայում», «Վառելափայտի հրապարակում»:

**Հարթ տանիքներով հողածածկ տները** հիմնականում տարածված են Արևելյան Վրաստանի լեռներում և հարթավայրում: Այսպիսի տանիքը «բանի» է կոչվում: Ըստ ձևի՝ բաժանվում են երկու տեսակի՝ գազաթով և հարթ տանիքով: Հարթ հողածածկ տանը չորս կողմից կարելի է կցակառուցել տարբեր նշանակումով տնտեսական կառույցներ՝ գոմ, հարդանոց, թոնրատուն, մառան:

**Բիրթվիսիի ամրոցը** դիմակայել է Լենկթեմուրի բազմաթիվ հարձակումների: Առաջին անարդյունք ճակատամարտից հետո նա պատվիրեց իր ներկայացուցիչներին ավելի լավ ուսումնասիրել ամրոցի

շրջակայքը և ճանապարհները, իսկ ինքը շարունակեց ճանապարհը: 1403 թվականին, ութերորդ արշավանքի ժամանակ, Լենկթեմուրը կրկին վերադառնում է ամրոցի մոտ: Վրացիները լավ ամրացրել էին ամրոցը, պարենամթերքի, ջրի և զինու պաշար պատրաստել: Այդ ժամանակ Բիրթվիսիի բերդապահ էր ոմն՝ Նազալ անունով: Բացի նրանից, բերդում իրենց ընտանիքներով և 150 հոգիանոց շքախմբով բնակվում էին 30 վրացի ազնվականներ: Մինչև Լենկթեմուրի գալը, մոնղոլները բազմիցս փորձել են հարձակվել բերդի վրա, բայց ոչինչ չի ստացվել: Բերդի պահապանները թշնամուն գրգռելու համար երբեմն բարձրանում էին բարձր լեռան վրա և այնտեղից, ի տես թշնամու, ղանձիով գինի խմում, միևնույն ժամանակ հպարտ վրացական երգեր երգում: Զայրացած Լենկթեմուրը հարձակումն անձամբ ստանձնեց. նրա հրամանով զորահրամանատար Շահ Մելիքը դարպասի դեմ երեք օրում այնպիսի ամրոց կառուցեց, որ մեջը շուրջ երեք հազար ռազմիկ կտեղավորվեր, իսկ բերդի ետևում՝ երկու ամրություն: Բացի այդ, նա յուրաքանչյուր կողմից տեղադրել էր հարվածող և ավերող մեքենաներ: Չնայած այդ միջոցներին, թշնամին ոչինչ չկարողացավ անել: Այդ ժամանակ Լենկթեմուրն այսպիսի հնարքի դեմեց. իր զորքից ընտրեց մարտիկների, ովքեր կարող էին մագլցել ժայռերի վրա, և նրանց հանձնարարեց Բիրթվիսիի բերդի հարավային ժայռոտ մասով մագլցել: Բերդի այս մասն այնքան անմատույց էր, որ այդ տարածքում վրացի պահապաններ չէին կանգնած: 50 ռազմիկները բամբակից և մետաքսից պատրաստված պարաններով աստիճաններ սարքեցին, որոնք Լենկթեմուրի հրամանով, բերդի վրա բարձրանալիս բարձր լեռան գագաթին պետք է ամրացնեին: Հաջորդ առավոտյան պետք է թափանցեին բերդ և կտրեին-հասնեին դարպասներին: Այս մարտիկները պետք է բաժանվեին երկու մասի, և երբ մի մասը կփորձեր դարպասը բացել, մյուսը աղեղ կկազմեր և նրանց կպաշտպաներ վրացիներից:

Այս առաջադրանքը մարտիկների կողմից լավ կատարվեց: Ամբողջ օրվա ընթացքում թշնամին վրացիներին հանգիստ չէր տալիս: Այնուհետև Լենկթեմուրի հրամանով դադարեցվեց գլաքարեր շպրտելը: Սաստիկ հոգնած վրացիներին հանգստի և քնելու հնարավորություն չտրվեց: Թշնամուն էլ դա էր պետք: Հենց որ մութն ընկավ, Լենկթեմուրի զորապետը սկսեց մագլցողներին մեկ-մեկ վեր ուղարկել: Առավոտյան 33 ռազմիկ կարողացել էր թափանցել բերդ: Նրանք ուղղվեցին դեպի դարպաս: Ճիշտ է, վրացի բերդապահները անմիջապես արձագանքեցին նրանց, սակայն այս անգամ հեշտ չէր դիմակայել թշնամուն: Երբ ամրոցում այս իրադարձություններն էին զարգանում, նրա դարպասը դրսից սկսեց գրոհել հակառակորդի ընտիր զորքը: Մնացածներին Լենկթեմուրը տեղակայել էր բերդի շուրջ, լեռնային լանջերի և գագաթների վրա. «բերդապահների ոգու համբերությունը և մարմնական ուժը խլելու համար» մարտիկները համաձայնեցված աղմկում էին: Ինքը՝ Լենկթեմուրը կանգնած էր Բիրթվիսիի բերդի դիմացի լեռան լանջին և այնտեղից էր հետևում բերդի համար մղվող ճակատամարտին: Թշնամու թվային գերազանցությունն իրենն արեց և կոտրեց վրացիների դիմադրությունը: Վիրավորված-հաշմված և ողջ մնացած բերդապահներին, որոնց թվում էր նաև Բիրթվիսիի բերդ-ամրոցի և հարակից տարածքի տերը՝ Թորելին, բռնեցին և ներկայացրին Լենկթեմուրին: Վերջինս նրանց առաջարկեց ընդունել իսլամը և պահպանել կյանքը: Առաջարկը կտրականապես մերժվեց: Դրանից հետո վրացիներին խոշտանգելով սպանեցին:

Բիրթվիսիի ամրոցի դիմադրությունը մեծ դեր է խաղացել երկրի այն ժամանակվա իրավիճակում: Վրացիների ինքնազոհաբերությունը մեկ ամսով գոնե պահեց Լենկթեմուրի հսկայական զորքը Բիրթվիսիի դարպասի մոտ:

Բիրթվիսիի ամրոցի հետագա պատմությունից, որը պահպանվել է պատմագիրների ժամանակագրության մեջ, հետաքրքիր է Շահ Թամազի ներխուժման պատմությունը 1541 թվականին: Հարավային Վրաստանում նա ոչնչացրեց և պղծեց այն ամենը, ինչին հասավ ձեռքը: Ամբողջ տարածքում միայն Բիրթվիսիի ամրոցը մնաց անձեռնմխելի: Լավ զինված թշնամու բազմաքանակ զորքը նրան ևս մոտեցավ, բայց որ ոչինչ չկարողացավ անել ամրոցին, շահը բերդապահներին խոստացավ, այն հանձնելու դեպքում, իրենց չվնասել: Նման հնարքով նա կարողացավ բերդն իր ձեռքը գցել:

Բիրթվիսիի հետ է կապված Իրանի դեմ Գիորգի Սաակաձեի պայքարի մեկ դրվագ: Այս երկրամասի և Բիրթվիսիի բերդի տերը՝ Քաիխոսրո Բարաթաշվիլին, իրանցիների կողմից էր: Նա բերդի կայազորն ավելացրեց 500 նոր բերված ղզլբաշներով: Երբ Սաակաձեն իմացավ այս լուրը, այսպիսի միջոցի դիմեց. «Արշալույսին նա հարձակվեց Բարաթաշվիլիի նստավայրի վրա Տբիսի գյուղում և բռնեց հենց

իրեն՝ Քաիխոսրոյին և նրա եղբորը՝ Խոսիային: Քանի որ տերերը գտնվում էին իր ձեռքում, բերդին էլ հեշտությամբ տիրացավ: Նա անհավատարիմ ազնվականներին ստիպեց, որ իրենք իսկ դուրս բերեին բերդից իրանցիների զորքը: Վրացիները ոչնչացրին հինգ հարյուր ղզլբաշներին:

Եվս մեկ հետաքրքիր տեղեկություն, որը 18-րդ դարի վերջի 40-ականներին է վերաբերում. Աբդուլլահ Բեգը Էրեկլե թագավորի դեմ դուրս եկավ: Նրան աջակցում էին Բարաթաշվիլիները: Էրեկլե թագավորը զորքով մոտեցավ Սաբարաթիանոյին. նա ցանկանում էր առանց ճակատամարտի հաշտեցնել նրանց: Բիրթվիսիում ամրացած Բարաթաշվիլիների մոտ միջնորդներ ուղարկեց. խոստացավ ներել, բայց ոչինչ չստացվեց: Ոչ էլ Սամշվիլդեում ամրացածներին կարողացավ հաշտեցնել: Վերջում թագավորը որոշեց ոչնչացնել նրանց ապրուստի միջոցը: Աշնան սկիզբն էր, զորքը ուղարկեց և Սամշվիլդեի ու Բիրթվիսիի մոտակայքի ողջ արտերը հնձել տվեց: Նրանց դեմ իջան Բարաթաշվիլու կողմնակիցները, սկսվեց մարտ, թագավորը գերազանցեց նրանց և սկսեց հետապնդել մինչև բերդ: Այնուհետև մատենագիրը լակոնիկ գրում է. «Չէ՞ որ Բիրթվիսիի դեմ կռվել չէր լինի, հեռացան, ավերեցին որտեղ ինչ շինություն կար»: Այս տեղեկությունների մեջ ամենահետաքրքիրն այն է, որ հեղինակը լրիվ համոզվածությամբ ասում է. Բիրթվիսիի բերդը մարտով վերցնել չի լինի:

**Խորագիր. Անհատը պատմության մեջ**

Սոլոմոն Քուրդիանի – վրացի անտառապահ-ընտրասերող: Վրացական համալսարանի առաջին դասախոսներից մեկը: 1920 թվականին նրա նախաձեռնությամբ հիմնադրվել է «Անտառի օր»: Նրա ղեկավարությամբ կատարվել է անտառների ամբողջական նկարագրություն: Նա պայքարում էր անտառի՝ առանց ծրագրի հատման դեմ:

Անտառը փրկելու համար հանրային քննադատական ելույթների համար նա կյանքի գնով հատուցեց: 1937 թվականին նրան ձերբակալել են և գնդակահարել: Նրա գերեզմանն այսօր էլ հայտնի չէ:

## ԲԱԺԻՆ 2. ԻՄԵՐԵԹԻ

| Դասի թեման | 2.4. Մշակութային հուշարձանները Իմերեթիում |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանում է Իմերեթիում առկա մշակույթի հուշարձաններին, վերլուծում դրանց նշանակությունը պատմության մեջ և դատողություն անում դրանց խնամքով վերաբերվելու անհրաժեշտության մասին: |
| Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին | (II)2 (II)7 (II)8 (II)9 (II)10 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Մինի-դասախոսություն Իմերեթիում առկա մշակութային հուշարձանների մասին (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Ծանոթանում են մշակութային հուշարձաններին, զույգերով մշակում տեղեկությունները՝ տեքստի հիման վրա, և լրացնում են աղյուսակը: (20 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Դատողություն են անում այն մասին, թե ինչու է անհրաժեշտ մշակութային հուշարձաններին խնամքով վերաբերվել: Բագրատի տաճարի օրինակով հիմնավորեն, թե որքանով է արդարացված հուշարձանների ռեկոնստրուկցիան՝ ժամանակակից շինանյութերի և կառույցների օգտագործմամբ: (15 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Գնահատում<br>**Ակտիվություն 5.** Տնային առաջադրանք. Գտնեն լրացուցիչ տեղեկություններ Իմերեթիի մշակութային հուշարձանների մասին, պատրաստեն գունապատկերների շոու և ներկայացնեն համադասարանցիներին: |
| Գնահատումը | Ընթացիկ առաջադրանքի գնահատման չափանիշներ |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, լրացուցիչ հրահանգներ |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը |
| Ունեցած գիտելիքը | Իմերեթիի բնական և սոցիալ-մշակութային բնութագրիչները |

**Նյութ մինի-դասախոսության համար**

Գելաթիի տաճարը միջնադարյան վրաց ճարտարապետության խոշորագույն հուշարձաններից է: Այն կառուցված է Ծղալծիթելա գետի վրա: Վանքի պարսպի հարավային մուտքի մոտ Դավիթ Շինարարի գերեզմանն է: Գելաթին ոչ միայն հոգևոր, այլև մշակութային-կրթական կենտրոն էր:

Սուրբ Գիորգիի անունով է կառուցվել Խարագաուլիի մունիցիպալիտետում գտնվող IX դարում հիմնադրված Ուբիսիի վանքը, որը կապված է վրաց մեծ գործիչ Գրիգոլ Խանձթելիի անվան հետ:

VII-VIII դարերում Տաբակինիի տաճարում է անցկացրել մանկության տարիները իմերների թագավոր Սոլոմոն Բ-ն:

Գեղեցիկ վանական համալիր է Մոծամեթան: Տաճարը կառուցվել է Արգվեթիի էրիսթավներ Դավիթ և Կոնստանտինե Մխեիձեների պատվին, որոնք նահատակվել են արաբական արշավանքների ժամանակ: Վանքի տարածքում ամեն տարի անցկացվում է ժողովրդական տոնակատարություն՝ Մոծամեթոբա:

Իմերեթիի և համայն Վրաստանի զարդն է Բագրատի Աստվածամոր ննջման տաճարը: Այն X-XI դարերով է թվագրվում: 1994 թվականին այն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանների ցանկում:

Ճիաթուրային մունիցիպալիտետում է գտնվում բնության հազվագյուտ ստեղծագործությունը՝ Կացխայի սյունը: Ներկայումս այնտեղ վանականներ են ապրում:

Հատկանշական է Սաչխերեի տարածքում գտնվող Ջրուճիի վանքը, ինչպես նաև Նունիսիի Աստվածամոր տաճարը, որը գտնվում է Խարագաուլիի մունիցիպալիտետի Նունիսի գեղեցիկ հանգստավայրում:

Աշակերտները մշակում են տեքստը, ծանոթանում են մշակութային հուշարձանների նկարազարդումներին և լրացնում աղյուսակը:

| Հուշարձանի անվանումը | Կառուցման ժամանակը | Պատմական դեմք, ում հետ կապված է այս հուշարձանը |
|---|---|---|
| | | |

Մինչև աշակերտները դատողություն կծավալեն մշակութային հուշարձաններին խնամքով վերաբերվելու շուրջ, կարող եք տեղեկություններ տրամադրել՝ կապված Բագրատի տաճարի վերակառուցման հետ:

Ինչպես հայտնի է, Բագրատի տաճարի վերակառուցման նախագիծը, որը մեկնարկել է 2009 թվականին, առաջացրեց հասարակության ոչ միանշանակ և սուր արձագանք:

Տաճարը, որն ընդգրկված էր համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանների ցուցակում, 2010 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշումով ընդգրկվել էր վտանգի տակ գտնվող հուշարձանների ցուցակի մեջ: Իսկ դրա պատճառ անվանվեց տաճարի վրա սկսված վերանորոգման աշխատանքը, որը խախտում էր կառույցի ավթենտությունը և ամբողջականությունը:

| Դասի թեման | **2.6. Իմերեթիի քաղաքները** |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը կծանոթանա Իմերեթիում առկա քաղաքներին, դրանց հիմնադրման պատմությանը և կվերլուծի, թե ինչպես և ինչու էր փոխվում այս տարածաշրջանը: |
| **Համապատասխանությունը ԱՈՒՊ-ին** | (II)2 (II)3 (II)9 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Ուսուցիչը գրատախտակին գրում է Իմերեթիի քաղաքները. Քութաիսի, Զեստափոնի, Ծղալտուբո, Ճիաթուրա, Տղիբուլի, Սաչխերե, Խարագաուլի, Խոնի, Վանի և աշակերտներին խնդրում է ասել, թե ինչն է միավորում այս քաղաքները (ենթադրյալ պատասխանը՝ բոլոր քաղաքները Իմերեթիի տարածաշրջանում են): (3 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Աշակերտների մի մասը մշակում է տեքստի այն մասը, որում խոսքը քաղաք Ճիաթուրայի մասին է, իսկ մյուս մասը մշակում է տեղեկությունը Քութաիսիի մասին: (10 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Աշակերտները լրացնում են աղյուսակը (տե՛ս՝ աղյուսակ) և ներկայացնում դասարանին: (15 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Աշակերտներին տեղեկություններ է տրամադրվում Քութաիսիում բնակվող կաթոլիկների մասին: Աշակերտները գնահատում են կաթոլիկների գործունեությունը: (10 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում<br>Տնային առաջադրանք. Գտնել տեղեկություններ Իմերեթիի տարածաշրջանի քաղաքների, դրանց զարգացման հեռանկարների մասին: |
| **Գնահատումը** | Ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, լրացուցիչ նյութ |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը |
| **Ունեցած գիտելիքը** | Իմերեթիի բնական պայմանները և աշխարհագրական բնութագրիչները |

Աղյուսակ երրորդ ակտիվության համար

| **Քաղաքի անվանումը** | **Հիմնադրման ժամանակը** | **Որ գետի ափին է կառուցված** | **Լրացուցիչ տեղեկություն** |
|---|---|---|---|
| **Ճիաթուրա** | XX դարի սկիզբ | Ղվիրիլա | Լեգենդ Ճիաթուրայի հիմնադրման մասին |
| **Քութաիսի** | 3500 հազար տարի առաջ | Ռիոնի | Բազմազգ քաղաք |

Լրացուցիչ տեղեկություններ Քութաիսիում ապրող կաթոլիկների մասին

Կաթոլիկ միսիոներների և վրաց կաթոլիկների վաստակներից մեկը պետք է համարվի Իմերեթիում բուժական գործի ներդրումը և դրա հետագա զարգացումը, դեղատնային գործի վերածնունդը, փոքր ձեռնարկությունների և ֆաբրիկաների հիմնադրումը, արտասահմանյան երկրների հետ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը: Նրանք նաև լավ էին դրսևորում իրենց մշակութային և հասարակական կյանքում:

XIX-XX դարերի սահմանագծին Քութաիսիում հայտնի անձնավորություն էր Իոսեբ Իվանեի Օցխելին: 1892 թվականին նա Քութաիսիում մանկապարտեզ է հիմնադրել, որը գոյություն է ունեցել մինչև 1903 թվականը: Իոսեբ Օցխելին Վրացիների շրջանում գրագիտություն տարածող ընկերության Քութաիսիի բաժանմունքի նախագահն էր: Ի թիվս այլոց, նրա վաստակներից մեկը Քութաիսիում «Գանաթլեբա» և «Շկոլա» հրատարակչությունների հիմնադրումն է:

Նուգզար Կվարացխելիա, քութաիսցի կաթոլիկները XIX դարում:

## Լրացուցիչ տեղեկություններ

### Խորագիր. Սա հետաքրքիր է

**Սաթափլիայի արգելոցում** գտնվող հսկայական քարանձավը փոքրիկ գետն է հատել: Քարանձավն ունի երկու ելք: Ձմեռվա ավարտին, երբ քարանձավի հյուսիսային մասը դեռ ձյունով է ծածկված, հարավային մասը ծածկված է գույնզգույն ծաղիկներով: Դիտողը ընդամենը 30-35 րոպեում կարող է ձմռանից տեղափոխվել գարուն: Արգելոցում բնակվում են վայրի մեղուներ, ինչի պատճառով այդ վայրը կոչվում է «Սաթափլիա» (թափլի – մեղր բառից):

Սաթափլիան նրանով է հետաքրքիր, որ միակ տեղն է աշխարհում, որտեղ իրար կողք-կողքի դրոշմված են գիշատիչ և խոտակեր դինոզավրերի շուրջ 200 ոտնահետքեր: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 120 միլիոն տարի առաջ այդ վայրերով 7 տարբեր տեսակի 25 դինոզավր է անցել: Խոտակերների բարձրությունը 6 մետր է եղել, իսկ քաշը `30 տոննա:

Իմերեթիում, Նունիսի գյուղում է գտնվում «Սամթա Նունիսի» հանգստավայրը, որը ծովի մակարդակից 750 մ բարձրության վրա է: Այնտեղի կլիմայի յուրահատկությունը պայմանավորում են խառը, փշատերև և սաղարթավոր անտառները: Չվարուլա գետի ափին է գտնվում Չվարե հանգստավայրը՝ հայտնի նույնանուն հանքային ջրով:

### Վանիի գանձարանը

Ավելի քան հարյուր տարի է Վանիի տարածքում հնագիտական պեղումներ են կատարվում, ինչի հետևանքով հնագետները գտնում են բազմաթիվ արժեքավոր իրեր: Դրանց մեծ մասը մ.թ.ա. VIII-I դարերով է թվագրվում: Միայն 2003-2004 թվականներին հայտնաբերված գերեզմաններում գտել են ավելի քան 1000 ոսկյա իրեր: Պեղումներն այսօր էլ շարունակվում են: Այստեղ հայտնաբերված եզակի իրերը կարելի է տեսնել Վանիի հնագիտական թանգարանում և Վրաստանի պետական թանգարանում:

2007 թվականին թանգարանում պահվող նյութերից ընտրվել են 83 անուն ոսկերչության հնագույն եզակի նմուշներ և ցուցադրվել Բեռլինի պետական թանգարանում:

### Բագրատի տաճարը

Բագրատի տաճարն իր ճարտարապետական և գեղարվեստական արժանիքներով առանձնահատուկ տեղ է զբաղեցնում վրացական ճարտարապետության պատմության մեջ՝ որպես զարգացած միջնադարյան շրջանի ոճը վերջնականապես հաստատող կառույց: Պատմականորեն այն միավորված Վրաստանի խորհրդանիշն է: 1994 թվականին Բագրատի տաճարը ՅՈՒՆԵՍԿՕ-ն ընդգրկել է Համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանների ցանկի մեջ:

2009 թվականին Վրաստանի կառավարությունը սկսել է հուշարձանի վերականգնումը, որը պետք է ավարտվեր գմբեթի տեղադրմամբ: Նախագիծը հասարակության կողմից արժանացավ ոչ միանշանակ և սուր արձագանքի: Մասնագետների մի մասը համարում էր, որ տաճարի վրա ընթացող աշխատանքները վնասում էին նրա ավթենտությունը, կառուցվում էր առկա հուշարձանին բացարձակապես չհամապատասխանող, ոչ ավանդական, երկաթբետոնե կառույց:

Մասնագետների մի մասը համամիտ չէր այս կարծիքին: Նրանք մտածում էին, որ անհնար էր տաճարն ամրացնել և նրա վրա տեղադրել գմբեթը՝ առանց այդպիսի համալրումների: Մասնագետների առաջին մասի կարծիքը հաստատվել է և ավթենտության կորստի պատճառով ՅՈՒՆԵՍԿՕ-ն հանել է Բագրատի տաճարը Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկից:

## ԲԱԺԻՆ 3. ՍԱՄԵԳՐԵԼՈ

| Դասի թեման | 3.2. Սամեգրելոն անցյալում և ներկայում |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանում է տեղեկությունների Կոլխեթիի թագավորության մասին: Աշակերտը տարբերում է առասպելն ու իրականությունը: |
| Համապատասխա-նությունը ԱՈՒԴ-ին | (II)1 (II)2 (II)14 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Իմաստային քարտեզ. Ինչ գիտենք արգոնավորդների առասպելի մասին: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Մինի-դասախոսություն Կոլխեթիի թագավորության մասին (5 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Աշակերտները ծանոթանում են արգոնավորդների մասին առասպելից բերված հատվածին և Տիմ Սևերինի ճանապարհորդության մասին տեղեկությանը: Գրավոր պատասխանում են հարցին՝ արգոնավորդների ճանապարհորդությունը առասպել էր, թե՞ իրականություն: (10 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Գրավոր առաջադրանքի շնորհանդես (8 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Քննարկում «Երկրի համար հարստությունը օրհնանք, թե՞ անեծք է» թեմայի շուրջ (10 րոպե)<br>**Ակտիվություն 6.** Տնային առաջադրանք. Գտնել տեղեկություններ Վանիի հնագիտական պեղումների մասին (տե՛ս՝ Էլեկտրոնային ռեսուրսների ցանկ):<br>**Ակտիվություն 7.** Գնահատում (2 րոպե) |
| Գնահատումը | Ընթացիկ առաջադրանքի գնահատման չափանիշներ |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը, անհատապես |
| Ունեցած գիտելիքը | Սամեգրելոյի բնական և սոցիալ-մշակութային բնութագրիչները |

Դասը սկսվում է իմաստային քարտեզի լրացմամբ. ի՞նչ գիտենք արգոնավորդների մասին: Աշակերտներն ասում են որևէ բառ, վայր, անուն, որ կապված է արգոնավորդների մասին առասպելի հետ (Կոլխեթի, հույներ, Արգո, Մեդեա, Յասոն, ոսկեգեղմ, Այետես):

Աշակերտները ծանոթանում են արգոնավորդների մասին առասպելից բերված հատվածին և Տիմ Սևերենի ճանապարհորդության մասին տեղեկությանը: Գրավոր պատասխանում են հարցին. «Արգոնավորդների ճանապարհորդությունը առասպել էր, թե՞ իրականություն»:

**Մինի-դասախոսություն Կոլխեթիի թագավորության մասին.** Կոլխեթիի թագավորությունը գտնվում էր Սև ծովի արևելյան ափին: Հին հունական աղբյուրների համաձայն, թագավորությունը կառավարել են Այետեսի ժառանգները կամ այետիդները: Սկյութների և կիմերների ներխուժումների թուլացումից հետո, Կոլխեթիի թագավորությունը կրկին վերականգնեց անկախությունը: Նրա սահմանները ներառում էին ամբողջ Արևմտյան Վրաստանը: Կոլխեթին տնտեսապես հզոր երկիր էր: Այնտեղ արծաթե դրամ էր հատվում: Կոլխեթին դրամահատման քաղաքակրթության օջախներից մեկն էր: Բացի «կոլխյան թեթրիից», շրջանառության մեջ առատորեն տարածված էին հարևան երկրների՝ սինոպյան, աթենական, աքեմենյանների մետաղադրամներ: Կոլխեթիում զարգացած էր ոսկերչությունը: Մեծ քանակությամբ ոսկե իրեր են գտնվել Վանի բնակատեղիում, որը Կոլխեթիի կարևորագույն տնտեսական և կրոնական կենտրոններից մեկն էր:

Կա կարծիք, որ երկրի համար հարստությունն օրհնություն է, իսկ ոմանց կարծիքով՝ այն անեծք է: Կազմակերպեք թեմատիկ քննարկում տվյալ հարցի շուրջ (ենթադրյալ փաստարկներ՝ երկիրը կունենա շատ թշնամիներ, որոնք կցանկանան իրենց ձեռքն առնել այդ հարստությունը, կամ հարստությունը նպաստում է երկրի զարգացմանը):

| Դասի թեման | **3.7. Սամեգրելոն՝ Վրաստանի ազատության և միասնականության պահապան** |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը ծանոթանում է մոնղոլների տիրապետության ժամանակաշրջանի փաստերին և իրադարձություններին:<br>Աշակերտը վերլուծում է անհատի դերը պատմության մեջ: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | (II)1 (II)2 (II)14 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Մինի-դասախոսություն Վրաստանում մոնղոլների տիրապետության մասին (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Տեքստի վերլուծում: Աշակերտները ծանոթանում են տեղեկությունների Ցոտնե Դադիանիի մասին: (5 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Շարադրություն են գրում «Անհատի դերը պատմության մեջ» թեմայով: (10 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Գրավոր առաջադրանքի շնորհանդես (10 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 6.** Տնային առաջադրանք. Գտնել տեղեկություններ այն պատմական դեմքերի մասին, որոնք նշանակալի ներդրում են ունեցել Վրաստանի պատմության մեջ:<br>**Ակտիվություն 7.** Գնահատում (2 րոպե) |
| **Գնահատումը** | Պատմական երկի գնահատման չափանիշներ |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, գրատախտակ, կավիճ |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը |
| **Ունեցած գիտելիքը** | Տեղեկություններ Սամեգրելոյի անցյալի և ժամանակակից վիճակի մասին |

**Մինի-դասախոսություն Վրաստանում մոնղոլների տիրապետության վերաբերյալ**

Մոնղոլ-թաթարները Վրաստանում առաջին անգամ հայտնվել են 1220 թվականին: Դա տարածքները հետախուզելու համար Չինգիզ Խանի կողմից ուղարկված բանակն էր: Վրաստան մոնղոլները մտան Ադրբեջանի տարանցմամբ: Նրանք առաջին իսկ բախման ժամանակ հաղթանակի հասան: Ի պատասխան՝ Լաշա-Գիորգին մի մեծ բանակ հավաքեց, բայց այս անգամ էլ գլխավոր ճակատամարտում պարտվեց: Չնայած հաղթանակին, մոնղոլները հեռացան Վրաստանից և Հյուսիսային Կովկաս տեղափոխվեցին: 1235 թվականին մոնղոլական բանակն արդեն երկրին մոտեցավ նվաճելու համար: Ռուսուդանը տեղափոխվեց Արևմտյան Վրաստան, իսկ Արևելյան Վրաստանի ազնվականները գերադասեցին մոնղոլների հետ համաձայնագիրը և առանց պայքարի զիջման գնալը: Ռուսուդանը ստիպված էր թշնամու հետ համաձայնագիր ստորագրել: Մոնղոլները Վրաստանում չվերացրին թագավորությունը, սակայն թագավորական գահի ժառանգին իրենք պետք է հաստատեին: Ռուսուդանի մահից հետո, մինչև նոր թագավորի հաստատումը, մոնղոլները փոխեցին երկրի վարչական կարգը և այն կազմակերպեցին՝ ըստ իրենց կարգի, ինչը նշանակում էր ռազմական իշխանավորների տիրապետություն:

Վրացական պետականությանը վտանգ սպառնաց: Վրացի ազնվականները փորձեցին շտկել իրավիճակը, սակայն դավադրությունը բացահայտվեց, և մոնղոլներն այն կանխեցին:

Տեքստի վերլուծություն. Ծանոթանում են տեղեկությունների Ցոտնե Դադիանիի հերոսության մասին, վերլուծում են դրա կարևորությունը Վրաստանի համար և գրում են շարադրություն. «Անհատի դերը պատմության մեջ»: Գնահատում են և ձևակերպում սեփական տեսակետը պատմական այս դեմքի մասին:

## Լրացուցիչ տեղեկություններ (Գլուխ 3. Սամեգրելո)

**Կոլխեթիի ազգային պարկը** ներառում է Սև ծովի արևելյան առափնյա գոտին և Կոլխեթիի դաշտավայրի գերխոնավ տարածքները: Այս տարածքները մեծ նշանակություն ունեն Երկրագնդի վրա կենսաբազմազանության պահպանման համար: Բացի այդ, Կոլխեթիի ազգային պարկին առանձնահատկություն է շնորհում այն, որ ճիշտ այստեղ են հանգստանալու համար տեղ գտնում չվող թռչունները Եվրասիայի և Աֆրիկայի միջև ճամփորդության ժամանակ: Բազմաթիվ թռչուններ այստեղ են մնում ամբողջ տարվա կամ որոշ եղանակների ընթացքում: Կոլխեթիի ազգային պարկի կազմի մեջ մտնող սևծովյան ջրափնյա գոտուն պահպանվող տարածքի կարգավիճակ է շնորհվել ծովում տարածված 3 տեսակի դելֆինների և սաղմոնանմանների պահպանության նպատակով:

**Դարեր շարունակ անտառային հարուստ միջավայրում** ապրելը և մեծ աշխատանքային փորձը հին կոլխերին վարպետացրել են «փայտագործության» մեջ: Արևմտյան Վրաստանի ժողովրդական ճարտարապետությունն ամբողջությամբ փայտամշակման արվեստ է հանդիսանում:

Հեռավոր անցյալից մինչև այսօր Արևմտյան Վրաստանի գյուղի բնակչությունը նախընտրելի է համարում փայտաշեն տունը: Անձրևաշատ և խոնավ երկրամասում փայտաշեն տունը կենցաղային առումով գերադասում էին աղյուսե տանը: Այն շատ հազվադեպ է խոնավանում և, եթե խոնավանում է, արագ օդափոխվում և չորանում է: Փայտի այս առանձնահատկությունը լավ ծանոթ էր նաև հին կոլխերին, և չնայած նրան, որ ունեին բավական չափով քարե շինանյութ, բնակելի տան շինարարության մեջ լեռնային Կոլխեթիում նույնպես առավելությունը փայտին են շնորհել: Այդ մասին բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել հունա-հռոմեական հեղինակների մոտ: Քսենոֆոնը (մ.թ.ա. V դար) Հարավ-Արևմտյան Վրաստան արշավանքների ժամանակ տեսել է պարսպով շրջապատված քաղաքներ և գյուղեր, որտեղ, նրա խոսքերով «բազմաթիվ հոյակապ տներում» և «փայտաշեն ամրություններում» ապրում էր տեղի բնակչությունը: Դասական գրականության հեղինակների տեղեկությունները հաստատում են հնագիտական հայտնագործությունները հնագույն Կոլխեթիի տարածքում: 1933 թվականին Ռեկաշի գյուղում, Քվելոնի կայարանի մոտակայքում (Սենակիի շրջան) հայտնաբերվել է «Նաոխվամու» մեծ դամբարանաբլուրը, որի պեղումների ժամանակ չորս մետր խորության վրա հայտնաբերվել է փայտե կառույց՝ սյուներով տան նման, և այս կառույցի խորշերը լի են եղել կաղինի կեղևներով, ինչպես նաև՝ կորեկի կեղևով, վարազի ոսկորներով, այլ սննդամթերքի մնացորդներով:

Մեր թվարկության առաջին դարում հռոմեացի ճարտարապետ Մարկ Վիտրուվիոսը իր տասը հատորանոց «Տրակտատ ճարտարապետության մասին» աշխատության մեջ տվել է կոլխյան կացարանի համառոտ նկարագրություն: Անտառի առատության պատճառով, գրում է նա, տեղական բնակչությունը միասնական ուժերով էր կառուցում տները: Փայտանյութը դասավորում էին ուղղանկյունաձև, ապա դրանց վերջնամասերի վրա այլ գերաններ էին շարում լայնակի այնպես, որ դրանց ավելացման դեպքում ստացվեր շենքի տարածությունը: Հետո կապում էին հիմքի անկյունները՝ գերանները մեկումեջ իրար հետ կապակցելով, և շարունակում բարձրացնել պատերը՝ կրկին գերանները մեկումեջ շարելով, գերանների արանքները լցնում էին տաշեղներով և այնուհետև կավով ծեփում: Նույն կարգով ավարտում էին տանիքը, այն տարբերությամբ, որ տանիքի գերաններն աստիճանաբար կարճանում էին և հետևաբար տանիքը ևս չորս կողմերից հավաքվում էր կենտրոնում: Կոլխերը նույն կերպ էին կառուցում աշտարակները, – ասում է Վիտրուվիոսը, որը, սակայն, ոչինչ չի ասում այն մասին, թե ինչպես էին այս տները կազմակերպած ներսից:

Միսիոներ Արքանջելո Լամբերտին և Քրիստոփոր Կաստելը, որոնք զբաղվում էին նաև նկարչությամբ, մեզ թողել են նաև Արևմտյան Վրաստանի բնորոշ տների էսքիզներ: Այս էսքիզները առանձնահատուկ կարևորություն ունեն Վրաստանի ժողովրդական նյութական մշակույթի պատմության ուսումնասիրության համար, քանի որ Արևմտյան Վրաստանում տարածված ավանդական կառույցի առաջին գրաֆիկական պատկերներն են:

**Խորագիր. Անհատը պատմության մեջ**

Վրաստանի միավորված թագավորության ժամանակվանից ի վեր Արևմտյան Վրաստանը Լևան II Դադիանիից հզոր կառավարիչ չի ունեցել: Նրա հայրը՝ Մանուչար Դադիանին, Օդիշիի (այսուհետ՝ Սամեգրելո) կառավարչությունն է կառավարել: Նրա մայրը՝ Նեստան-Դարեջան Բագրատիոնին, Արևելյան Վրաստանում Քարթլ-Կախեթիի թագավոր Ալեքսանդր II-ի դուստրն էր, որը ծննդաբերության ժամանակ էր վախճանվել: Լևանը մանկությունն անցկացրել էր Դեդուլեթիում: 1611 թվականին որսի ժամանակ հայրը դժբախտ պատահարի զոհ է դարձել, և 14-ամյա Լևանը հարկադրված է եղել կատարել Օդիշիի կառավարչի պարտականությունները: Այս պաշտոնը նա զբաղեցնում է մինչև մահ՝ 46 տարվա ընթացքում:

Լևան Դադիանին ջանք չէր խնայում Արևմտյան Եվրոպայի երկրների հետ հարաբերությունների ձևավորման համար և այդ նպատակով փորձել է կաթոլիկ եկեղեցու հետ կապեր հաստատել:

1626 թվականին Հռոմի էմիսարները Վրաստան ժամանեցին նվերներով և նամակներով, որ Հռոմի Պապ Ուրբան VIII-ը ուղարկել էր Քարթլ-Կախեթիի, Իմերեթիի, Օդիշիի և Գուրիայի կառավարիչներին:

Հռոմի Պապի դեսպանները մեծ տպավորություն թողեցին Լևանի վրա: Նրանք աչքի էին ընկնում ոչ միայն ընդհանուր կրթությամբ, այլ նաև այնպիսի բնագավառներից ցուցաբերած իրավասություններով, ինչպիսիք են բժշկությունը, ճարտարագիտական գործը, աշխարհագրությունը և աստղագիտությունը: Նրա համար հյուրերը հանդիսանում էին ոչ միայն քաղաքական դաշնակիցներ, այլև ուժ, որը կօգներ Օդիշիի արդիականցմանը և հետամնաց տնտեսության զարգացմանը:

Արևմուտքի հետ տնտեսական հարաբերությունների ամրապնդման համար Լևանը հավակնոտ ծրագիր մշակեց, որը ենթադրում էր Օդիշիի ենթակառուցվածքի զարգացում, մետաքսի արտադրության վերելք և հատուկ առևտրային քաղաքի կառուցում: Այս առևտրի կենտրոնը Օդիշիի տարանցմամբ կկապեր Արևելքն ու Արևմուտքը: Լևանը պատվիրեց նաև կառուցել դրամահատարան, որպեսզի այս ծրագիրը ֆինանսավորելու համար դրամ հատեին:

Այն ժամանակ, Մերձավոր և Հեռավոր Արևելքից եկող ապրանքները Եվրոպայում երկու հիմնական ճանապարհով էին հայտնվում. ծովով (Միջերկրական ծովով) և ցամաքով (Օսմանյան կայսրության տարածքով): Լևանը նպատակ նախանշեց այս առևտրային երթուղիները բազմազան դարձնել և Օդիշիի տարացմամբ նոր առևտրային երթուղի հաստատել: Այդ ընթացքում Օդիշին կայուն և անվտանգ երկիր էր, որը կարող էր նրանից ավելի ցածր մաքսային սակագներ սահմանել, քան թուրքերն էին վճարել տալիս վաճառականներին՝ իրենց տարածքով ապրանքի տարանցման համար, և դրանով իր կողմ գրավել ցանկացողներին: Բացի այդ, Օդիշիի երթուղին համեմատաբար ավելի արագ տարանցման և ժամանակի նկատելի տնտեսման հնարավորություն էր տալիս:

1640-ական թվականներին, իր տնտեսական ծրագրի առաջին փուլի ավարտից հետո, Լևանը Հռոմի Պապի էմիսարներին Հռոմ վերադարձրեց և հետները սրտաբուխ նամակ ուղարկեց, որտեղ Հռոմի Պապին խնդրում էր, որ մետաքս և բուրդ պատրաստող վարպետներ ուղարկեր Օդիշի, որպեսզի տեղացիներին թել մանելու և գործելու արհեստ սովորեցնեին: Լևանը խոստացավ, որ այս «արդյունաբերական դեսպաններին» կապահովեր հողատարածքներով, տներով և ծառայություններով: Սակայն, մինչև ուղարկվածները կհասնեին Հռոմ, Ուրբան VIII-ը մահացավ, Հռոմի նոր Պապ Իննոկենտի X-ը (1644-1655) չէր կիսում Վրաստանի հետ կապեր հաստատելու շահերը: Նա աղոթքով և օրհնանքով սահմանափակվեց, անտեսեց Օդիշիի տնտեսական առաջընթացի ծրագիրը և հուսախաբ արեց Լևանին:

Լևան Դադիանին պարտքերից փրկեց Երուսաղեմի Ջվարիի վանքը և նաև տրամադրեց վանքի վերականգնման համար անհրաժեշտ գումարները, ինչպես նաև արտագրել տվեց Ռուսթավելիի անմահ «Ընձենավորը», որն այժմ պոեմի ամենահին թվագրված ձեռագիրն է հանդիսանում: Լևանի հոգածությամբ անցկացվել են մի շարք այլ մշակութային միջոցառումներ: Լևանի օրոք ստեղծվել են մեծ թվով վիմագրական (էպիգրաֆիկ) հուշարձաններ:

**Քաղվածքներ. Իտալացի միսիոներ Արքանջելո Լամբերտիի «Սամեգրելոյի նկարագրությունը»**

**Այժմ նկարագրենք մեգրելական տունն ու տնամերձը:** Նախ նշենք, որ յուրաքանչյուր մեգրել այնպիսի մեծ բակ ունի, որ այն ավելի դաշտի է նման, քան բակի: Բակում միայն լավ խոտ է աճում, և այնտեղ չեք տեսնի մոլախոտ: Յուրաքանչյուր մարդ գնահատվում է իր բակի մաքրությամբ: Բակը շրջապատված է խրամատով և ցանկապատով: Յուրաքանչյուր բնակիչ փորձում է որքան հնարավոր է գեղեցիկ ցանկապատ կառուցել: Ցանկապատը միմյանց ամուր կպցրած պինդ ցցերից էր հավաքվում: Մուտքի մոտ մեծ դարպաս էին տեղադրում, որն ամրացրած էր կոճերով և մեծ փայտերով՝ վրան քանդակված տարբեր անասունների պատկերներով կամ այլ դեմքերով: Այս աշխատանքը կոպիտ էր արվում, սակայն, այնուամենայնիվ, քանդակված պատկերները ստեղծագործությանը որոշ գեղջկական գեղեցկություն տալիս էին: Բակում ստվեր լինելու համար տարբեր ծառեր էին տնկում, ավելի հաճախ՝ բոխի (Carpeno): Այս ծառն այնպես փարթամ է աճում Կոլխիդայում, որ մյուս բոլոր ծառերին գերազանցում է բարձրությամբ, բնությունն էլ նրան այնպիսի հրաշալի տեսք է տվել, որ, իհարկե, արվեստն իր կողմից անկարող է որևէ բան ավելացնել. ներքևում ինչքան ճյուղեր ունի, փռված են շուրջը և ապա կամաց-կամաց, որքան վեր է բարձրանում, նեղանում է և գագաթին այն աստիճան է բարակում, որ ամբողջությամբ սոճու (Pigna) պտղի է նմանվում: Այսպիսի ծառերը տարբեր շարքերով են տնկում. որոշ ծառեր երկայնքով, որպեսզի օրվա ընթացքում մարդ, երբ ցանկանա, զբոսնի ստվերում, որոշները՝ շրջանաձև են տնկում, որպեսզի շատ մարդ կարողանա ստվերում տեղավորվել և հաց ուտել կամ հանգստանալ, եթե ցանկանան: Ահա, այս ծառերի ստվերի շնորհիվ մեգրելներն ամբողջ ամառ խուսափում էին ծխոտ տնից, և եթե անձրևը նրանց չէր հարկադրում տանը նստել, ժամանակը դրսում էին անցկացնում և անընդհատ բակում էին. զբոսնում էին, բաժանում աշխատանքը, ուտում ու նույնիսկ քնում: Ցանկապատված բակում տունն ու մնացած կառույցներն իրարից այնպիսի հեռավորության վրա էին կառուցում, որ, եթե հանկարծ շինություններից մեկում հրդեհ բռնկվեր, մյուսները չվնասվեին: Հենց որ դարպասից ներս ես մտնում, առաջինը դեմդ է դուրս գալիս ամենամեծ շինությունը, որը մեգրելերեն օխորո (Ochórs) է կոչվում, և որը հյուրեր ընդունելու համար է նախատեսված: Հենց որ տնեցիները նկատում են, որ օտար մարդ է բակ մտել, անմիջապես ընդառաջ են գնում և օխորո տանում, որտեղ հյուրը, եթե ձմեռ է, մի փոքր տաքանում է, հանգստանում, և հետո նոր տանում են տանտիրոջ մոտ: Օխորոյում ծմռանը հաց են ուտում և մի անկյունում տանտիրոջ լավագույն ձին է կապած, որպեսզի ձեռքի տակ լինի, եթե հանկարծ պետք լինի:

**Մեգրելները հավաքներին և տոնակատարություններին** միանման հագուստ են հագնում, որը մինչև ոտքերը երկար է, և քղանցքները գետին են հասնում: Այս հագուստը գեղեցիկ է ինչպես ձևվածքով, այնպես էլ թանկարժեք գործվածքով: Այն կարվում է դամասկոսյան գործվածքով կամ թավիշից ու դիպակից, տակից սամույրի կաշին էր օգտագործվում, վերևից ներքև զարդարված էր ոսկյա կամ մարգարտե կոճակներով: Ամեն ազնվական նման հագուստ մի քանի հատ ունի տարբեր գործվածքներից, որ ըստ անհրաժեշտ միջավայրի կամ մեկը հագնի, կամ մյուսը: Այս հագուստն ընդհանուր է ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար: Ճիշտ է, կանայք մեր երկրի կանանցից հեռու են, սակայն կոկետության մեջ մերոնցից հետ չեմ մնում:

**Եթե հաց ուտելիս օտարերկրացիներ կան,** նրանց պատվում են ըստ նրանց արժանապատվության և կոչման: Եթե նրանք հավասար են հյուրընկալողին, հյուրընկալողը ոտքի վրա կանգնած է տալիս հրահանգներ, որպեսզի հյուրերին լավ ծառայի և ամեն ինչ տեղին լինի: Սկզբից հյուրընկալողն իր ձեռքով է սպասարկում հյուրերին, ինքն է մատուցում կերակուրը, առաջինը նրանց լցնում ըմպելիք, ապա նոր ինքն է նստում ուտելու:

**Ոչ մի ազգ այսպիսի հարգանքով չի վերաբերվում հողագործությանը,** ինչպես մեգրելները: Այլ երկրներում հողագործությամբ միայն ցածր խավի մարդիկ կամ գյուղացիներն են զբաղվում, իսկ Սամեգրելոյում որքան բարձր տոհմական ծագման լինի մարդը, ինքն է աշխատում իր արտերում,

և իր ապրուստն ինքը աճեցնում: Այս գործը երբեք չեն համարում ոչ պատվաբեր: Ընդհակառակը, յուրաքանչյուր հեռատես ազնվական ինքն է այս աշխատանքին ձգտում, ինքն է ձեռքն առնում թոխը և իր արտերը մշակելու համար շատ քրտինք թափում: Մեգրելները նույնիսկ ասացվածք ունեն, որ բոլորին էլ ուտել է անհրաժեշտ՝ և՛ ազնվականին, և՛ գեղջուկին, ուստի յուրաքանչյուր մարդ իր ձեռքով պետք է ստեղծի այն, ինչ նրան անհրաժեշտ է ապրուստի համար: Սկսած իշխաններից, ավարտած շարքային մեգրելով, բոլորը հողագործությամբ են զբաղվում և մեծ ջանասիրությամբ մշակում իրենց արտերը:

**Մեգրելների հիմնական զբաղմունքը որսորդությունն է,** և բոլոր կոչումների և վիճակի մեգրելները զբաղվում են դրանով: Դրան նպաստում է իրենց երկրի դիրքը. այստեղ ապրողների շրջակայքի թփերը, բլուրներն ու դաշտերը հարուստ են վայրի կենդանիներով, որոնց բնակիչներն իրենց աչքով են տեսնում և, իհարկե, նրանց մոտ ցանկություն է առաջանում բռնել կենդանիներին, դա է պատճառը, որ շատերը որսորդությամբ են զբաղվում: Նրանք մի ասացվածք ունեն, որն ասում է, որ նա է երջանիկ մարդ, ով ունի լավ ձի, լավ շուն ու շահեն:

**Ներկայիս բարեսիրտ իշխանները** չունեն մահապատժի դատապարտելու սովորություն ոչ մի հանցագործության համար, որքան էլ դա ծանր լինի, չհաշված իր վեզիրի գործը: Միայն մեկ դեպքի համար ունեն սահմանած մահապատիժ, աստվածանարգության համար, երբ եկեղեցական իրեր են գողանում կամ այրում եկեղեցին: Բոլոր մյուս հանցագործությունները իշխանը կարող է ներել՝ գումար վճարել տալով կամ որևէ մեկի հովանավորությամբ, իսկ ինչ վերաբերում է աստվածանարգությանը, դա անողին ո՛չ գումարը, ո՛չ հովանավորչությունը չեն փրկում, իշխանը չի խղճում նրան, և անպայման մահվան է դատապարտվում: Իմ՝ այնտեղ եղած ժամանակ տարբեր եկեղեցիներից գողացան մի քանի ոսկյա և արծաթյա սրբապատկերներ՝ տարբեր թանկարժեք քարերով զարդարված, ինչպես նաև՝ թանկարժեք իրեր, որոնք պահվում էին այնտեղ: Երկար որոնումներից հետո գտան ավազակներին, ի վերջո բռնեցին, գլխատեցին և կախեցին այնտեղ, ուր կատարել էին հանցագործությունը: Ավելի, քան որևէ այլ երկրում, այստեղ հարգանք են տածում եկեղեցու նկատմամբ: Ավելի շուտ հավատին կդավաճանեն, քան նման հանցագործությունն անպատիժ կթողնեն:

**Երբ մեր Եվրոպայում ամուսնանում են,** գլխավորը օժիտ ստանալն է, ուստի հաճախ ուշադրություն չեն դարձնում ո՛չ մարմնի անբարեմասնությանը, ո՛չ տարեցությանը, ո՛չ էլ ցածր ծագմանը, երբ մյուս կողմում լավ և հարուստ օժիտն է: Ընդհանրապես մտածում են, որ այս բոլոր թերությունները կծածկեն ոսկով և արծաթով: Դա է պատճառը, որ մեծանունները ստորանում են, պատանիներն անշնորհք և անատամ պառավների հետ են ամուսնանում: Կոլխիդայում այդպես չէ, այնտեղ կինն ամուսնու համար ոչ մի օժիտ չի բերում: Մեգրելները կնոջ մեջ փնտրում են ֆիզիկական գեղեցկություն, լավ ծագում և բացարձակ քաղաքավարություն:

**Մեգրելները, ինչպես աշխարհի մնացած ազգերը, սովոր են պատերազմի:**
Այնքան սովոր, որ ծնողները տակավին մանկուց երեխաներին տանում են արշավանքի և չեն խուսափում բոլոր այն դժվարություններից, որ այնտեղ կտեսնեն նրանք: Երեխաներն այնպես են կրում զենքը, ձեռքին պահում վահանը և օգտագործում աղեղը, կարծես ծննդյան օրվանից էին սովոր կռվելու: Բոլորն այն աստիճան ջանասիրությամբ են մոտենում այս գործին, որ պատրաստ ունեն ամեն ինչ, որ անհրաժեշտ է արշավանքի ժամանակ. լավագույն ձիուն, եթե ոչ արշավանքի ժամանակ, այլ կերպ չեն հոգնեցնի, լավագույն պարենամթերքը ևս արշավանքի համար են պահում, ամեն զենք այնպես կազմ ու պատրաստ է, որ կառավարչի առաջին իսկ հրամանով կարող են արշավանքի գնալ: Բացի այդ, երբ անկողնում քնած են, մահճակալի մոտ դրված են նետ ու աղեղը, սուրն ու վահանը, զրահը և թևնոցները, որպեսզի անհրաժեշտության դեպքում պատրաստ լինեն: Օդիշիում ոչ ոք չի կարող խուսափել արշավանքից, որքան էլ բարձր կոչում ունենա կամ հիվանդ լինի: Չենց որ իշխանը հրամայի, ամեն մեգրել, առանց առարկելու, պատրաստ է գնալ նրա հետ: Ինքը՝ իշխանը ևս, որպես ուրիշների համար օրինակ, այնպիսի նվիրումով է մոտենում իր պարտականությանը, որ թեկուզ տենդ ունենա, ճամբարը

չի լքում, անկախ իր հիվանդությունից, զինված մտնում է մարտի դաշտ: Այսպիսով, Կոլխիդայում բոլորն ընտելանում են մեծ տանջանքի և ծանր աշխատանքի: Անկողնու մեջ պառկած վայելք ապրելը նրանց համար չէ, բոլորը սովոր են կարպետի կամ խալու վրա հանգիստ առնելուն: Ե՛վ փոքրիկ երեխաները, և՛ երիտասարդները նույնիսկ սաստիկ ձմռանը ձյան մեջ ոտաբոբիկ են քայլում: Սաստիկ տապին որսի են գնում, ոտաբոբիկ անցնում մեծ գետերը: Այդ ամենն անում են, որ առույգ և արագաշարժ լինեն և կարողանան դիմանալ նեղության, որը սովորաբար պատերազմն է բերում իր հետ: Երբ իշխանին պետք է լինում պատերազմ սկսել, նրան անհրաժեշտ չէ դափ զարկել՝ զորք հավաքելու համար, ո՛չ փող հավաքել, ո՛չ էլ պարենամթերք՝ զորքը պահելու համար: Բավական է միայն անհրաժեշտության դեպքում մի քանի սուրհանդակ ուղարկի կառավարչության բոլոր կողմերը՝ մեծամեծերի, ազնվականների և պաշտոնեական անձանց անունով գրությամբ և տեղեկացնի, որ նրանք որոշակի օրերի ընթացքում, ողջ իրենց մարդկանցով, զենքով և պարենամթերքով լինեն այս կամ այն տեղում, որտեղ պետք է հավաքվի զորքը: Ինչպես նաև, պետք է տեղեկացնի, թե քանի օրվա պարենամթերք տանեն հետները: Այս լուրը ստանալու օրվանից մինչև նշանակված օրը բոլորը պարենամթերքը պատրաստում, զննում են իրենց զենքն ու ձիերը, նորոգում կռվելու սարքերը, ստուգում իրենց մարդկանց և նշանակված ժամանակին ներկայանում մատնանշված տեղը: Կոլխիդան այնքան քիչ է հայտնի, որ ոչ ոք չի հավատա, եթե ասեմ, որ իշխանը հզոր և մեծաքանակ զորք է հանում պատերազմելու. շատ փոքր ժամանակում հավաքում է երեսուն հազար մարտիկ, բոլորը ձիավոր, լավ փորձված և վարժված: Չնայած սովորաբար իշխանը պահանջում է, որ մեկ ծխից մեկ մարդ դուրս գա արշավանքի, ազնվականությունն ավելի իր ցանկությամբ, քան օրենքով, լրիվ դուրս է գալիս այնպես, որ եթե ազնվականը հինգ կամ վեց որդի ունի, նրանք բոլորը ազնվականի հետ գնում են, եթե այն տարիքի են, որ կարող են ձի հեծնել: Երբ ավելի մեծ է փորձությունը և ավելի մեծ զորք է անհրաժեշտ, այդ դեպքում հրաման է արձակվում, որ մեկ ծխից երկու կամ երեք մարդ դուրս գա կռվի: Երբեմն հրաման է արձակվում, որ տանը մնա միայն մեկը՝ տունը պաշտպանելու համար, մնացածները դուրս գան պատերազմելու:

**Սամեգրելոյում ժամանցի համար տարբեր խաղեր կան:** Դրանցից շատերը ողջ աշխարհում են տարածված, մյուսները՝ հենց Սամեգրելոյում ու Վրաստանում, և ուրիշ ոչ մի տեղ: Առաջիններից են շախմատը, նարդին և թղթախաղը: Շախմատ և նարդի ավելի կանայք են խաղում, քան տղամարդիկ, և այնպես վարպետացած և արագաշարժ են, որ զարմանալի տեսարան է: Թղթախաղը շատ չի տարածված և հիմնականում իշխաններն են խաղում այն: Իսկ տեղի լավագույն խաղերը գնդակախաղն ու նշանակետին նետ ու աղեղով կրակելն են:

**Մեգրելները փոխհարաբերություններում այնպիսի քաղաքակիրթ վարք են դրսևորում,** որ այս առումով նրանց ոչ թե բարբարոսներ է պետք կոչել, այլ կարելի է համեմատել քաղաքավարի դռնապահների հետ: Իրենց բոլոր գործողություններում մեգրելները պահպանում են որոշակի քաղաքավարություն: Մեգրելներն ավելի հաճախ են օգտագործում ծունկ ծալելը, ինչը շատ ազնվականական սովորույթ են համարում: Ծունկ են ծալում շատ դեպքերում և հատկապես, երբ նրանք երկար ժամանակ հանդիպած չեն լինում միմյանց: Այս դեպքում նրանք իջնում են ձիուց և միմյանց ողջունում՝ ծունկ ծալելով: Բացի այդ, ողջունում և շնորհավորում են նրան, ով երկար ճամփորդությունից խաղաղությամբ հայրենիք է վերադարձել, ինչպես նաև նրան, ով երկար հիվանդությունից հետո անկողնուց վեր է կացել ու դուրս եկել. բոլորը ով հանդիպում է նրան, ծունկ են ծալում և ասում՝ փառք Աստծուն, լավ և խաղաղությամբ եմ տեսնում քեզ: Երբ ինչ-որ մեկը մահանում է, և նրա մոտ ազգականը սգո շորեր հագած դուրս է գալիս, այդ հարազատին ցավակցություն են հայտնում. դեռ ծնկի են իջնում, այնուհետև աջ ձեռքով հանում են գլխարկը և ձախով չորս կամ հինգ անգամ հարվածում իրենց կրծքին՝ որպես կարեկցանքի և ցավակցության նշան:

**Եթե հաց ուտելու ժամանակ դարպասի մոտով որևէ մարդ է անցնում,** մեգրելական քաղաքավարությունը պահանջում անմիջապես դիմավորել նրան և ներս հրավիրել: Հետևաբար, հաց ուտելիս երբեք չեն փակում դարպասը, և երբեմն ճանապարհի մոտ են նստում հաց ուտելու. երբ մի

օտարական անցնի, պիտի անպայման հրավիրեն սեղանի մոտ: Իսկ անցորդը ոչ մի կերպ չի կարող մերժել: Երբ հրավիրյալը նստում է սեղանի մոտ, հյուրընկալողը պետք է հյուրասիրի նրանով, ինչ իր դեմն է դրված: Երբ հյուրընկալը կերակուր է առաջարկում, հյուրը նրան գլուխ է տալիս և աջ ձեռքն իր գլխին դնում՝ դրանով նա ասում է, որ այս ամենը մեծ ողորմածություն է իր գլխին: Որքան էլ պատվավոր լինի ուտելու պահին ներս եկած հյուրը, հյուրընկալողն իր պարտքը չի համարում յուրայիններին ասել, որ նոր կերակուր բերեն և ամբողջովին բավարար է համարում հյուրին մատուցել այն, ինչ դրված է սեղանին: Հյուրը լիովին գոհ է այս կերակրից, որքան էլ այն քիչ լինի, քանի որ նրան բավականություն է պատճառում ոչ թե կերակրի բազմազանությունը և առատությունը, այլ միայն հրավիրելը և քաղաքավարությունը:

**Ճիշտ է, ցանքի համար ամբողջ երկիրն էլ պիտանի է,** բայց չափից ավելի խոնավության պատճառով, որը փտեցնում է սերմը, հողն այնքան բերք չի տալիս, որքան բերք այսպիսի հողը մեկ այլ վայրում կտար: Հողի մեծ մասն անմշակ է կառավարչի հրամանով, քանի որ նա ցանկանում է, որ ավելի շատ ազատ հողատարածություններ լինեն եղջերուների և վարազների որսի համար: Մեգրելները ջանասիրաբար են աճեցնում մոգարը (ղոմի, մեզ մոտ՝ պանիգո, որը սովորաբար նրանց հիմնական ուտելիքն էր) և դրա համար Սամեգրելոյում, ինչպես մեզ մոտ, ամենուր ծառերի փոխարեն կիանդիպեք թփերի, որպեսզի ծառերի ստվերը չվնասի մոգարը: Ծառերն ամբոջությամբ էտում են, թողնում են միայն ծառի ցողունը, որի վրա հազիվ խաղողատունկն է բարձրանում: Կտրած ճյուղերով ցանկապատում են ցանած հողերը, որպեսզի դրանք պաշտպանեն դաշտերում ազատ թողած անասուններից: Ծառերը ճյուղատելուց հետո սկսում են վարը և հողը վարում են չորս կամ հինգ անգամ՝նույն չափի գութանով, ինչպիսին մեր գութանն է, միայն թե դրանք ծայրին ունեն փոքրիկ երկաթ, չորս մատի չափ, մնացած մասը փայտից է: Նրանց խելամիտ կարծիքով, երկաթե գութան պատրաստելն ավելի թանկ կլիներ, քանի որ կծանրացներ եզներին, և փոքրիկ երկաթով էլ յոլա են գնում: Երբ հողը պատրաստում են, սկսում են ցանել, այնպես որ Պողոս-Պետրոս տոնակատարության ժամանակ համարյա ավարտում են վար ու ցանքը: Բայց դրանից հետո ավելի մեծ աշխատանք է սկսվում. խոնավության պատճառով այստեղ մոլախոտն արագ է աճում, և մեծ աշխատանք է հարկավոր այն վերացնելու համար: Եթե խոտը մի քանի օր աճի, ապա այնպես կշատանա, որ ամբողջությամբ կոչնչացնի ցանքը: Ուստի, հենց որ մոգարը հողից հանում է գլուխը, անմիջապես մարկեղել է պետք, քանի որ գործը շտապ է, և տերն իր մարդկանցով չի կարող հաղթահարել այն, հարևանները պետք է օգնեն: Ով արդեն ցանել է արտը և մարկեղելու ժամանակը եկել է, օգնելու է կանչում նրանց, ում համար դեռ մարկեղելու ժամանակը չէ: Կգա ժամանակը, ուրիշներն էլ նրանց կօգնեն: Քանի որ այս մեծ աշխատանքը պետք է կատարվի սարսափելի շոգին, որպեսզի այն ավելի հեշտացվի մի այսպիսի մեթոդ են հորինել, կարծես ամբողջ գյուղը քեֆ է անում: Այս մեթոդը բաղկացած է երեք բաներից՝ **նադի (խմբերով միմյանց օգնելը), երգ և առատ կերակուր**, որ տալիս է կալվածքի տերը: Հաճախ այդ խումբը բաղկացած է հիսուն և վաթսուն մարկեղողների շարքից: Որպեսզի այդ ժամանակ նրանց խրախուսեն, տերն էլ է մարկեղով կանգնում շարքի գլուխ և մարկեղում, ինչպես մյուսները: Երգը, որ հնչում է այդ ժամանակ, ոչ միայն նրա համար է, որ քաջալերի այդ ուրախ հավաքը, այլ որպեսզի արագ աշխատեն: Դրա համար նրանք ունեն հատուկ երգ, որի ձայնին մարկեղելն այնպես են հարմարեցնում, ինչպես նվագարանին պարը. որքան արագացնում են երգը, այնքան արագացնում են մարկեղելը: Դրա համար շարքի գլուխ կանգնում են երկու երգողներ և սկսում երգել: Այս առաջնորդներին ուտելիքի չափաբաժինը կրկնակի է տրվում, որպեսզի մյուսներին արագացնել տան մարկեղելը: Կերակուրը բավականին առատ է, քանի որ դա է նրանց աշխատանքի միակ գինը: Օրվա ընթացքում երեք անգամ սնունդ են տանում արտ: Իսկ մթնելիս տիրոջ տանն են նրանց համար ընթրիք պատրաստում, որը շատ առատ է լինում: Այս պահին աշխատանքի հետ կապված բոլոր դժվարությունները մոռանում են, մինչև կեսգիշեր նստում և ժամանակ են անցկացնում ուտել-խմելով և երգելով: Ինչպիսի հաճելի տեսարան է, երբ մայրամուտին ավարտում են աշխատանքը և գնում տիրոջ տուն, կարծես մեկ դրոշի զինվորներ լինեն՝ մարկեղները ուսերին և վեց կամ ութ շարքով, կամաց-կամաց գնում են, երգելով և հպարտ-հպարտ մտնում տիրոջ բակ: Հենց որ ներս են մտնում, նստում են սեղանի շուրջ, և անմիջապես նրանց համար կերակուր են բերում:

| Դասի թեման | 4.4. Տարերային երևույթները Սվանեթիում |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանում է Սվանեթիի տարերային երևույթներին, վերլուծում է դրանք հարուցող պատճառները և դատողություն անում պաշտպանական միջոցառումների մասին: |
| Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին | (II)3 (II)6 (II)7 (II)12 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Ուսուցիչը հարց է տալիս. «Ի՞նչ տարերային երևույթներ գիտեք»: Պատասխանները գրվում են գրատախտակի վրա: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Ծանոթանան տեքստում առկա տեղեկություններին և գտնեն նախադասություններ, որտեղ բնության նկատմամբ մարդու անխնա վերաբերմունքի մասին է խոսքը: (15 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Խմբերում քննարկեն և շնորհանդեսի տեսքով ներկայացնեն հետևյալ հարցը. «Ի՞նչ պետք է անի յուրաքանչյուր քաղաքացի և պետություն, որպեսզի խուսափենք տարերային դժբախտությամբ հարուցված խնդիրներից»: (5 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Գնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Տնային առաջադրանք. Գտնել տեղեկություններ էկոմիգրանտների մասին և ներկայացնել դասարանին: |
| Գնահատումը | Ընթացիկ առաջադրանքի և շնորհանդեսի գնահատման աղյուսակներ՝ խորագրեր |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը, խմբեր |
| Ունեցած գիտելիքը | Տարերային երևույթները և դրանց դեմ պայքարի միջոցները |

Դասի սկզբում աշակերտները պետք է նշեն իրենց ծանոթ բնական աղետները. ջրհեղեղներ, երկրաշարժ, սելավ, ձյունահոսք, հրդեհ, երաշտ և այլն:

Նախադասություններ տեքստից, որոնք արտահայտում են բնության նկատմամբ մարդու անխնա վերաբերմունքը. նրանք մոռացել են ավանդույթները, գիտելիքները, որ նախնիներն էին փոխանցել իրենց, տունն այնտեղ են կառուցել, որտեղ սողանքավտանգ և ձյունահոսքավտանգ վայրեր են, իսկ ծառերն այնտեղ են հատել, որտեղ չէր կարելի դրանք հատել:

Երրորդ ակտիվության համար դուք կարող եք օգտագործել T- դիագրամը, որտեղ կգրեն, մի կողմից՝ ինչ պարտավորություն ունի մարդը, իսկ մյուս կողմից՝ ինչ պարտավորություն ունի պետությունը, որպեսզի խուսափի տարերային աղետից առաջացած խնդիրներից:

Էլեկտրոնային ռեսուրսների միջոցով գտնել տեղեկություններ էկոմիգրանտների մասին:

| Դասի թեման | 4.7. Սվանեթին Վրաստանի գանձերի պահոց |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը ծանոթանում է Սվանեթիի մշակութային ժառանգության հուշարձաններին, վերլուծում է դրանց նշանակությունը և դատողություն անում դրանց նկատմամբ հոգատար վերաբերմունքի անհրաժեշտության մասին: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | (II) 3 (II)7 (II)12 (II)14 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Աշակերտները Ջիգսոու մեթոդով մշակում են դասագրքի տեքստում տրված տեղեկությունները: (20 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Շնորհանդես (15 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Աղյուսակ. «Գիտեի, իմացա, ուզում եմ իմանալ» (5 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Գնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Տնային առաջադրանք. Գտնել տեղեկություններ Սվանեթիի ազգագրական թանգարանում պահպանված ցուցանմուշների մասին (տե՛ս` Ռեսուրսների ցանկ): |
| **Գնահատումը** | Շնորհանդեսի գնահատման աղյուսակներ` խորագրեր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, թերթեր, մարկերներ |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը, խմբեր |
| **Ունեցած գիտելիքը** | Տեղեկություններ Սվանեթիի բնական պայմանների և աշխարհագրական օբյեկտների մասին, փոխադրամիջոցները |

Դասի մեջ տրված է ընդարձակ նյութ Սվանեթիի մշակութային ժառանգության մասին, ուստի ցանկալի է, որ ուսուցիչն աշակերտներին մշակել տա տեքստը Ջիգսոու մեթոդի կիրառմամբ (տե՛ս` Ջիգսոու մեթոդը): Դրանից հետո լրացնեն աղյուսակ. «Գիտեի, իմացա, ուզում եմ իմանալ»:

| Գիտեի | Իմացա | Ուզում եմ իմանալ |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

## Լրացուցիչ տեղեկություններ

**Խորագիր. Սա հետաքրքիր է**

**Ադիշիի Ավետարանը** – Հին վրաց լեզվի և գրականության կարևորագույն հուշարձան, թվագրված Ավետարաններից ամենահինը (թվագրվում է 897 թ.): Ցանկն արտագրված է Կլարջեթիում, Շատբերդիի մայրավանքում:

Ադիշիի Ավետարանը Սվանեթիի պատմության և ազգագրության թանգարան (հիմնադրվել է 1936 թ.) տեղափոխվել է 1947 թվականին: Ադիշիի Ավետարանի կարևորությունը մեծացնում են նրան կցված երկու կտակները: Մեկը պատկանում է արտագրողին՝ Միքայելին, երկրորդը՝ պատվիրողին՝ Սոֆրոմին, որը Շատբերդի վանքի առաջնորդն է եղել: Ձեռագրքի վրա եղած ամենավաղ գրառումներից մեկը մեզ ասում է, որ չորս Ավետարանները Տաո-Կլարջեթիից մի քանի այլ ձեռագրերի հետ միասին բերել է Ջումաթիի տիրացու Նիկողայոսը: Ոչ ոք ճշգրիտ չգիտի, թե երբ և ինչպես է հայտնվել ձեռագիրը Սվանեթիում, բայց գրքի եզրագրերում արված գրառումներից երևում է, որ այն XVI դարում արդեն Սվանեթիի Ադիշի գեղեցիկ գյուղ է տարվել: Գիտական եզրակացության համաձայն, Ադիշիի Ավետարանը արտագրվել է հունական բնագրից, որը չի պահպանվել:

**«Աղ Սվանեթիին»** ֆիլմը նկարահանվել է 1930 թ. ռեժիսոր Միխեիլ Կալատոզիշվիլու կողմից: Մեծ ճշմարտությամբ է ցուցադրվում կյանքի ծանրությունը Սվանեթիում: Խիստ և անտանելի պայմաններ, որին ավելանում է աղ չունենալը կամ դրա սակավությունը: Տեղացիները հարթավայր են իջնում աղ գնելու, սակայն ճանապարհների բացակայության պատճառով շատերը զոհվում են: Ֆիլմը պետք է լավատեսորեն ավարտվեր: Այդպիսին էր ժամանակի պահանջը: Ուստի ֆիլմում ցուցադրված են կադրեր, թե ինչպես են քանդվում ժայռերը, պայթեցվում լեռները: Խորհրդային իշխանությունը ճանապարհ է բացում, որն իրականում ավելի ուշ է եղել: Ֆիլմը էկրաններին ընդամենը 4 օր մնաց: Այն արգելեցին: Իսկ արտասահմանյան կինոգործիչները բարձր գնահատական են տվել նրան և համեմատել Լուիս Մունիուելի «Առանց հացի հողը» ֆիլմի հետ:

**Թեթնուլդիի հանգստավայրի** շինարարությունը սկսվել է 2014 թ. մայիսին և ավարտվել 2016 թվականի հունվարին: Հանգստավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2200 մ բարձրության վրա, Մեստիայից 15 կմ հեռավորության վրա: Մասնագետների եզրակացության համաձայն, «Թեթնուլդի» առողջարանային համալիրը կկարողանա միաժամանակ ընդունել 6806 այցելու, իսկ լեռնադահուկային համալիրը միաժամանակ կծառայի 4100 դահուկորդի: Եզակի հանգստավայրը զբոսաշրջիկներին հյուրընկալելու է բոլոր չորս եղանակներին: Դահուկային սեզոնը տևում է 6-7 ամիս: Թեթնուլդիի հանգստավայրում միայն տեղի բնակչությունն է աշխատում:

**Անհետաձգելի օգնության կառավարման կենտրոն 112-ի** հիմնական նպատակն է պաշտպանել ինչպես մարդկանց, այնպես էլ մասնավոր և հանրային սեփականությունը: Ծանուցում կարելի է ստանալ ամբողջ Վրաստանից 24 ժամվա ընթացքում: Զանգը անվճար է և զանգել կարելի է նույնիսկ այն դեպքում, երբ ֆիքսված կամ բջջային հեռախոսը անջատված է երկկողմանիորեն, կամ բջջային հեռախոսում չկա սիմ-քարտ:

**112 համարը չպետք է հավաքեք.** կեղծ ահազանգի, ժամանցի, անձի հեռախոսահամար իմանալու, տաքսի կանչելու, եղանակի կանխատեսում իմանալու նպատակով և այլ նման դեպքերում:

**Մեստիայի օդանավակայանի շինարարությունն** ավարտվեց 2010 թվականին: Այն հայտնի է նաև որպես Մեստիայի Թամար թագուհու անվան օդանավակայան: Ունի թռիչքուղի: Ձմեռվա շրջանում օդանավակայանն ընդունում է մեկ շարժիչով ինքնաթիռներ և փոքրիկ, 18 մարդ ուղևորափոխադրող ինքնաթիռներ: Մեստիայի օդանավակայանը աշխարհի 10 ամենաանսովոր օդանավակայանների ցանկի մեջ է ընդգրկվել, և այն անվանել են «Փոքրիկ վրացական հրաշք»:

**Կարտոֆիլի հայրենիքը** Հարավային և Կենտրոնական Ամերիկան է: Այսօր այս մշակաբույսը տարածված է աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Վրաստանում, որտեղ բնակչությունն այն սկսել է աճեցնել 19-րդ դարի երկրորդ կեսից, կարտոֆիլի ցանքատարածությունների զգալի մասը գտնվում է ծովի մակերևույթից 1000-2500 մ բարձրության վրա:

Կարտոֆիլի տարբեր տեսակները տարբերվում են շրջակա միջավայրի նկատմամբ հարմարվողականությամբ: Այժմ աշխարհում հայտնի է կարտոֆիլի շուրջ 4000 տեսակ:

Եվրոպական սեղանին պերուացիների «հողի խնձորը» (այսպես են կոչել կարտոֆիլը) որոշակի դիմադրությունից հետո է տեղ գտել: Ֆրանսիացի գյուղատնտես Անտուան Պարմանտյեն թագավորի արքունիք ներկայացավ ծաղկած կարտոֆիլի ծաղիկների փնջով և անսովոր ծաղիկներով գրավեց անվանի տիկնանց: Պարմանտյեն լավ գիտեր կարտոֆիլի օգտակար հատկությունների մասին, և սկզբից չկարողանալով բնակչության մեջ այս մշակաբույսի նկատմամբ հետաքրքրություն առաջացնել, թագավորական արքունիքի գյուղատնտեսը խորամանկ միջոցի է դիմել: Նա հրաման է արձակել պետության հողերի վրա ամբողջությամբ կարտոֆիլ ցանել, իսկ դաշտի շուրջ զինված պահապաններ է կարգել: Իրականում այդ պահպանությունը պայմանական էր: Օրվա ընթացքում այն բարեխղճորեն պահպանում էին, իսկ երեկոյան գնում քնելու: Գյուղացիները լավ ուսումնասիրել են պահապանների «օրվա աշխատակարգը» և ամբողջությամբ գողացել ցանած կարտոֆիլը և տեղափոխել իրենց ցանքատարածքներ: Նույն տարում առատ բերք են ստացել, և այնուհետև կարտոֆիլը նրանց հողամասերի հիմնական մշակաբույսն է դարձել:

Սվանեթիի պլանավորված պահպանվող տարածքների մեծ մասը խառը և փշատերև անտառներով է ծածկված: Բազմազան է նաև ֆաունան: Այստեղ ապրում են քարայծ, արջ, լեռնային այծ, կզաքիս, կովկասյան գետնափոր, լեռնային արծիվ, գառնանգղ, արծվառյուծ:

| Դասի թեման | 5.2. Աջարական տունը, տնամերձը և բնակեցման տեսակները |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանում է աջարական տան ու տնամերձի առանձնահատկություններին: Աշակերտը վերլուծում է բնակեցման այս կամ այն տեսակի ձևավորման պատճառները: Աշակերտը համեմատում է տարբեր երկրամասերի բնակեցման տեսակները: |
| Համապատա-սխանությունը ԱՈՒՊ-ին | (II)3 (II)5 (II)7 (II)11 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Աշակերտները վերհիշեն, թե ինչ գործոններ էին ազդում բնակեցման տեսակների վրա: (5 րոպե) **Ակտիվություն 2.** Ծանոթանան դասագրքի տեքստին և նկարագրեն աջարական տունն ու տնամերձը: Գտնեն նմանություններ-տարբերություններ՝ Արևմտյան Վրաստանի երկրամասերի տների հետ համեմատելով: (20 րոպե) **Ակտիվություն 3.** Մինի-դասախոսություն Աջարիայի՝ որպես սողանքավտանգ երկրամասի մասին: Ուսուցիչը տեղեկություններ է տրամադրում սողանքը առաջացնող պատճառների և էկոմիգրանտների մասին: (10 րոպե) **Ակտիվություն 4. Գնահատում (5 րոպե)** **Ակտիվություն 5.** Տնային առաջադրանք. Գտնել տեղեկություններ Աջարիայի շինարարական ավանդույթների մասին: |
| Գնահատումը | Ընթացիկ առաջադրանքի գնահատման չափանիշներ |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, քարտեզ |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը, անհատապես |
| Ունեցած գիտելիքը | Բնական միջավայրը և աշխարհագրական բնութագրիչները, բնակելի տների տեսակները |

Ակտիվություն առաջին. Ասեն, թե ինչ գործոններ էին ազդում բնակեցման տեսակների վրա (բնական պայմաններ, կլիմա, ռեսուրսներ):

Աջարական տանը, տնամերձին ծանոթանալով՝ կարողանան այն համեմատել իմերեթյան կամ մեգրելական բնակելի տների հետ (շինանյութ, տեսակ):

Մինի-դասախոսության տեսքով ուսուցիչը տեղեկություններ տրամադրի այն մասին, որ Աջարիան սողանքավտանգ երկրամասերից մեկն է, ինչն էլ հանգեցրել է էկոմիգրանտների առկայության, և որ պետությունը էկոմիգրանտներին բնակեցրել է Վրաստանի տարբեր երկրամասերում:

### Լրացուցիչ տեղեկություններ ուսուցիչների համար

1981-1988 թվականներին Աջարիայից եկած բնակչությանը հիմնականում բնակեցրին Ասպինձայի և Ադիգենի շրջաններում: Այս շրջանները երկու պատճառով էին հրապուրիչ միգրանտ բնակչության համար: Նախ՝ քանի որ դրանք մոտ էին գտնվում Լեռնային Աջարիային: Մյուս կողմից, քանի որ այս շրջաններում արդեն կար բնակչության բնակեցման ավանդույթ: 1940-ական թվականներից, երբ մեսխեթցիներին հարկադրաբար արտաքսեցին Կենտրոնական Ասիա, նրանց փոխարեն այստեղ բնակեցրին Վրաստանի այլ հատվածներից տեղափոխվածների: Այն փաստը, որ վերջին շրջանում Սամցխեի վրաց բնակչության մեծ մասը տարածաշրջանում վերջերս է բնակեցվել, շատ միգրանտների կարծիքով ավելի հյուրասեր են դարձնում այս տարածաշրջանը նոր ժամանածների համար:

Ժողովրդական պաշտպանի՝ Վրաստանի խորհրդարան ներկայացրած զեկույցը

| Դասի թեման | 5.3. Աջարացիների հյուրընկալությունը |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանում է աջարական ավանդույթներին:<br>Աշակերտը վերլուծում է ավանդույթների նշանակությունը:<br>Աշակերտը դատողություն է անում ավանդույթների պահպանման նպատակահարմարության մասին: |
| Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին | (II)1 (II)3 (II)6 (II)7 (II)13 (II)14 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Ուսուցիչը դասը սկսում է գիտնականի խոսքերով. «Աջարացին, եթե որևէ բան ունի, հյուրին պատիվ տալը մեծ երանություն է համարում: Հյուրին Աստծո մարդ է համարում», և խնդրում է աշակերտներին արտահայտել իրենց կարծիքները տվյալ արտահայտության մասին: Եթե կարող են, օրինակներ բերեն իրենց փորձից կամ ուրիշների պատմածից: (10 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Աշակերտները ծանոթանում են աջարացիների հյուրընկալության մասին տեքստին և դատողություն անում, թե որքանով են համապատասխանում ստացված տեղեկությունները գիտնականի արտահայտությանը, և ընդգծեն այն նախադասությունները, որտեղ երևում է փոխադարձ օգնության ավանդույթի առկայությունը: (5 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Թվարկեն այն գործոնները, որոնք նպաստում են Աջարիայում զբոսաշրջության զարգացմանը: (10 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Դատողություն անեն, թե որքանով կարող է հանդուրժող հասարակությունը սահմանել զբոսաշրջության զարգացման մասշտաբները: (5 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Պատրաստեն բանավոր շնորհանդես՝ որտե՞ղ կհանգստանան Աջարիայում, և ի՞նչն է պայմանավորել այդ ընտրությունը: (10 րոպե)<br>**Ակտիվություն 6.** Գնահատում<br>**Ակտիվություն 7.** Տնային առաջադրանք. Նամակ գրել Աջարիայում ապրող հասակակցին և նամակում արտահայտել Աջարիա մեկնելու հիմնավորված ցանկություն: |

Լրացուցիչ տեղեկություններ ուսուցիչների համար, որոնք օգտակար կլինեն Աջարիայի հյուրընկալության և զբոսաշրջության զարգացման մասին խոսելու համար:

Հարցազրույց Չաքվիում ապրող պատմաբան Ի.Գորգիլաձեի հետ

Զբոսաշրջությունը բնակչության նոր ալիք է հավաքում այստեղ: Այստեղ բազմաթիվ տարբեր ազգությունների, տարբեր կրոնների մարդիկ են գալիս: Մի մասն անշարժ գույք է գնում և բնակվում, մի մասը սեզոնային է գալիս, մի մասն էլ՝ մշտական բնակման: Չաքվիի բնակչության խայտաբղետ կազմը չի փոխվել, ընդհակառակը՝ է՛լ ավելի «խայտաբղետ է դարձել»: Ավելացել են թուրքեր, արաբներ: Չինացիներ այստեղ ապրել են նաև առաջ:

Խաղաղ համագոյակցությունն ինքնին նպաստում է զբոսաշրջության զարգացմանը, հետևաբար, բնակչության տնտեսական հզորացմանը: Այս երկու գործոնները փոխադարձաբար շղթայված են, և մեկի կորուստը մյուսի ոչնչացում է նշանակում:

## Լրացուցիչ տեղեկություններ

**Խորագիր. Սա հետաքրքիր է**

**Մտիրալա ազգային պարկը** գտնվում է Եվրոպայի ամենատեղումնառատ վայրում: Ազգային պարկում պահպանված է եզակի փայտանյութերի անտառային բույսերի անտառ: Միայն այստեղ է աճում գեղեցիկ էպիգեյան, ուրիշ ոչ մի տեղ չի հանդիպում մրտավարդը: Բավականին հարուստ է Մտիրալայի ազգային պարկի կենդանական աշխարհը, ինչպես կաթնասուններով և թռչուններով, այնպես էլ երկկենցաղներով, որոնցից հատկապես պետք է նշել կովկասյան սալամանդրը և փոքրասիական տրիտոնը:

**Կինտրիշիի պահպանվող տարածքները** գտնվում են Քոբուլեթիի շրջանում և ներառում են Կինտրիշիի արգելոցը՝ սաղարթավոր անտառով, որում պահպանվել են հազվագյուտ վերապրուկային բույսեր, այդ թվում՝ 600-700 տարեկան հատապտղային կենին: Արգելոցը Կինտրիշի գետով մեջտեղից կիսված մեկ ամբողջական անտառային զանգված է: Գետի վտակները փոքրիկ ջրվեժներ են ստեղծում: Արգելավայրի ստորին սահմանը ծովի մակարդակից 250-300 մետր բարձրության վրա է գտնվում, իսկ վերինը՝ ալպյան յայլաներին է հասնում: Այլ կենդանիների թվում, Կինտրիշիում ապրում է նաև ջրասամույր, որի սիրած կերը լեռնային կարմրախայտն է:

**Բաթումիի բուսաբանական այգին** հիմնադրվել է 1912 թվականին Անդրեյ Կրասովի կողմից: Այգին աշխարհում իր նմանը չունի, քանի որ այստեղ իրար կողք-կողքի աճում են աշխարհի հինգ մայրցամաքների բույսեր: Այս համագոյակցությանը նպաստում են այգու առանձին հատվածներում բնահողի և կլիմայի առանձնահատկությունները: Այգում, որտեղ 3 դենդրոպարկ կա, Կոլխեթիի անտառի արգելոցն է և լանդշաֆտային-աշխարհագրական սկզբունքով կառուցած 9 բաժինները, ավելի քան 2000 տեսակի բույսեր են աճում: Բաթումիի բուսաբանական այգում տարվա ցանկացած ժամանակ կտեսնեք ծաղկած բույսեր: Այստեղ միայն ձմռանը ծաղկող 40 բույսեր կան:

**Բաթումիի գլխավոր տեսարժան վայրերից մեկը՝ դելֆինարիումը** բացվել է 1974 թվականին, և այդ ժամանակ աշխարհի խոշորագույն դելֆինարիումներից մեկն էր: 1991 թվականին դելֆինարիումը դադարեցրել է աշխատանքը, և միայն 20 տարվա դադարից հետո վերականգնել: Այսօր այն բավարարում է ժամանակակից չափանիշները: Ծովային կենդանիների հիմնական, օժանդակ և կարանտինային լողավազաններն ամեն երկու ժամը մեկ ֆիլտրվում են:

**Գեջային մեղվապահություն.** մեղու պահելու տեխնոլոգիա: Օգտագործում են հին տեսակի մեղվանոց, որը ջարա է կոչվում: Պատրաստվում է լորենու կամ շագանակենու գերանից: Ի տարբերություն ժամանակակից մեղվանոցի, դրանում չկան արհեստական մեղրամոմ և շրջանակներ: Մեղուներն իրենք են ստեղծում մեղրամոմը, ինչը մեծ ժամանակ և էներգիա է պահանջում, արդյունքում ընկնում է մեղվի արտադրողականությունը: Աջարիայում այսօր էլ կհանդիպեք նման մեղվանոցների հաճարենիների վրա (արջի համար հասանելի): Գեջային մեղվաբներ Աջարիայում մի քանի մեղվաբույծներ ունեն: Աճող հետաքրքրություն են հանդես բերում զբոսաշրջիկները: Ճիշտ մոտեցման դեպքում, որպես էկոտուրիզմի մաս, զարգացման հեռանկար ունի:

**Սացիխուրիի ջամեն (աղոթատունը).** Աջարիայի Սացիխուրի գյուղում առկա ջամեն բացի այն, որ ավելի քան 200 տարեկան է, եզակի է իր զարդաքանդակներով: Ուշագրավ են դռների վրա հյուսված դրվագները: Ջամեն կառուցած է ընկուզենուց: 2006 թվականին ընդգրկել են մշակութային ժառանգության հուշարձանների ցուցակի մեջ: Ինչպես մասնագետներն են համարում, զարդաքանդակները, որոնցով ջամեի մասերն են երեսապատած, բնորոշ են վրացական մշակույթին, և դրա օրինակներ հանդիպում են նաև Լազեթիում:

**Շուախևիի մունիցիպալիտետի Խաբելաշվիլեբի գյուղում ասում են,** Խաբելաշվիլիների կամուրջը երեք դար առաջ վարպետ Բերդիձեն գյուղերն իրար հետ կապելու համար է կառուցել:

Գյուղի լիազորի տեղեկության համաձայն, անցյալում կամուրջը տարանցիկ նշանակություն է ունեցել, այն Շուախևիի մունիցիպալիտետի Ճվանիի գետահովտի Բրիլի, Մոխևի և Բարաթաուլի գյուղերը կապող ճանապարհ էր, կապվում էր նաև Խուլոյի մունիցիպալիտետի հետ: Կամուրջը պատրաստված է շիմշատի նյութից, օգտագործվել է նաև շագանակենի, իսկ նրա հիմքը կրաքարով է պատրաստած: Խաբելաշվիլիների փայտյա գերաններով կամուրջն անցյալում ունեցել է փայտյա ծածկ:

Քսաներորդ դարի յոթանասունական թվականներին վնասվելու պատճառով կամրջի ծածկը թիթեղից է պատրաստվել:

# 11. ԱՄՓՈՓԻՉ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ. ԻՆՉ ԳԻՏԵՄ ԵՎ ԻՆՉ ԵՄ ԿԱՐՈՂ

## Գլուխ I. Քարթլի

**Առաջադրանքի պայմանը. Պատրաստել նախագիծ «Ինչ միջոցներ են ձեռնարկված մեր երկրամասում տարերային դժբախտությունները կանխելու համար» թեմայով:**

Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈՒՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը.

Հաս.գիտ.(II) 3, Հաս.գիտ.(II) 5, Հաս.գիտ.(II) 11, Հաս.գիտ. (II) 14

Հմտություններ ու կարողություններ, որ կզարգանան առաջադրանքը կատարելուց հետո.

Տեղեկությունների հայթայթում և կազմակերպում, համագործակցություն, հետազոտություն, խնդրի գիտակցում, դիրքորոշման մշակում:

**Նպատակը.** Աշակերտները տեղեկություններ հայթայթեն իրենց երկրամասին բնորոշ տարերային աղետի/աղետների մասին, վերլուծեն դրանք հարուցող պատճառները և դատողություն ծավալեն այս երևույթները կանխելու ուղիների մասին: Արտահայտեն իրենց վերաբերմունքը այս խնդրի նկատմամբ:

**Կազմակերպման ձևը.** փոքր խմբեր

**Առաջադրանքի գնահատման աղյուսակ՝ խորագիր**

**I չափանիշ**

| № | Աշխատանքի կազմակերպում | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Աշխատանքը լավ է կազմակերպված, առաջադրանքները խմբի անդամների միջև ճիշտ վերաբաշխվեցին: | 2 |
| 2 | Աշխատանքը կազմակերպված է, սակայն խմբի անդամների միջև գործառույթները անհավասար բաշխվեցին: | 1 |
| 3 | Աշխատանքը կազմակերպված չէ, խմբի անդամների միջև գործառույթները չբաշխվեցին: | 0 |

**II չափանիշ**

| № | Հարցազրույցի ձևի և հարցերի համապատասխանությունը առաջադրանքի նպատակին | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Հարցազրույցի ձևը, տրված հարցերը համարժեք են և համապատասխանում են առաջադրանքի նպատակին: | 2 |
| 2 | Հարցազրույցի ձևը, տրված հարցերը մասամբ են համապատասխանում առաջադրանքի նպատակին և խնդրի գիտակցումն էլ պակաս համարժեք է: | 1 |
| 3 | Հարցազրույցի ձևը, տրված հարցերը չեն համապատասխանում առաջադրանքի նպատակին: | 0 |

**III չափանիշ**

| № | Հայթայթած նյութի համարժեքությունը | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Ձեռք բերված նյութը համարժեք է առաջադրանքի նպատակին, իմաստային առումով ճիշտ է ձևակերպած և չի պարունակում փաստացի սխալներ: | 2 |
| 2 | Ձեռք բերված նյութը համապատասխանում է առաջադրանքի նպատակին, սակայն նկատվում են իմաստային առումով ձևակերպման անճշտություններ և փաստացի սխալներ: | 1 |
| 3 | Հայթայթված նյութը անհամապատասխան է առաջադրանքի նպատակին: | 0 |

**IV չափանիշ**

| № | Շնորհանդեսի նպատակի գիտակցում | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Խմբի անդամները հասկանում են շնորհանդեսի նպատակը, ներկայացված թեզիսները և հետազոտության արդյունքները համապատասխանում են առաջադրանքի պահանջին: | 2 |
| 2 | Խմբի անդամները հասկանում են շնորհանդեսի նպատակը, սակայն նրանց հետազոտության արդյունքները մասամբ են համապատասխանում առաջադրանքի պահանջին: | 1 |
| 3 | Խմբի անդամները չեն հասկանում շնորհանդեսի նպատակը: | 0 |

**V չափանիշ**

| № | Պաստառի համապատասխանությունը առաջադրանքի նպատակին | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Խմբի անդամների պատրաստած պաստառի բովանդակությունը համապատասխանում է տվյալ առաջադրանքին: Պաստառն ունի համապատասխան կոչ տարերային երևույթները կանխելու ուղիների մասին: | 2 |
| 2 | Խմբի անդամների պատրաստած պաստառը և կոչը պակաս են համապատասխանում առաջադրանքի նպատակին: | 1 |
| 3 | Խմբի անդամները չունեն պատրաստած պաստառ կամ պաստառի բովանդակությունը չի համապատասխանում առաջադրանքի նպատակին: | 0 |

**Գլուխ II. Իմերեթի. Ամփոփիչ առաջադրանք. Ինչ գիտեմ և ինչ եմ կարող**

Ինչ գիտեմ և ինչ եմ կարող ամփոփիչ առաջադրանքում տրված է մի քանի տեսակ առաջադրանք: Ուսուցիչը, ըստ աշակերտների հետաքրքրությունների և կարիքների, կարող է ընտրել դրանցից որևէ մեկը, կամ ինքը աշակերտներին տա ընտրության հնարավորություն, թե որ առաջադրանքի վրա աշխատեն: Քննարկենք դրանցից մի քանիսը:

Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈՒՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը. Հաս.գիտ.(II) 2, Հաս.գիտ.(II) 3, Հաս.գիտ.(II) 11, Հաս.գիտ. (II) 14, Հաս.գիտ. (II) 15

**Առաջադրանք I. Էքսկուրսիա**

Ինչպես հայտնի է, ցանկացած էքսկուրսիա ներառում է ուսուցման տարր, և այն կարող ենք քննարկել՝ որպես մանկավարժական գործընթաց: Այս գործընթացին մասնակցում է երկու կողմ. նա, ով տրամադրում է տեղեկությունը, և նա, ով ընդունում է տեղեկությունը: Էքսկուրսիան աշակերտների սոցիալական և հետազոտական կարողությունների զարգացման միջոցներից մեկն է: Նման տիպի ուսումնական գործունեությունը խրախուսում է հարցերն աշակերտների կողմից, ճանաչում է նրանց նախաձեռնությունը, նպաստում հետաքրքրասիրությունը: Հնարավորություն է տալիս գիտելիքի զարգացման և գիտակցման համար:

Մեր կողմից ներկայացված ակտիվությունը ներառում է հետևյալ փուլերը. I էքսկուրսիայի համար նախապատրաստվելը կամ նախապես ընտրվում է օբյեկտը (այս դեպքում՝ թանգարան), կրկնվում է ուսումնասիրած նյութը և հայթայթվում լրացուցիչ տեղեկատվություն: II. Կոնկրետ էքսկուրսիան: III. Աշխատանք էքսկուրսիայից հետո, էքսկուրսիայի նյութի ամրապնդման համար: Դրա համար ցանկալի կլինի աշակերտներն անեն գրառումներ այն մասին թե ինչն էր նոր, որ տեսան թանգարանում, որ ցուցադրանմուշը հավանեցին և ինչու, ինչ լրացուցիչ տեղեկատվություն ստացան: Դրանից հետո կարող եք գրավոր առաջադրանք տալ. «Եթե ես էքսկուրսավար լինեմ», որը կգնահատեք հետևյալ գնահատման աղյուսակով՝ խորագրով: Առաջադրանքի առավելագույն միավորը՝ 10:

**Գնահատման խորագիր**

| Գնահատման չափանիշ | Միավոր |
|---|---|
| Առաջադրանքը կառուցվածքային և լեզվական առումով ճիշտ է ձևակերպված: | 1 |
| Աշակերտը պարզաբանում է էքսկուրսիայի՝ որպես ուսումնական միջոցառման նշանակությունը: | 1 |
| Ծանոթ է էքսկուրսիայի ժամանակ վարքի կանոններին: | 1 |
| Անվանում է զբոսաշրջական երթուղին և հիմնավորում իր ընտրությունը: | 2 |
| Սահմանում է էքսկուրսիայի համար անհրաժեշտ ժամանակը և հիմնավորում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: | 2 |
| Սահմանում է էքսկուրսիայի համար անհրաժեշտ ռեսուրսները: | 1 |
| Առաջադրանքի բովանդակությունը համապատասխանում է վերնագրին: | 1 |
| Աշխատության մեջ երևում է աշակերտի իրազեկվածությունը: | 1 |

**Առաջադրանք 2.** Ազգագրական անկյունի կազմակերպում: Աշակերտներին հանձնարարվում է գտնել հին իրեր, կազմակերպել ազգագրական անկյուն և կատարել էքսկուրսավարի դեր:
Նպատակը. Կզարգանան աշակերտների՝ տեղեկությունների հայթայթման և կազմակերպման, հաղորդակցման, հետազոտման կարողությունները:

Գնահատման խորագիր: Առաջադրանքի առավելագույն միավորը՝ 10:

| Գնահատման չափանիշ | Միավոր |
|---|---|
| Խոսում է հստակ, հասկանալի: | 1 |
| Արդյունավետ է կիրառում ոչ բառային հաղորդակցման ձևերը: | 1 |
| Հիմնավորում է սեփական ընտրության ճշմարտացիությունը իր կողմից ընտրված իրի մասին: | 1 |
| Հայթայթված նյութը համապատասխանաբար է մշակված: Ձեռք բերված նյութը սակավ է և մակերեսորեն է մշակված: – 1 | 2 |
| Բովանդակությունը կոռեկտ է, փաստերը ճշգրիտ են և հստակ: – 3<br>Բովանդակությունը հիմնականում կոռեկտ է, սակայն հանդիպում են որոշ չհամապատասխանող տեղեկություններ: – 2<br>Բովանդակությունն անհամապատասխան է և հաճախ հանդիպում ենք սխալ տեղեկությունների: – 1<br>Բովանդակությունը չի համապատասխանում առաջադրանքի պայմանին: – 0 | 3 |
| Տեղեկատվության տիրապետման մակարդակը (համարժեք հարց-պատասխան) | 1 |
| Ժամանակի սահմանաչափի պահպանում | 1 |

**Առաջադրանք 3.** Պատրաստել «Դինոզավրերը Վրաստանում» թեմայով շնորհանդես խմբերում:

Առաջադրանքը գնահատվում է հետևյալ խորագրով: Առաջադրանքը գնահատվում է առավելագույնը 10 միավորով:

| **Գնահատման չափանիշ** | **Միավոր** |
|---|---|
| **Խմբի կողմից աշխատանքի նպատակի գիտակցում**<br>Խումբը լավ է գիտակցել աշխատանքի նպատակը – 2<br>Խումբը մասամբ է գիտակցել աշխատանքի նպատակը – 1<br>Խումբը աշխատանքի նպատակը չի գիտակցել – 0 | 2 |
| **Աշխատանքի կազմակերպում**<br>Աշխատանքը լավ է կազմակերպված, խմբի անդամների միջև աշխատանքը ճիշտ է բաշխած: – 2<br>Աշխատանքը մասամբ է կազմակերպված, խմբի անդամների միջև գործառույթները անհամաչափ են բաշխված: – 1<br>Աշխատանքը չի կազմակերպած, խմբի անդամների միջև գործառույթները բաշխած չեն: – 0 | 2 |
| **Ժամանակի սահմանաչափ**<br>Պահպանում են ժամանակի սահմանաչափը – 2<br>Դժվարանում են պահպանել ժամանակի սահմանաչափը – 1<br>Չեն կարող պահպանել ժամանակի սահմանաչափը – 0 | 2 |
| **Թեման հասկանալի է ներկայացված** | 1 |
| **Բովանդակությունը կոռեկտ է, փաստերը ճշգրիտ են և հստակ, կիրառած են դիդակտիկ նյութեր – 3**<br>Բովանդակությունը կոռեկտ է, կիրառած են դիդակտիկ նյութեր, սակայն հանդիպում են որոշ չհամապատասխանող տեղեկություններ – 2<br>Բովանդակությունն անհամապատասխան է և հաճախ հանդիպում ենք սխալ տեղեկությունների, դիդակտիկ նյութերը սակավ են – 1<br>Բովանդակությունն անհամապատասխան է, չեն օգտագործված դիակտիկ նյութերը – 0 | 3 |

Առաջադրանք IV-ը նախատեսում է օգնության ցուցաբերում հասակակիցներին, ովքեր չունեն սովորելու և հանգստանալու հնարավորություն: Այս առաջադրանքի շրջանակներում աշակերտներին կարող եք առաջարկել հետևյալ ակտիվությունը, որի նպատակն է գիտակցել երեխաների իրավունքներն ու պարտականությունները:

Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈՒՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը. Հաս.գիտ.(II) 8, Հաս.գիտ.(II) 9

Աշակերտների փոքր խմբերին բաժանեք Երեխաների իրավունքների կոնվենցիայի հոդվածների ցանկը, որոնց նախօրոք կծանոթանան: Խմբերը թերթերի վրա պետք է պատրաստեն ցուցապաստառներ՝ բաղկացած երեք մասից: Առաջին մասում գրեն որևէ հոդվածի տեքստ տվյալ կոնվենցիայից և արտահայտեն իրենց կարծիքը, թե ինչ է ենթադրում այս իրավունքը (օրինակ՝ կրթության իրավունք, հանգստանալու և ազատ ժամանակ ունենալու իրավունք, կարծիքների և շահերի արտահայտման իրավունք), երկրորդում փակցնեն նկար, որը խորհրդանշորեն արտահայտում է այս իրավունքը, իսկ երրորդում՝ պատասխանատվություն, որ ունեն տվյալ իրավունքի պահպանման համար: Կազմակերպեք այս ցուցապաստառների ցուցահանդես:

Առաջադրանքի գնահատման աղյուսակ՝ խորագիր

| Բարձր | Միջինից բարձր | Միջին | Ցածր |
|---|---|---|---|
| Խմբի անդամները ծանոթ են երեխաների իրավունքներին և գիտակցում են իրենց պարտականություններն ու պատասխանա-տվությունները: | Խմբի անդամները ծանոթ են երեխաների իրավունքներին և փորձում են գիտակցել իրենց իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվու-թյունները: | Խմբի անդամները ծանոթ են երեխաների իրավունքներին և կարիք ունեն օգնության՝ գիտակցելու իրենց պարտականություններն ու պատասխանատ-վությունները: | Խմբի անդամները ծանոթ չեն երեխաների իրավունքներին և չեն կարող գիտակցել իրենց իրավունքները, պարտականություններն ու պատասխանա-տվությունները: |

**Գլուխ III. Սամեգրելո: Ամփոփիչ առաջադրանք. Ինչ գիտեմ և ինչ եմ կարող**

Ամփոփիչ առաջադրանքը ներառում է մի քանի տեսակ առաջադրանք, որոնցից ուսուցիչը, դասարանի կարիքներից և առանձնահատկությունից ելնելով, կարող է ընտրել որևէ մեկը:

Առաջադրանք 1. Նախագիծ ոչնչացման եզրին գտնվող կենդանիների և թռչունների մասին

Առարկայական չափորոշչի համապատասխան ԱՈՒՊ-ի ձեռքբերվելիք արդյունքները Հաս.գիտ. (II) 2, Հաս.գիտ. (II) 7, Հաս.գիտ. (II) 8, Հաս.գիտ. (II), 9 Հաս.գիտ. (II) 12

Նպատակը. Գտնել տեղեկություններ ոչնչացման եզրին գտնվող թռչունների և կենդանիների մասին, վերլուծել մարդու ներգործության վնասակար հետևանքները, գիտակցել սեփական պատասխանատվությունն այս խնդիրների նկատմամբ և սեփական ներգրավվածությամբ՝ դրանց ուղղման մեխանիզմները:

Կազմակերպման ձևը. փոքրիկ խմբեր
Առաջադրանքը գնահատվում է 10 միավորով:
Առաջադրանքի գնահատման աղյուսակ՝ խորագիր

| **Գնահատման չափանիշ** | **Միավոր** |
|---|---|
| Խմբի կողմից աշխատանքի նպատակի գիտակցում (խումբն աշխատանքի նպատակը լավ է գիտակցել) – 2<br>Խումբը մասամբ է գիտակցել աշխատանքի նպատակը – 1<br>Խումբը աշխատանքի նպատակը չի գիտակցել – 0 | 2 |
| Աշխատանքի կազմակերպում<br>Աշխատանքը լավ կազմակերպված է, խմբի անդամների միջև աշխատանքը ճիշտ բաշխվեց – 2<br>Աշխատանքը մասամբ է կազմակերպված, խմբի անդամների միջև աշխատանքը անհավասար բաշխվեց – 1<br>Աշխատանքը կազմակերպված չէ, խմբի անդամների միջև գործառույթները չեն բաշխվել – 0 | 2 |
| Համացանցային ռեսուրսներով և օժանդակ նյութերի կիրառմամբ հայթայթած նյութը համապատասխանում է առաջադրանքի նպատակին – 2<br><br>Համացանցային ռեսուրսներով և օժանդակ նյութերի կիրառմամբ հայթայթած նյութը պակաս է համապատասխանում առաջադրանքի նպատակին – 1<br><br>Համացանցային ռեսուրսներով և օժանդակ նյութերի կիրառմամբ հայթայթած նյութը չի համապատասխանում առաջադրանքի նպատակին – 0 | 2 |
| Պլանավորված ակտիվությունները (տեղեկատվության տարածում, սոցիալական ցանցի միջոցով սեփական երկրամասում ոչնչացման եզրին գտնվող կենդանիների և թռչունների տեսակները որոշել) համապատասխանում են նախագծի նպատակին – 2<br><br>Պլանավորված ակտիվությունները (տեղեկատվության տարածում, սոցիալական ցանցի միջոցով սեփական երկրամասում ոչնչացման եզրին գտնվող կենդանիների և թռչունների տեսակները որոշել) պակաս են համապատասխանում նախագծի նպատակին և հետազոտությունը անցկացված է մակերեսորեն – 1<br><br>Պլանավորված ակտիվությունները (տեղեկատվության տարածում, սոցիալական ցանցի միջոցով սեփական երկրամասում ոչնչացման եզրին գտնվող կենդանիների և թռչունների տեսակները որոշել) չեն համապատասխանում նախագծի նպատակին – 0 | 2 |
| Կոչի տեքստը համապատասխանում է նախագծի նպատակին և ամրապնդած է փաստարկներով – 2<br>Կոչի տեքստը պակաս փաստարկված է – 1<br>Խումբը չի կազմել կոչի տեքստ – 0 | 2 |

**Առաջադրանք 2. Մեգրելական խոհանոցի օր. մրցույթ**

Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈՒՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը. Հաս.գիտ.(II) 3, Հաս.գիտ.(II) 10 Հաս.գիտ.(II) 14

Մրցույթի համար մասնակիցներին բաժանե՛ք խմբերի: Յուրաքանչյուր խումբ ուսուցչի մատնանշմամբ կամ սեփական ցանկությամբ ընտրի որևէ մեգրելական կերակրատեսակ և պատրաստի մրցույթի համար: Խմբի աշխատանքը կգնահատվի համապատասխան գնահատման աղյուսակով, որը նախապես կծանոթացնեք աշակերտներին:

**Առաջադրանքի գնահատման աղյուսակ՝ խորագիր**
**Առաջադրանքի գնահատման առավելագույն միավոր՝ 10**

| **Գնահատման չափանիշները** | **Միավոր** |
|---|---|
| Աշխատանքի կազմակերպում<br>Աշխատանքը լավ կազմակերպված է, խմբի անդամների միջև աշխատանքը ճիշտ բաշխվեց – 2<br>Աշխատանքը մասամբ է կազմակերպված, խմբի անդամների միջև գործառույթները անհավասարաչափ են բաշխվել – 1<br>Աշխատանքը չի կազմակերպված, խմբի անդամների միջև գործառույթները չեն բաշխվել – 0 | 2 |
| Ժամանակի սահմանաչափի պահպանում | 1 |
| Հիգիենայի պայմանների պահպանում | 1 |
| Մթերքների ճիշտ ընտրություն | 1 |
| Հումքի մշակում և կերակուրների պատրաստման համար սարքերի ճիշտ օգտագործում | 1 |
| Ճաշ պատրաստելու մեթոդի ճիշտ ընտրություն | 1 |
| Ֆինանսական ծախսերի ճիշտ սահմանում | 1 |
| Կերակրի համը | 1 |
| Կերակրի ձևավորումը | 1 |

**Գլուխ IV. Սվանեթի. Ամփոփիչ առաջադրանք. Ինչ գիտեմ և ինչ եմ կարող**

Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈՒՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը. Հաս.գիտ.(II) 3, Հաս.գիտ.(II) 7., Հաս.գիտ.(II) 8, Հաս.գիտ.(II) 9, Հաս.գիտ.(II) 14

Նպատակը. Աշակերտները գիտակցեն էլեկտրաէներգիայի ոչ խելամիտ օգտագործման վնասակար հետևանքները շրջակա միջավայրի պայմանների համար, նախաձեռնություն ցուցաբերեն և նախանշեն խնդրի լուծման սեփական ուղիները, նրանց մոտ զարգանա հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ:

**Առաջադրանքի գնահատման աղյուսակ՝ խորագիր**

**I չափանիշ**

| **№** | **Աշխատանքի կազմակերպում** | **Միավորներ** |
|---|---|---|
| 1. | Աշխատանքը լավ է կազմակերպված, առաջադրանքները խմբի անդամների միջև ճիշտ վերաբաշխվեցին: | 2 |
| 2 | Աշխատանքը կազմակերպված է, սակայն խմբի անդամների միջև գործառույթները անհավասար բաշխվեցին: | 1 |
| 3 | Աշխատանքը կազմակերպված չէ, խմբի անդամների միջև գործառույթները չբաշխվեցին: | 0 |

**II չափանիշ**

| № | Հետազոտության (հարցում, տվյալների համեմատում, գործնական փորձի արդյունքներ) համապատասխանությունը առաջադրանքի նպատակին | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Հետազոտությունները (հարցումը, տվյալների համեմատումը, գործնական փորձի արդյունքները) ադեկվատ են և համապատասխանության մեջ են առաջադրանքի նպատակի հետ: | 2 |
| 2 | Հետազոտությունները (հարցումը, տվյալների համեմատումը, գործնական փորձի արդյունքները) մասամբ են պատասխանում առաջադրանքի նպատակին և խնդրի գիտակցումն էլ պակաս ադեկվատ է: | 1 |
| 3 | Հետազոտություն չի անցկացվել: | 0 |

**III չափանիշ**

| № | Համացանցային ռեսուրսներով հայթայթած նյութի համարժեքությունը | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Ձեռք բերված նյութը համարժեք է առաջադրանքի նպատակին, իմաստային առումով ճիշտ է ձևակերպած և չի պարունակում փաստացի սխալներ: | 2 |
| 2 | Ձեռք բերված նյութը համապատասխանում է առաջադրանքի նպատակին, սակայն նկատվում են իմաստային առումով ձևակերպման անճշտություններ և փաստացի սխալներ: | 1 |
| 3 | Հայթայթված նյութը անհամապատասխան է առաջադրանքի նպատակին: | 0 |

**IV չափանիշ**

| № | Խմբի կողմից աշխատանքի նպատակի գիտակցում | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Խումբը աշխատանքի նպատակը լավ է գիտակցել: | 2 |
| 2 | Խումբը աշխատանքի նպատակը մասամբ է գիտակցել: | 1 |
| 3 | Խումբը աշխատանքի նպատակը չի գիտակցել: | 0 |

**V չափանիշ**

| № | Պաստառի համապատասխանությունը առաջադրանքի նպատակին | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Խմբի անդամների պատրաստած պաստառի բովանդակությունը համապատասխանում է տվյալ առաջադրանքին և ջրի ծախսի տնտեսման կոչ է անում: | 2 |
| 2 | Խմբի անդամների պատրաստած պաստառը պակաս է համապատասխանում առաջադրանքի նպատակին: Չի երևում ջրի ծախսի տնտեսման կոչ: | 1 |
| 3 | Խմբի անդամները չունեն պատրաստած պաստառ կամ պաստառի բովանդակությունը չի համապատասխանում առաջադրանքի նպատակին: | 0 |

**Գլուխ V. Աջարիա: Ամփոփիչ առաջադրանք. Ինչ գիտեմ և ինչ եմ կարող**
Ծնորհանդես պատրաստել գրավոր կամ էլեկտրոնային եղանակով:

Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈԻՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը. Հաս.գիտ.(II) 3, Հաս.գիտ.(II) 7., Հաս.գիտ.(II) 13, Հաս.գիտ.(II) 14

Նպատակը. Տեղեկություններ գտնեն զբոսաշրջության զարգացման միտումների մասին աշխարհում և Վրաստանում, բնութագրեն Աջարիայի զբոսաշրջական ներուժը, վերլուծեն նրա զարգացման հեռանկարները և նշանակությունը երկրի էկոնոմիկայում:

**Առաջադրանքի գնահատման խորագիր**

| Գնահատման չափանիշ | Միավորներ |
|---|---|
| **Խմբի կողմից աշխատանքի նպատակի գիտակցում**<br>Խումբն աշխատանքի նպատակը լավ է գիտակցել – 2<br>Խումբը մասամբ է գիտակցել աշխատանքի նպատակը – 1<br>Խումբը աշխատանքի նպատակը չի գիտակցել – 0 | 2 |
| **Տեղեկությունների հայթայթման ձևերը տարբեր երկրներում զբոսաշրջության զարգացման մասին**<br>Խումբը ադեկվատ է կիրառում տեղեկությունների հայթայթման տարբեր եղանակներ (համացանց, հարցում) – 2<br>Խումբը կիրառում է տեղեկությունների հայթայթման միայն մեկ եղանակ (օրինակ, միայն համացանց կամ միայն հարցում) – 1<br>Խումբը չունի հայթայթած նյութ տարբեր երկրներում զբոսաշրջության զարգացման մասին – 0 | 2 |
| **Տվյալների մշակում**<br>Խմբի անդամների կողմից կատարվում է տվյալների լիարժեք վերլուծում, համեմատում և վերլուծում – 2<br>Խմբի կողմից տվյալների վերլուծումը մակերեսային է – 1<br>Խմբի անդամները չեն կատարում տվյալների վերլուծում – 0 | 2 |
| Հարմարավետ հանգստի պայմաններ կազմել: | 1 |
| Խմբի անդամներն արտահայտում են իրենց կարծիքները: | 1 |
| Խմբի անդամներն անում են եզրակացություն և ամրապնդում կոնկրետ օրինակներով: | 1 |
| Խմբի անդամների դատողությունը փաստարկված և տրամաբանական է: | 1 |

## 12. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾԻՔՆԵՐ

**Խորհուրդներ աշակերտներին.**

Համացանցի միջոցով կարող եք տեղեկություններ գտնել ցանկացած թեմայի մասին: Գլխավորն այն է, որ մտորեք այն մասին, թե ինչպես կկարողանաք հետազոտման թեմայի մասին ամենաարժանահավատ տեղեկությունը ձեռք բերել:

**Տեղեկատվություն տեսնել**

Քանի որ համացանցը բոլորի համար հասանելի է, և բոլորը կարող են տեղեկություններ տեղադրել այնտեղ, մինչև այն օգտագործելը, անպայման անհրաժեշտ է ստուգել, թե որքանով արժանահավատ է այն տեղեկությունը, որ գտել եք դուք:

Փորձեք խնդիրը հետևյալ կերպ դնել.

- Նույն տեղեկությունը կարո՞ղ եք գտնել համացանցի այլ էջերում:
- Ո՞ւմ կողմից է հրապարակված տեղեկությունը:
- Ի՞նչ շահ կարող է ունենալ անձը կամ կազմակերպությունը, որը հրապարակել է տեղեկությունը, որպեսզի այն բոլորի համար հասանելի դարձնի:
- Վստահելի՞ է արդյոք այն անձը կամ կազմակերպությունը, ով հրապարակում է տվյալ տեղեկությունը:
- Համացանցում հրապարակած տեղեկությունը վերստուգեք այլ աղբյուրների միջոցով՝ ձեռք բերված տեղեկության հետ համեմատության միջոցով:
- Այս տեղեկությունը հավաստող փաստեր կարո՞ղ եք գտնել գրքերում, հարցազրույցների միջոցով կամ սեփական փորձառությամբ:
- Համացանցի միջոցով ձեռք բերված տեղեկությունը նո՞ր է: Հասկանալի՞ լեզվով է փոխանցած, ավելի հասկանալի՞ է, քան այն նման տեղեկությունը, որը գրքում կարող է լինել տրված, համացանցի միջոցով կամ անձնական փորձով լինի ձեռքբերված:
- Ո՞ր տեղեկությունն է համապատասխանում քո նպատակին ամենից շատ:

**Նկարների և պատկերների մեկնաբանում**

Տեքստի նման, նկարը ևս բազմաթիվ տեղեկություններ է պարունակում: Հաջորդ խորհուրդները կօգնեն ձեզ նկարի մեկնաբանման և այն ընկալել-հասկանալու մեջ:

**Նկարի քննարկում**

- Նկարագրե՛ք նկարը ձեր խոսքերով:
- Միմյանց հետ կիսվե՛ք ձեր կարծիքներով այն մասին, թե ինչն է նկարում ստեղծում իմաստը, ինչ կա նրանում առանձնահատուկ կամ նշանակալի:
- Միմյանց հարցեր տվե՛ք՝ կապված նկարի հետ:
- Իրար փոքր առաջադրանքներ տվե՛ք, ինչպիսիք են՝ փնտրիր, գտիր, ցույց տուր, բացատրիր...
- Դատողություն ծավալեք այնպիսի հարցերի մասին, ինչպիսիք են՝ ինչո՞ւ են ընտրվել այս նկարները, ո՞ր նկարն է համապատասխանում և տեղեկատվություն տրամադրում այն տեքստի մասին, որին կցված են նկարները, ո՞ր նկարն է հակասում տեքստում արտահայտված մտքին:

**Ցուցահանդեսի կազմակերպում**

Խորհուրդներ

**1.** Ի՞նչ ենք ցանկանում ցույց տալ:
- Ո՞րն է այն գլխավոր ուղերձը, որ ուզում ենք ասել այս ցուցահանդեսի միջոցով:
- Ի՞նչ անվանում ընտրենք ցուցահանդեսի համար:

**2.** Ո՞վ է լսարանը:
- Մեր դպրոցի ուսուցիչները և աշակերտները:
- Ծնողներ և քույր-եղբայրներ:
- Շահառուներ զբոսաշրջական գործակալությունից:

**3.** Որտե՞ղ կանցկացվի ցուցահանդեսը:
- Դասասենյակում, թե՞ դպրոցի այլ տարածքում:
- Հանրային վայրում (օրինակ, մունիցիպալ շենքի դահլիճում):
- Ի՞նչ տարածք կտրամադրվի ցուցահանդեսին, և ինչպիսի՞ն կլինի լուսավորումը:
- Կունենա՞նք այն ենթակառուցվածքը, որը ցանկանում ենք ունենալ:

4. Ցուցահանդեսն ինչպե՞ս դարձնենք տպավորիչ:
   - Մոդելները և ցուցահանդեսային ցուցանմուշներն այնպես պետք է տեղադրենք, որ հնարավոր լինի ձեռքով դիպչել:
   - Պետք է նախատեսենք և առանձնացնենք տարածք նրա համար, որ ցուցահանդեսային տարածքում հնարավոր լինի խաղ կազմակերպել, ցուցադրանմուշները փորձարկել, դրանք դիտարկել կամ փորձեր անցկացնել:
   - Ստեղծենք երաժշտական ֆոն, կամ մենք ինքներս նվագենք երաժշտություն: Դիտողներին առաջարկենք թեթև նախաճաշ:
   - Նշանակենք էքսկուրսավարներ, որոնք դիտողներին կծանոթացնեն ցուցադրանմուշները:
   - Պատրաստենք թռուցիկներ, որոնք դիտողներին կծանոթացնեն ցուցադրանմուշները:
   - Կազմակերպենք մրցույթ կամ վիկտորինա:
5. Մինչև ցուցահանդեսի կազմակերպումը, ո՞ւմ պետք է տրամադրենք տեղեկատվություն ցուցահանդեսի մասին:
   - Դպրոցի ուսուցիչներին:
   - Դպրոցի սպասարկու անձնակազմին:
   - Դպրոցի խորհրդի անդամներին:
   - Դասղեկին:
   - Փորձագետի, ով կօգնի կազմակերպել ցուցահանդեսը:
   - Հյուրերի:
6. Ի՞նչ պետք է անենք
   - Կազմենք պլան:
   - Կազմենք նյութերի ցանկը:
   - Կազմենք ժամանակացույց (ով, երբ և ինչ է անում):
   - Սովորեցնենք ծախսերը հաշվառել (ինչ գումար ունենք ձեռքի տակ և որքանը կծախսենք):
   - Պատրաստենք թռուցիկներ կամ հրավիրատոմսեր:
   - Տեղեկատվություն տրամադրենք տեղի թերթին:
7. Ի՞նչ գնահատում կունենա ցուցահանդեսը:
   - Որո՞նք են ամենակարևոր չափանիշները:
   - Ո՞վ կգնահատի ցուցահանդեսը (ուսուցիչներ, համադասարանցիներ, հրավիրյալ հյուրեր):

**Շնորհանդեսների պատրաստում և ներկայացում**

Պատրաստվել ելույթի համար և պլանավորել.

1. Ո՞վ կլինի ունկնդրի դերում:
   - Որտե՞ղ պետք է զեկուցումով հանդես գան:
2. Ո՞վ հանդես կգա լսարանի առջև ելույթով:
   - Մենակ պետք է ներկայանաս զեկուցումով, թե՞ խմբի հետ:
   - Ինչպե՞ս պետք է կազմակերպվի խումբը:
3. Ո՞րն էր ելույթի նպատակը:
   - Ի՞նչ նոր բան կիմանա ներկայացված ելույթից ներկա հասարակությունը:
   - Ձեր ելույթը ենթադրում է ունկնդիրների կողմից հնչեցված հարցերի պատասխան կամ մեկնաբանություններ նրանց կողմից:
4. Որքա՞ն ժամանակ պետք է տրամադրվի ելույթին:
   - Պետք է ժամանակ նախատեսեք՝ լսարանի կողմից առաջադրված հարցերին պատասխանելու համար:
   - Պետք է ժամանակ նախատեսեք՝ լսարանի կողմից արված մեկնաբանությունները լսելու համար:
5. Ի՞նչ ռեսուրսներ են մատչելի:
   - Գրատախտակ
   - Պրոյեկտոր
   - Համակարգիչ և պրոյեկտոր PPT-ում պատրաստած շնորհանդեսի համար
   - Պաստառ (ֆլիպչարտ)
   - Ստերեոսարքավորում
6. Ինչպե՞ս պետք է կարողանաս գրավել լսարանի ուշադրությունը:
   - Լսարանին հարցեր տալու հնարավորություն տվեք:

# 13. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Ամփոփիչ թեստային առաջադրանքի նմուշ: Թեստի առավելագույն միավորն է 20-ը:

**Առաջադրանք I.** Պատասխանե՛ք տրված հարցերին: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է մեկ միավորով:

**1**. Ո՞ր բնակավայրը չի գտնվում Իմերեթիում:
**ա.** Ծղալտուբո **բ.** Ճիաթուրա **գ.** Ռուսթավի

**2**. Իմերեթին հնում անվանում էին.
**ա**. Թակվերի **բ.** Արգվեթի **գ.** Փխովի

**3.** Քութաիսին հին հունական առասպելում հիշատակվում է, որպես.
**ա.** Աիա **բ.** Փազիսի **գ.** Դիոսկուրիա

**4.** Իմերեթիի գետերին չի պատկանում.
**ա.**Ղվիրիալան **բ.** Ռիոնին **գ.** Արագվին

**Առաջադրանք II.** Ժամանակագրական կարգով հնագույնից դեպի նորագույնը դասավորե՛ք տաճարներն՝ ըստ նրանց կառուցման ժամանակի: Առաջադրանքը գնահատվում է մեկ միավորով:

1. Մոծամեթա
2. Գելաթի
3. Բագրատի տաճար

| | | |
|---|---|---|
| | | |

**Առաջադրանք III.** Գտե՛ք համապատասխանություն երկու սյունակներում առկա տեղեկությունների միջև: Առաջադրանքի առավելագույն միավորն է 3:

| | |
|---|---|
| 1. Օկացե | ա. գետ |
| 2. Ծղալծիթելա | բ. լիճ |
| 3. Նավենախևի | գ. կանիոն |
| | դ. քարանձավ |

**Պատասխաններ**

| | | |
|---|---|---|
| 1- | 2- | 3- |

**Առաջադրանք IV.** Տեղադրե՛ք բառերը բաց թողնված տեղերում: Առաջադրանքի առավելագույն միավորը՝ 3:

1.... դարի վերջին, Ճիաթուրայում կարևոր հանքաքար 2..... հայտնագործվեց և այնտեղ որոշվեց քաղաք կառուցել: Հանքաքարը հայտնագործելուց հետո մի քանի տարում այստեղ 3 .......անցկացրին:

**Ենթադրյալ պատասխաններ.**

| |
|---|
| XIX, քարածուխ, ավտոմոբիլային, մանգան, երկաթգիծ, XX: |

**Առաջադրանք V.** Գտնել սխալները: Տեքստի մեջ թույլ է տրված երեք սխալ: Գնահատվում է ինչպես սխալը գտնելը, այնպես էլ նրա ուղղված տարբերակը: Առաջադրանքի առավելագույն միավորը՝ 6:

Իմերեթիում բազմաթիվ հուշարձաններ կան: Մոծամեթա տաճարը Ղվիրիլա գետի կիրճում է: Երկիր ներխուժած թշնամին Արագվիի էրիսթավիներ Դավիթից և Կոնստանտինեից պահանջեց փոխել հավատը, իսկ մերժում ստանալուց հետո, նրանց մահապատժի ենթարկեց: Նրանց անունով կառուցվել է այս տաճարը: Իմերեթիում է գտնվում նաև Միավորված Վրաստանի առաջին թագավորի՝ Բագրատ IV-ի ժամանակ կառուցված տաճարը:

| Սխալ է | Պետք է լինի |
|---|---|
| | |
| | |
| | |

**Առաջադրանք VI.** Ուշադիր կարդացե՛ք տեքստը և պատասխանե՛ք տրված հարցերին:

Իմերեթցիները տնտեսության համար հարթավայրն են օգտագործում, իսկ տան ու տնամերձի համար բարձրադիր վայրերն են ընտրում՝ աղբյուրներին մոտ լինելու, տենդից պաշտպանվելու համար: Բացի այս, տներում օր ու գիշեր կրակը վառ է: Դա օդը մաքրելու լավագույն միջոցն է, որ նաև կլանում է խոնավությունը:

**Հարցեր.**

**1**. Ինչո՞ւ էին իմերեթցիները տները կառուցում բարձրադիր վայրերում: **(1 միավոր)**

**2**. Անվանե՛ք պատճառները՝ ինչի՞ համար էր կրակը միշտ վառվում տներում: **(2 միավոր)**

**Ճիշտ պատասխաններ**

| **Առաջադրանք** | **Ճիշտ պատասխան** |
|---|---|
| **1** | գ |
| **2** | բ |
| **3** | ա |
| **4** | գ |
| **5** | 132 |
| **6** | 1-գ, 2-ա, 3-դ |
| **7** | XIX, մանգան, երկաթգիծ |
| **8** | Ղվիրիլա-Ծղալծիթելա, Արագվիի-Արգվեթիի, Բագրատ IV – Բագրատ – III |
| **9** | 1.Տենդից պաշտպանվելու համար, 2. Օդն է մաքրում, կլանում է օդի խոնավությունը: |

**Ամփոփիչ թեստային առաջադրանք:** Առավելագույն միավորը՝ 20:

**Առաջադրանք I.** Պատասխանե՛ք տրված հարցերին: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է մեկ միավորով:

1. Ի՞նչ անվանումով են հիշատակում հույն հեղինակները Սամեգրելոն:
   **ա.** Լազիկա **բ.** Օդիշի **գ.** Էգրիսի
2. Ովքե՞ր էին արգոնավորդները:
   **ա.** Հույն վաճառականներ:
   **բ.** Հույն արշավորդներ:
   **գ.** Հույն ճանապարհորդներ:
3. Թվարկվածներից ո՞րը հույների կողմից հիմնադրված գաղութ չէր:
   **ա.** Պիտիունտը **բ.** Արքեոպոլիսը **գ.** Փազիսին
4. Ո՞ր տոհմի ներկայացուցիչներն էին կառավարում Սամեգրելոյում:
   **ա.**Դադեշքելիանի **բ.** Շերվաշիձե **գ.** Դադիանի
5. Ո՞ր զավթիչը Վրաստանը բաժանեց դումաների.
   **ա.** օսմանցիները **բ.** մոնղոլները **գ.** արաբները
6. Որտեղացի՞ ճանապարհորդ էր Արքանջելո Լամբերտին.
   **ա.** իտալացի **բ.** իսպանացի **գ.** ֆրանսիացի
7. Ո՞ր բնակավայրը Սամեգրելոյում չէ:
   **ա.** Մեստիա **բ.** Ծալենջիխա **գ.** Զուգդիդի

**Առաջադրանք II.** Ծանոթացե՛ք տեղեկությանը և պատասխանե՛ք հարցին: Առաջադրանքի առավելագույն միավորն է 2-ը:

Արքանջելո Լամբերտին գրում է. «Կոլխիդան հարուստ է գինով, սակայն աղքատ է հացով»:
Հարց. Տնտեսության ո՞ր բնագավառներին էին հետևում Սամեգրելոյում: (2 միավոր)

**Առաջադրանք III.** Ճի՞շտ է արդյոք տեսակետը (այո կամ ոչ).

1. Սամուրզաղանոն Սամեգրելոյի մաս է:
2. Հույների կողմից հիմնադրված բնակավայրերը կոչվեցին պոլիս:
3. Բոշխն օգտագործվում էր տան ծածկերի համար:
4. Կոլխեթիում հատված մետաղադրամը կոչվում էր «կոլխյան արծաթ»:
5. Կոլխեթիի թագավորությունը կառավարում էր Այետեսը:
6. Կոլխեթիի թագավորությունում ոսկի էին հայթայթում Սվանեթիի լեռներում:

**Առաջադրանք IV.** Ո՞րն է ավելորդ և ինչո՞ւ: Առաջադրանքի առավելագույն միավորը՝2:

1. Ջարգվալի
2. Նալիա (հատիկայիններ չորացնելու տարածք)
3. Հյուղակ

**Առաջադրանք V.** Գտե՛ք համապատասխանություն երկու սյունակների միջև առկա տեղեկությունների մեջ:

| | |
|---|---|
| 1. Ցոտնե Դադիանի | ա. զորահրամանատար |
| 2. Այետես | բ. կառավարիչ |
| 3. Լամբերտի | գ. թագավոր |
| | դ. ճանապարհորդ |

| Պատասխան | 1- | 2- | 3- |
|---|---|---|---|

**Ճիշտ պատասխաններ**

| Առաջադրանք | Ճիշտ պատասխան |
|---|---|
| 1 | ա |
| 2 | բ |
| 3 | բ |
| 4 | դ |
| 5 | բ |
| 6 | ա |
| 7 | ա |
| 8 | Խաղողագործություն, հողագործություն |
| 9 | ոչ |
| 10 | ոչ |
| 11 | այո |
| 12 | ոչ |
| 13 | այո |
| 14 | այո |
| 15 | Ավելորդ է նալիան, այն տնտեսական նշանակության կառույց է, մնացած երկուսը բնակելի տան տեսակներ են: |
| 16 | 1-բ, 2-գ, 3-դ |

**Ամփոփիչ թեստային առաջադրանք: Առավելագույն միավորը` 20:**

**Առաջադրանք I.** Պատասխանե՛ք տրված հարցերին: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է մեկ միավորով:

1. Ովքե՞ր են էկոմիգրանտները:
2. Ի՞նչն է հարկադրել սվաններին վերաբնակվել հարթավայրերում:
3. Ինչպե՞ս էր կոչվում որսի աստվածուհին:
4. Որտե՞ղ էր պահվում 897 թվականով թվագրված հնագույն Ավետարանը:
5. Սվաններն ինչո՞վ էին պատրաստում այծենակաճները և գլխարկները:
6. Ո՞ր տարերային երևույթն է սպառնում Սվանեթիին:
7. Սվաններն ինչպե՞ս էին անվանում բնակելի տունը:
8. Ո՞ր երկիրն է հյուսիսից սահմանակցում Սվանեթիին:
9. Ո՞ր հին թագավորության կազմի մեջ էր մտնում Սվանեթին:

**Առաջադրանք II.** Լրացրե՛ք բաց թողնված տեղերը և տեղադրե՛ք փոխադրամիջոցները, որ կիրառում են Սվանեթիում: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է մեկ միավորով:

| | | |
|---|---|---|
| Ձյունագնաց | | |

**Առաջադրանք III.** Ո՞րն է ավելորդ և ինչո՞ւ: Առաջադրանքի առավելագույն միավորն է` 2:

**1.** Էնգուրի
**2.** Ցխենիսծղալի
**3.** Ղվիրիլա

**Առաջադրանք IV.** Տեղադրե՛ք բառերը բաց թողնված տեղերում: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 3:

**1..............** հնուց Սվանեթիի կենտրոնն էր: Այստեղ մինչև օրս շատ աշտարակ կա կանգնած: Դրանք աչքի են ընկնում իրենց գեղեցկությամբ և կարևորությամբ: Այդ պատճառով 2 ............ Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկի մեջ է ընդգրկված: Սվանեթիում է գտնվում Եվրոպայի ամենաբարձր բնակավայրը 3 .........

Ենթադրյալ պատասխաններ

| Լենտեխի, ՅՈՒՆԻՍԵՖ, Մեստիա, Թեթնուլդի, ՅՈՒՆԵՍԿՕ, Ուշգուլի |
|---|

**Առաջադրանք V.** Տեքստի վերլուծություն: Ուշադիր կարդացե՛ք տեքստը և պատասխանե՛ք տրված հարցերին: Առաջադրանքի առավելագույն միավորը՝ 4:

1987 թվականին Սվանեթին վերջին տարիների ամենածանր ձմեռվա վկա դարձավ: Հունվարին մի քանի գյուղ 3-ից մինչև 5 մետր ձյան ծածկույթի տակ հայտնվեց: Հատկապես վնասվեցին Մեստիայի և Լենտեխիի շրջանները: Գյուղերի հետ կապն ընդհատվեց: Ռիսկի գոտուց տարհանվեց 16000 մարդ:

**Հարցեր.**
1. Ո՞ր դարում է տեղի ունեցել անվանված էկոլոգիական աղետը: (1 միավոր)
2. Ո՞ր տարերային աղետի մասին է խոսքը: (1 միավոր)
3. Ասե՛ք էկոլոգիական աղետի հետևանքները, որ հիշատակված են տեքստում: (2 միավոր)

**Ճիշտ պատասխաններ**

| Առաջադրանք | Ճիշտ պատասխան |
|---|---|
| 1 | Տարերային երևույթների հետևանքով վերաբնակեցվածներին |
| 2 | Տարերային երևույթները |
| 3 | Դալի |
| 4 | Ադիշի գյուղում |
| 5 | Ոչխարի բուրդ |
| 6 | Ձյունահոսք, սողանք |
| 7 | Շահեն |
| 8 | Ռուսաստան |
| 9 | Կոլխեթիի թագավորությունը |
| 10 | Սահնակ, սայլ |
| 11 | Ավելորդ է Ղվիրիլան, քանի որ չի հոսում Սվանեթիով: |
| 12 | Մեստիա, ՅՈՒՆԵՍԿՕ, Ուշգուլի |
| 13 | XX, ձյունահոսք, գյուղերի հետ կապն ընդհատվեց, 16000 մարդ տարհանվեց |

## 14. ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

### Թանգարաններ

**Թբիլիսի**

Վրաստանի ազգային թանգարան. Սիմոն Ջանաշիայի անվան Վրաստանի թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Շալվա Ամիրանաշվիլիի անվան արվեստի թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Իոսեբ Գրիշաշվիլիի անվան Թբիլիսիի պատմության թանգարան (Քարվանսարա)
Վրաստանի ազգային թանգարան. Գիորգի Չիտաիայի անվան ազգագրական թանգարան բաց երկնքի տակ
Վրաստանի ազգային թանգարան. Ազգային պատկերասրահ
Վրաստանի ազգային թանգարան. Թբիլիսիի հնագիտական պահոց
Վրաստանի ազգային թանգարան. Խորհրդային բռնազավթման թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Էլենե Ախվլեդիանիի տուն-թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Ուչա Ջափարիձեի տուն-թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Մոսե Թոիձեի տուն-թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Յակոբ Նիկոլաձեի տուն-թանգարան
Գիորգի Լեոնիձեի անվան վրաց գրականության պետական թանգարան
Վրաստանի թատրոնի, երաժշտության, կինոյի և պարարվեստի պետական թանգարան
Վրաստանի ժողովրդական և կիրառական արվեստի պետական թանգարան
Վրացական ժողովրդական երգի և նվագարանների պետական թանգարան
Մետաքսի պետական թանգարան
Ձեռագրերի Ազգային կենտրոն
Վրաստանի Ազգային բանկի դրամի թանգարան
Իլյա Ճավճավաձեի գրական հուշատուն թանգարան
Իլյա Ճավճավաձեի տուն-թանգարան
Շոթա Ռուսթավելու անվան ակադեմիական թատրոնի թանգարան
Կոտե Մարջանիշվիլիի անվան պետական դրամատիկական թատրոնի թանգարան
Ապոլոն Քութաթելաձեի անվան Թբիլիսիի պետական գեղարվեստի ակադեմիայի թանգարան
Ապոլոն Քութաթելաձեի անվան Թբիլիսիի պետական գեղարվեստի ակադեմիայի գոբելենի թանգարան
Վանո Սարաջիշվիլիի անվան Թբիլիսիի պետական կոնսերվատորիայի պատմության թանգարան
Զաքարիա Փալիաշվիլիի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի թանգարան
Միրզա-Ֆաթալի Ախունդովի անվան ադրբեջանական մշակույթի թանգարան
Էլենե Ախվլեդիանիի անվան մանկական նկարների պատկերասրահ
Թինաթին Թումանիշվիլիի անվան տիկնիկների թանգարան
Դենդրոլոգիական թանգարան (Բուսաբանական այգի)
Վրաստանի գիտությունների ակադեմիայի Երկրաֆիզիկական գիտությունների պատմության թանգարան
Թբիլիսիի I հանրային դպրոցի թանգարան
Գուրամ Ռչեուլիշվիլիի թանգարան (Թբիլիսիի 30-րդ հանրային դպրոց)
Իլյայի պետական համալսարանի հնագիտության թանգարան
Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի թանգարան
Նիկո Փիրոսմանաշվիլիի թանգարան
Զաքարիա Փալիաշվիլիի տուն-թանգարան
Վախթանգ Ճաբուկիանիի հուշատուն թանգարան
Գալակտիոն Տաբիձեի հուշատուն թանգարան

Տիցիան Տաբիձեի տուն-թանգարան
Նիկոլոզ Բարաթաշվիլիի տուն-թանգարան
Միխեիլ Ջավախիշվիլիի տուն-թանգարան
Ի.Գրիշաշվիլիի անվան գրադարան-թանգարան
Նոդար Դումբաձեի տուն-թանգարան
Մերաբ Կոստավայի տուն-թանգարան
Շիո Արագվիսպիրելիի (Դեդաբրիշվիլիի) տուն-թանգարան
Մասնավոր թանգարաններ Թբիլիսիում
Վրաստանի Միներալների թանգարան, Թբիլիսի, Լեսելիձեի փ. 27/1
Լուսանկարչության վրացական թանգարան - www.photomuseum.org.ge
Ուշանգի Չխեիձեի տուն-թանգարան, Թբիլիսի, Դիմիտրի Ուզնաձեի 12
Ակակի Վասաձեի տուն-թանգարան, Թբիլիսի, Դավիթ Աղմաշենեբելիի պողոտա 3
Նիկոլոզ (Կոկա) Իգնատովի տուն-թանգարան, Թբիլիսի, Միխեիլ Զանդուկելիի փ., 6 D
Սոսո Ծերեթելիի տուն-թանգարան, Թբիլիսի, Դիմիտրի Ուզնաձեի փ. 2
Անիմացիոն տիկնիկների թանգարան, Թբիլիսի, Ամաղլեբա փ. 29
Կինոյի պատմության թանգարան, Դավիթ Աղմաշենեբելիի պողոտա 40 (Մանկական կինոկենտրոն «Փիփքիա»)
Զուրաբ Լեժավայի ստեղծագործական ժառանգության թանգարան, Թբիլիսի, Բառնովի փ. 73
Մուխրան Մաճավարիանիի տուն-թանգարան, Թբիլիսի, Իր.Աբաշիձեի փ. 48
Նաթելա Իանքոշվիլիի բնակարան-թանգարան, Թբիլիսի, Շոթա Ռուսթավելիի պողոտա 26

**Աջարիա**
Բաթումիի հնագիտական թանգարան
Աջարիայի Խարիտոն Ախվլեդիանիի անվան թանգարան
Աջարիայի արվեստի պետական թանգարան
Իլյա Ճավճավաձեի թանգարան
Նոբել եղբայրների անվան Բաթումիի տեխնոլոգիական թանգարան
Իոսիֆ Ստալինի տուն-թանգարան
Պետրա-բերդի հնագիտական-ճարտարապետական թանգարան-արգելոց
Գոնիո-Ափսարոսի հնագիտական-ճարտարապետական թանգարան-արգելոց
Մաճախելայի պատմա-ազգագրական թանգարան
Ախալշենիի թանգարան
Մեջինասծղալիի գավառագիտական թանգարան
Շուախևիի ազգագրական թանգարան
Սելիմ Խիմշիաշվիլիի անվան բերդ-թանգարան
Կվիախիձեների պատմա-ազգագրական թանգարան
Խուլոյի գավառագիտական թանգարան
Թխիլվանիի ազգագրական թանգարան
Շերիֆ Խիմշիաշվիլիի տուն–թանգարան
Քեդայի պատմական թանգարան

**Գուրիա**
Օզուրգեթիի պատմական թանգարան
Օզուրգեթիի կերպարվեստի կենտրոն
Գուրիայի երկրամասի հնագիտական թանգարան-արգելոց
Նիկո Բերձենիշվիլիի անվան Չոխատաուրիի գավառագիտական թանգարան
Նոդար Դումբաձեի տուն-թանգարան
Նիկողայոս Մառի տուն-թանգարան

Մոսե Գոգիբերիձեի տուն-թանգարան
Լանչխութիի գավառագիտական թանգարան
Էգնատե Նինոշվիլիի տուն-թանգարան

**Իմերեթի**
Նիկո Բերձենիշվիլիի անվան Քութաիսիի պետական պատմական թանգարան
Դավիթ Կապանաձեի անվան Քութաիսիի կերպարվեստի պատկերասրահ
Քութաիսիի պատմական-ճարտարապետական թանգարան-արգելոց
Քութաիսիի սպորտի թանգարան
Քութաիսիի Դավիթ Մխեիձեի անվան լուսանկարչական-կինոժամանակագրության թանգարան
Քութաիսիի մարտական փառքի Ազգային թանգարան
Վլադիմիր Մայակովսկու տուն-թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Օթար Լորթքիփանիձեի անվան Վանիի հնագիտական թանգարան-արգելոց
Գալակտիոն և Տիցիան Տաբիձեների տուն-թանգարան
Կոռնելի Կեկելիձեի հուշատուն թանգարան
Նիկո Նիկոլաձեի տուն-թանգարան
Գիորգի Ախվլեդիանիի անվան Ծղալտուբոյի գավառագիտական թանգարան
Գիորգի Ախվլեդիանիի տուն-թանգարան
Նիկո Լորթքիփանիձեի տուն-թանգարան
Շալվա և Պետրե Ամիրանաշվիլիների տուն-թանգարան
Դավիթ և Սերգո Կլդիաշվիլիների տուն-թանգարան
Ճիաթուրայի գավառագիտական թանգարան
Գիորգի Ծերեթելիի տուն-թանգարան
Լեռնագնաց քույր և եղբայր Ջափարիձեների տուն-թանգարան
Սաչխերեի գավառագիտական թանգարան
Ակակի Ծերեթելիի պետական թանգարան
Խոնիի պատմական թանգարան
Պոլիկարպե Կակաբաձեի տուն-թանգարան
Իրակլի Աբաշիձեի տուն-թանգարան
Զեստափոնիի գավառագիտական թանգարան
Ուշանգի Չխեիձեի տուն-թանգարան
Խարագաուլիի պատմական թանգարան
Գյուղի պատմության թանգարան

**Կախեթի**
Թելավիի պատմական թանգարան
Ծինանդալիի Ալեքսանդրե Ճավճավաձեի տուն-թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Սիղնաղիի պատմա-ազգագրական թանգարան
Դավիթ-Գարեջիի թանգարան-արգելոց
Գրեմ-Նեկրեսիի թանգարան-արգելոց
Ղվարելիի Իլյա Ճավճավաձեի պետական թանգարան
Նիկո Փիրոսմանաշվիլիի պետական թանգարան
Ղվարելիի Մարջանիշվիլիների տուն-թանգարան
Ախմետայի գավառագիտական թանգարան
Դեդոփլիսծղարոյի գավառագիտական թանգարան
Լագոդեխիի գավառագիտական թանգարան
Սագարեջոյի գավառագիտական թանգարան

Նատո Վաչնաձեի տուն-թանգարան
Գիորգի Լեոնիձեի տուն-թանգարան
Վասո Գոձիաշվիլիի հուշատուն թանգարան
Սանդրո Ախմետելիի տուն-թանգարան
Վանո Սարաջիշվիլիի թանգարան
Սանդրո Շանշիաշվիլիի տուն-թանգարան
Սանդրո Միրիանաշվիլիի հուշատուն թանգարան
Իրոդիոն Էվդոշվիլիի տուն-թանգարան
Ալեքսանդրե Գզիրիշվիլիի տուն-թանգարան
Իլո Մոսաշվիլիի տուն-թանգարան
Ռաֆիել Էրիսթավիի տուն-թանգարան
Իվանե Բերիտաշվիլիի թանգարան
Իոսեբ Նոնեշվիլիի թանգարան
Գիորգի Մախսուրաձեի անվան գյուղի պատմության թանգարան
Ջոն Մալխազ Շալիկաշվիլիի անվան մարտական պատմության թանգարան
Փառքի հուշատուն թանգարան
Ժողովուրդների բարեկամության թանգարան

**Մցխեթա-Մթիանեթի**
Մեծ Մցխեթայի հնագիտական թանգարան-արգելոց
Ստեփանծմինդայի պատմական թանգարան
Դավիթ և Գիորգի Էրիսթավիների տուն-թանգարան
Իլյա Ճավճավաձեի Սագուրամոյի պետական թանգարան
Վաժա-Փշավելայի տուն-թանգարան
Դուշեթիի գավառագիտական թանգարան
Թիանեթիի գավառագիտական թանգարան
Կորշայի ազգագրական թանգարան
Միրզա Գելովանիի տուն-թանգարան

**Ռաճա-Լեչխումի և Քվեմո Սվանեթի**
Ամբրոլաուրիի կերպարվեստի թանգարան
Օնիի գավառագիտական թանգարան
Լադո Մուսելիանիի անվան Լենտեխիի գավառագիտական թանգարան
Վառլամ Մախարոբլիձեի անվան Ցագերիի պատմական թանգարան
Փուստելների դպրոց-թանգարան

**Սամեգրելո և Զեմո Սվանեթի**
Դադիանիների պալատների պատմաճարտարապետական թանգարան
Պարմեն Զաքարաիայի անվան Նոքալաքևիի ճարտարապետական-հնագիտական թանգարան-արգելոց
Վրաստանի ազգային թանգարան. Սվանեթիի պատմա-ազգագրական թանգարան
Փոթիի կոլխյան մշակույթի թանգարան
Գիվի Էլիավայի անվան Մարտվիլիի գավառագիտական թանգարան
Ժիուլի Շարտավայի անվան Սենակիի գավառագիտական թանգարան
Կոնստանտինե Գամսախուրդիայի տուն-թանգարան
Խոբիի գավառագիտական թանգարան
Չխորոծղուի գավառագիտական թանգարան
Ծալենջիխայի ազգագրական թանգարան

Տերենտի Գրանելիի տուն-թանգարան
Լեո Քիաչելիի տուն-թանգարան
Միխեիլ Խերգիանիի տուն-թանգարան
Առնոլդ Չիքոբավայի տուն-թանգարան
Թեոփանե Դավիթաիայի տուն-թանգարան
Ժիուլի Շարտավայի թանգարան
Ձուկու Լոլուայի անվան վրացական ժողովրդական երգի թանգարան
Ակադեմիկոս Տարասի Կվարացխելիի տուն-թանգարան

**Սամցխե-Ջավախեթի**
Վրաստանի ազգային թանգարան. Իվանե Ջավախիշվիլիի անվան Սամցխե-Ջավախեթիի պատմական թանգարան
Վարձիայի պատմա-ճարտարապետական թանգարան-արգելոց
Բորժոմիի գավառագիտական թանգարան
Ախալքալաքի գավառագիտական թանգարան
Նինոծմինդայի մարտական փառքի թանգարան
Վահան Տերյանի տուն-թանգարան
Վիկտոր Հովսեփյանի տուն-թանգարան

**Քվեմո Քարթլի**
Կլդեկարիի պատմության, հնագիտության և ճարտարապետության թանգարան-արգելոց
Վրաստանի ազգային թանգարան. Դմանիսիի պատմաճարտարապետական թանգարան-արգելոց
Բոլնիսիի գավառագիտական թանգարան
Սուլխան-Սաբա Օրբելիանիի գրականության թանգարան
Գարդաբանիի գավառագիտական թանգարան
Թեթրիծղարոյի գավառագիտական թանգարան
Միխեիլ Ջավախիշվիլիի թանգարան
Ալեքսանդր Մելիք-Փաշաևի տուն-թանգարան
Ռուսթավիի պատմական թանգարան

**Շիդա Քարթլի**
Սերգի Մակալաթիայի անվան Գորիի պատմա-ազգագրական թանգարան
Ուփլիսցիխեի պատմաճարտարապետական թանգարան-արգելոց
Կասպիի գավառագիտական թանգարան
Խաշուրիի գավառագիտական թանգարան
Ի.Բ.Ստալինի պետական թանգարան
Քսանիի կիրճի պատմաճարտարապետական թանգարան-արգելոց
Յակոբ Գոգեբաշվիլիի տուն-թանգարան
Ջամբակուր-Օրբելիանիների պալատ-թանգարան
Քարելիի գավառագիտական թանգարան
Դիմիտրի Ղիփիանիի տուն-թանգարան
Իվանե Ջավախիշվիլիի տուն-թանգարան
Դիդի Լիախվիի կիրճի թանգարան-արգելոց
Լեսյա Ուկրաինկայի տուն-թանգարան
Գիորգի Մազնիաշվիլիի թանգարան
Օմար Կելապտրիշվիլիի տուն-թանգարան

**Էլեկտրոնային ռեսուրսներ**

www.mes.gov.ge (Վրաստանի կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն)
www.tpdc.ge (Ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն)
www.naec.ge (Քննությունների ազգային կենտրոն)
www.meca.ge (Աբխազիայի Ինքնավար Հանրապետության կրթության և գիտության նախարարություն)
www.moecs.gov.ge (Աջարիայի Ինքնավար Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն)
www.moe.gov.ge (Վրաստանի բնապահպանության նախարարություն)
www.heritagesites.ge (Վրաստանի մշակութային ժառանգության պահպանության ազգային գործակալություն)
www.nplg.gov.ge (Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարան՝ «Հանրային»)
www.folk.ge (Վրաստանի բանահյուսության պետական կենտրոն)
www.imsa.ge (Պատմության ուսուցիչների Վրաստանի ընկերակցություն)
www.mastsavlebeli.ge (Ուսուցիչ, համացանցային թերթ)
www.manuscript.ge (Ձեռագրերի ազգային կենտրոն)
www.qim.ge (Վրաց պատմական գործիչներ)
www.istoria.ge
www.mtavari.ge (Վրացական մարտական արվեստը)
www.saunje.ge
www.orthodoxy.ge
www.alazani.ge
www.kvirike.ge
www.children.dsl.ge
www.georgianmuzeums.ge
www. sanostudio.ge
www.lib.ge
www.amsi.ge
www.davidrumsey.com (Աշխարհի պատմության քարտեզներ)
www.codna.ge
www.icode.ge
www.buki.ge
www.school.ge
www.el.ge
http://www.diaspora.gov.ge/
http://www.church.ge/
http://www.geohistoryclub.blogspot.com/ (Պատմաբանների ակումբ)

# Վրաստանի պատմա-ազգագրական երկրամասեր



# ԲԱԺԻՆ 1. ՔԱՐԹԼԻ



# ԲԱԺԻՆ 2. ԻՄԵՐԵԹԻ



# ԲԱԺԻՆ 3. ՍԱՄԵԳՐԵԼՈ



# ԲԱԺԻՆ 4. ՍՎԱՆԵԹԻ



# ԲԱԺԻՆ 5. ԱՋԱՐԻԱ

